Azg Ազգ

10 ՆՈՅԵՄԲԵՐ 2007 ՇԱԲԱԹ 207 (3859)

Հայաստանի Ազգային գրադարան

«Հարավային Կովկասում սուրը միշտ պայթանում էր, պայթանում էլ պետք է մնա»

Ասել է Աբդուլլահ Գյուլը թուրք եւ ադրբեջանցի լրագրողներին

Նոյեմբերի 8-ի համարում «**Ազգը**», անդրադառնալով Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի Ադրբեջան կատարած այցին, նշել էր, որ թուրքական կենտրոնական թերթերը տեսադաշտից դուրս են թողել դա, իսկ մյուս լրատվամիջոցները լուսաբանել են հայ-թուրքական հարաբերությունների ենթատեքստում միայն: Խոսքը տվյալ դեպքում հեռատեսությունների մասին էր, որոնք մասնակի ներկայացրել էին նախագահ Գյուլի նոյեմբերի 7-ի ելույթը Միլի մեջլիսում: Նա ասել էր. «Քանի դեռ Հայաստանը հետամուտ է 1915-ի ճանաչմանը, չկետք է առաջընթաց ակնկալվի հայ-թուրքական հարաբերություններում»:

Տես էջ 8

Նախագահական ընտրությունները փետրվարի 19-ին

Թեկնածուները կսկսեն առաջադրվել նոյեմբերի 21-ից

Հայաստանի նախագահի ընտրությունները տեղի կունենան 2008-ի փետրվարի 19-ին: Այս մասին լրագրողներին հայտնել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Գարեգին Ազարյանը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը հայտնել է նաեւ, որ «Ընտրական օրենսգրքի 88-րդ հոդվածի երրորդ մասի համաձայն, հանրապետության նախագահի ընտրությունների օրը հայտարարվում է ոչ աշխատանքային օր»: Նշվում է, որ ընտրված նախագահը իր պաշտոնը կստանձնի ապրիլի 9-ին:

ԿԸՀ նիստում հաստատվել է նախագահի 2008-ի փետրվարի 19-ի ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը: Նոյեմբերի 21-ից մինչեւ դեկտեմբերի 6-ի ժամը 18-ը Հայաստանի նախագահի թեկնածուները պետք է առաջադրման փաստաթղթերը ներկայացնեն ԿԸՀ: Գրանցումը նախատեսված է դեկտեմբերի 31-ից մինչեւ 2008-ի հունվարի 20-ը: Նախընտրական քարոզչությունը իրականացվելու է հունվարի 21-ից մինչեւ փետրվարի 17-ի ժամը 24:00: Ըստ ժամանակացույցի, դիտորդների հավատարմագրումը իրականացվելու է նոյեմբերի 9-ից



մինչեւ 2008-ի փետրվարի 9: Մինչեւ նոյեմբերի 19 լրատվամիջոցները պետք է հրապարակեն թեկնածուներին տրամադրվող եթերաժամի յուրաքանչյուր րոպեի գինը: Նախագահի թեկնածու կարող է առաջադրվել 35 տարին լրացած, վերջին 10 տարում Հայաստանի քաղաքացի հանդիսացող եւ վերջին 10 տարում հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր անձ: Համաձայն գործող օրենսգրքի, ՀՀ նախագահի թեկնածուն կարող է առաջադրվել կուսակցության կամ քաղաքացիների նախաձեռնող խմբի կողմից:

ԴԱՏԱԽԱՅ

«Ղարաբաղ» կոմիտեի գործը Լեւոն Տեր-Պետրոսյանի մոտ է»

«Ղարաբաղ» կոմիտեի նկատմամբ 1998-ին հարուցված քրեական գործը գտնվում է Լեւոն Տեր-Պետրոսյանի մոտ», երեկ Մալաթիա-Սեբաստիա համայնքի դատախազության վարչական շենքի բացման ժամանակ հայտարարել է Հայաստանի գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը: Նա հավելել է, որ «Ղարաբաղ» կոմիտեի գործը դատախազության արխիվից անհետացել է դեռեւս 1996-ին. «Դատախազության այն ժամանակվա ղեկչական բաժնի պետն անձամբ է գործն արխիվից հանել եւ հանձնել Լեւոն Տեր-Պետրոսյանին»:

Հիշեցնենք, որ նախօրեին «**Ազգը**» գրել էր, որ կարծիք է շրջանառվում, թե հիշյալ գործն անհետացել է դեռեւս Լեւոն Տեր-Պետրոսյանի իշխանության տարիներին:

Գլխավոր դատախազն ասել է, որ «Ղարաբաղ» կոմիտեի գործի անհետացման մասին միայն վերջերս են իմացել, քանի որ որոշ տեղեկություններ իմանալու համար դատախազը դիմել է արխիվին՝ գործն իրեն հանձնելու հանձնարարությամբ. «Ես հանձնարարեցի, որպեսզի գործն արխիվից ինձ ներկայացնեն: Պարզվեց, որ գործն արխիվից բացակայում է: Բնականաբար, ես նշանակեցի ծառայողական քննություն եւ պարզվեց, որ գործը դեռեւս 1996-ի նոյեմբերի 6-ին դատախազության այն ժամանակվա քննչական մասի պետը գլխավոր դատախազի հանձնարարությամբ արխիվից հանել եւ հանձնել է առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին», Հանրային ռադիոյի փոխանցմամբ ներկայացրել է Աղվան Հովսեփյանը:

Աղվան Հովսեփյանը տեղեկացրել է, որ դատախազության աշխատակազմի ղեկավարը, որի ծառայակազմում է արխիվը, այսօր գրություն է ստորագրել՝ առաջին նախագահին խնդրելով գործը վերադարձնել դատախազություն: Գլխավոր դատախազն ակնկալություն է հայտնել, թե առաջին նախագահը «այնքան խոհեմ կլինի, որ գործը կվերադարձնի դատախազություն»:

Աղվան Հովսեփյանն ընդգծել է, որ օրենքով արգելված է քրեական գործերը քննող մարմնից մեկ այլ մարմնի հանձնելը. «Նույնիսկ հանրապետության նախագահն օրենքով իրավունք չունի քրեական գործերը պահանջել եւ պահել իր մոտ. 1996-ին տեղի է ունեցել օրենքի կոպիտ խախտում, քանզի քրեական գործերը չեն կարող պահվել մեկ այլ մարմնի արխիվներում, առավել եւս՝ մասնավոր արխիվներում»:

Նախօրեին տպանված Որսորդների միության նախագահ Սայաթ Դավթյանի տպանությանն անդրադառնալով՝ դատախազը նշել է, որ բոլոր հիմքերը կան տպանությունը բացահայտելու համար:

Գ. Գ.

Լեւոն Տեր-Պետրոսյանի պաշտոնական պատասխանը

Հայաստանի առաջին նախագահը հայտարարություն է տարածել «Ղարաբաղ» կոմիտեի քրեական գործի նյութերի մասին, որտեղ մասնավորապես ասվում է.

«1995 կամ 1996 թվականին իմ խնդրանքով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Արտավազդ Գետրգյանը «Ղարաբաղ» կոմիտեի գործի հատորները ուղարկել է նախագահի նստավայր եւ համապատասխան ձեւակերպմամբ հանձնել նրա աշխատակազմին: Դա արվել է՝ 1998 թվականին Ղարաբաղյան շարժման տասնամյա տարեդարձի առթիվ բացվելիք թանգարանում ի պահ դրվելու նպատակով: Իշխանափոխությունից հետո «Ղարաբաղ» կոմիտեի գործի նյութերը տեղափոխվել են իմ անձնական արխիվ եւ մինչ այժմ պահվել ամբողջական վիճակում: Արտավազդ Գետրգյանին հաջորդած գլխավոր դատախազներից ոչ մեկը «Ղարաբաղ» կոմիտեի գործի նյութերը վերադարձնելու խնդրանքով կամ պահանջով ինձ չի դիմել: Այսօր էլ գտնում եմ, որ այդ նյութերը պահելու ամենահարմար տեղը Ղարաբաղյան շարժման թանգարանն է, որը վաղ թե ուշ պետք է բացվի: Սակայն եթե կա որեւէ անհրաժեշտություն, ես պատրաստ եմ դրանք անմիջապես վերադարձնել դատախազության արխիվ»:

Հրանտ Դինքի սպանության գործով նոր մեղադրանք

«Ակօս» շաբաթաթերթի խմբագիր Հրանտ Դինքի սպանության կապակցությամբ դատական գործ է հարուցվել Տրապիզոնի ժանդարմերիայի 2 աշխատակիցների դեմ: Դինքի սպանության գործի առնչությամբ նահանգում հետաքննություն իրականացնող վարչական տեսուչները պահանջել էին հետաքննություն սկսել ոստիկանության 8 աշխատակիցների դեմ: Գործ է հարուցվել սակայն 2-ի դեմ, որոնք մեղավոր են ճանաչվել, չնայած նախապես իրազեկ են եղել Հրանտ Դինքի դեմ նախապատրաստվող մահափորձի մասին, ցուցաբերել են անփութություն եւ չեն կատարել իրենց պարտականությունները:

Նախիջեւան-Բաքու ավտոբուսային հաղորդակցություն Իրանով

Նոյեմբերի 8-ին առաջին ավտոբուսային ուղերթն է իրականացվել Իրանի տարածքով Նախիջեւանից Բաքու եւ հակառակ ուղղությամբ: Ռեգնում գործակալությունը հաղորդում է, որ Նախիջեւանից մեկնողները պետք է այցագիր ստանան տեղի իրանական հյուպատոսարանում: Սկզբնական շրջանում օրական կիրականացվի մեկ ուղերթ, բայց հետագայում ուղերթների թիվը կարող է ավելանալ: Մեկ ուղղությամբ տոմսի գինը մոտ 16,5 դոլար է: Նախիջեւան-Բաքու-Նախիջեւան ուղերթը բացված է 2007-ի օգոստոսին ստորագրված Ադրբեջան-Իրան հուշագրի հիման վրա: Երթուղու պաշտոնական բացումը տեղի կունենա մոտ օրերս:

Ավիավթար Թուրքիայում

Թուրքիայի Իզմիրի Չիղլի շրջանում վթարի է ենթարկվել այդ երկրի ռազմաօդային ուժերի T-38 ուսումնական ինքնաթիռը, որի երկու օդաչուները զոհվել են: Ինչպես հաղորդում են տեղական լրատվամիջոցները, ինքնաթիռը վայրէջք կատարելու պահին պայթել է օդում: Պատահարի մասին այլ մանրամասներ առայժմ չեն հաղորդվում:

Պակիստանի ընդդիմության առաջնորդը տնային կալանքում

Վերջերս Պակիստան վերադարձած Բենազիր Բհուտոն հայտնվել է տնային կալանքում: Նրա տունը շրջապատել են անվտանգության ուժերը, Բհուտոյին արգելվել է լքել տան տարածքը: Վերջինս պատրաստվում էր մասնակցել Ռեւալփայդ քաղաքում իր կողմնակիցների կազմակերպած հանրահավաքին: Հիշեցնենք, որ Պակիստանում նախագահ Փերվեզ Մուշարաֆի հրամանով արտակարգ դրություն է հայտարարված, արգելվել են ցույցերն ու հանրահավաքները:

ՀՀ քաղաքացիների կարծիքով Սերժ Սարգսյանը կընտրվի նախագահ

Ներկայացնում ենք բրիտանական հեղինակավոր ComRex ընկերության իրականացրած սոցհարցումների արդյունքները

ՈՒՄ ՕԳՏԻՆ ԿՔՎԵԱՐԿԵՒՔ, ԵԹԵ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱՅԻՆ ԱՅՍ ԿԻՐԱԿԻ



ԱԿՆԿԱԼՎՈՂ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

Ով կհաղթի ընտրություններում



Գ

Շինարարական աղետ

Քաղաքային երթևեկություն

Այսօր բնակչության ամենազգայուն, գրգռված վիճակում է վարորդների խավը: Նրանց իրոք բժշկական լուրջ օգնություն է հարկավոր, նյարդերը «անջատելու» միջոց: «Ամեն վայրկյան մեքենադ խփելու վտանգի տակ ես». յուրաքանչյուր վարորդ այսօր նման մտահոգություն ունի: Երևանում առնվազն մի 10-20 փողոց ու խաչմերուկ այսօր վարորդների համար դժոխքի են վերածված, իրենք էլ դարձել են քաղաքի շինարարության յուրահատուկ զոհերը. մենք էլ՝ հետները: Բարեկամության փողոցը երեկվանից ամբողջովին փակ է: Երբ Հակոբյան, Քոչար, Կիևյան փողոցներից մեքենաների անկանոն հոսքը լցվում է «Բարեկամություն» հրաշարակ, կատաղալ քաոս է առաջանում: Մեքենաներն իրար գլխի են ելնում. վարորդներն առաջ եթե հայհոյում անցնում էին, հիմա դուրս են գալիս, ու սկսվում է քաշքռուկ. ոստիկանը քաղաքի երթևեկության այսօրվա ամենավտանգավոր ու բանուկ հատվածում բացակայում է:

Երկու օր առաջ երթուղային թիվ 2 տաքսու երիտասարդ բարեկիրթ վարորդը (հազվադեպ բան) կորցրեց կողմնորոշումը, չգիտեր ուր գնա, ղեկը որ ուղղությամբ ոստի: Մերգելյան ինստիտուտից Բաղրամյան փողոց մտնելու համար մի քանի ոտույտ արեց զանազան շենքերի անելի բակերի միջով, հետ ու առաջ դարձավ, հետո Օրբելու փողոցի դիմացից եկող մեքենաների «տրամաբանությամբ» մտավ այս փողոց, սակայն եզրամասին շինարարական արգելափակոցներն էին: Երթուղայինի դիմացի «Նիվայի» վարորդը հանգիստ մի կողմ քաշեց դրանք, դուրս եկավ Բաղրամյան ու երբ նույնը փորձեց անել երթուղային տաքսին, շինարարները վրա տվին վարորդին: Մեքենան հետ դարձավ նորից, ուղևորների մի մասը ոտքով շարունակեց ճանապարհը, որտեղ թե՛ զայրույթ կար, թե՛ անեծք, թե՛ նախատինք, թե՛ անզորություն: Ամենաստրացնողը, սակայն, այդ շինարարների, հավանորեն ղեկավարի ասածն էր՝ բուք անտարբերությամբ. «Դեռ երկար այսպես է լինելու: Ոչինչ՝ կսովորեք»: Այս «կսովորեքը» սպանիչ էր, տարողունակ, վիրավորական մեր նկատմամբ սեփական իշխանավորների հոգեբանական ու սոցիալական կեղեքման ամենահուսալի մեթոդը, կարծում եմ: (Հավանորեն, հաշվի է առնված մեր ժողովրդի հատուկ համբերության սինդրոմը): Ոնց որ համակենտրոնացման ճամբարում կամ սովետի ֆեզեռում (ռասմնարան) լինեի, ուր հոտային մտածողության խառնամբոխին սովորեցնում էին՝ ինչ իրենք էին ուզում, եւ սովորեցնում՝ ամեն ինչի (ինքներդ գիտեք):

Զարմանալի է, որ նման մեծամասշտաբ շինարարության պատասխանատու կազմակերպությունները, Երեւանի քաղաքապետարանի իրավասու անձինք չեն պատկերացրել սպասվելիք կացությունը, տրանսպորտային երթեւեկի քաոսային այս վիճակը, որ բնակչությանը վտանգում է ինչպես հոգեբանորեն, այնպես էլ ֆիզիկապես: Մարդկանց՝ առանց այդ էլ գերգրգռված վիճակն ավելի է սրվում, ատելությունը՝ մեծանում: Վերջապես քաղաքը չի կարելի անընդհատ շինարարական տենդի մեջ պահել (ոնց որ տունդ տարին 12 ամիս վերանորոգես): Վերոհիշյալ պատասխանատուներն պարզապես թքած ունեն մեզ վրա էլ, մեր նյարդերի վրա էլ: Նրանք ոտիճ մտահոգություն ունեն: Այլապես երեւի խելքը գլխին մարդիկ կգտնվեին, որոնք հաշվի կառնեին, որ այս քաղաքում իրենց պես մարդիկ են ապրում, ու նրանք էլ տեղից տեղ պիտի շարժվեն ու գոնե տրանսպորտի պատճառով չեն ուզում օրերը թունավորել, նյարդերը քայքայել: Նման պայմաններում երթեւեկության համար այլընտրանքային փողոցների հստակ ցուցակ պիտի կազմվեր (օրինակ, Կոմիտասից Խաչատրյան, Հակոբյանով, Քեռու փողոցով դեպի Օրբելի, եւ այս պայմաններում Օրբելին չպետք է փակվեր): Նման փողոցներում մեքենաների կայանում չպիտի թույլատրվեր (մինչդեռ դրանք ոչ միայն փողոցում են, այլեւ մայթերին): Քաղաքի մնացած փողոցներում այլ շինարարությունը (այս ծրագրից դուրս) ժամանակավորապես պետք է դադարեցվեր (օրինակ՝ Հանրապետության փողոցում), որպեսզի առանց այդ էլ շինարարական գեղարվեստությունից քաղաքային կյանքը չկաթվածահարվեր: Համապատասխան վայրերում պարտադիր պետք է լինեն զգուշացնող, ուղղորդիչ ցուցանակներ, նշաններ. դրանք շատ հաճախ բացակայում են: Ավելորդ է ասել, թե որքան ակտիվ դեր պետք է ունենա ոստիկանական համապատասխան ծառայությունը: Մինչդեռ ճիշտ հակառակը, ոստիկաններն օգտվելով խառնակ դրությունից, մեջտեղից անհետացել են: Մնացել ենք մենք ու մեքենաները, քարն ու շինարարները:

Իսկ առջեւում ձյուն-ձմեռ է...

Մ. Ռ.

Երթուղային տաքսիները դարձել են պատուհաս մեր գլխին

Թե ինչպիսի անհարմարությունների, ավելին՝ տանջանքների են ենթարկվում մարդիկ երթուղային տաքսիներով երթեւեկելու ժամանակ, ծանոթ են շատերին: Այնուամենայնիվ, անդադարաոնալն ավելորդ չենք համարում, մանավանդ որ խնդիրն այդպես էլ չի լուծվում: Երթուղային տաքսիում միմյանց գիրկ նստելուց, սրա, նրա գլխին կամ ուսին հենվելուց զատ ստիպված ենք դիմանալ նաեւ անտակտ վարորդների գռեհիկ խոսքերին ու պահվածքին:

Ավանի 81 համարի երթուղային տաքսու երիտասարդ վարորդը միգուցե տեղյակ չէ, որ մեքենայի մեջ արգելվում է ծխել՝ հատկապես, երբ ուղեւորների մեջ կան հղի կին ու փոքրիկ երեխաներ: Ու երբ հարգալից տոնով խնդրում ես վարորդին, որպեսզի հանգցնի ծխախոտը, լսում ես հեռեւյալ բարբաջանքը. «Քուրիկ ջան, կարողա՞ գլխիս կանտրոլ ես կայնել: Ընենց չանես, ըստե կայնեմ ու սաղիդ իջեցնեմ: Տենամ էդ ժամանակ ինչ ես անելու»:

Մեկ այլ օրինակ: 100 համարի երթուղային տաքսու վարորդին զգուշացնում են, որ, ըստ օրենքի, արգելվում է տաքսիների մեջ ծխելը: Իսկ վարորդն առանց շրջվելու, գլանակն էլ բերանում պատասխանում է. «Ռէվ ա ասել, ըսենց օրենք չկա: Ուդե ուզեմ ու ինչքան ուզեմ կծխեմ»:

Սրանք մեր առօրյայի մի մասն են: Շատերը համակերպվում են, համբերությամբ լսում վարորդի փողոցային արտահայտություններն ու ծաղրը:

Երեւանում գործում են բազմաթիվ թեժ գծեր, որտեղ զանգահարելով կարելի է տեղեկացնել այսօրինակ վարորդների վարքագծի մասին:

«Ազգի» հարցին, թե «սանո՞ւմ եք արդյոք բողոքներ՝ կապված երթուղային տաքսու վարորդների ու մեքենայի մեջ ծխելու վերաբերյալ», աշխատակցուհին պատասխանեց, որ նման բնույթի զանգեր, բողոքներ չեն սանում: Մեր համաքաղաքացիները հեռախոս չունե՞ն, թե՞ թմրել են, կարծում եմ, սա համատարած ապաթիայի դրսեւորում է:

ՀԱՄՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ԵՐԲԱՊԱԶԱԿԱՆ

Ստեփան Դեմիրճյանը չի առաջադրվելու, այլ պատշտպանելու է Տեր-Պետրոսյանին

Բայց դա հայտնի էր արդեն հոկտեմբերի 26-ին

Երեկ «Հայելի» ակումբում լրագրողներին հանդիպած ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճյանը մի քանի կանխատեսելի խոստովանություն արեց. նախ՝ նա չի առաջադրվելու որպես նախագահի թեկնածու, ինչը լիովին սպասելի էր հոկտեմբերի 26-ի հանրահավաքում նրա՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմին կանգնելու պահից: Իսկ բացատրությունն այսպիսին էր, թե որեւէ թեկնածու միայնակ հնարավորություն չունի նախագահական ընտրություններում հաղթելու, այդ պատճառով էլ ՀԺԿ-ն իր ուժերը կենտրոնացնելու է ընդդիմադիր ուժեղ բեւեռ ձեւավորելու վրա: Եվ ըստ Դեմիրճյանի՝ միասնական բեւեռի թեկնածու լինելու հնարավորությունն ամենից շատ ունի Լ. Տեր-Պետրոսյանը՝ համախմբման պոտենցիալ ունի, վերաիմաստավորել է իր անցած ուղին. «Ըստ իս՝ հիմնական պայքարը գնալու է իշխանական թեկնածուի եւ Լ. Տեր-Պետրոսյանի միջեւ... Այսօր հասարակությունը պահանջում է համախմբում եւ համախմբելու ամենամեծ հնարավորությունն ունի Լ. Տեր-Պետրոսյանը»: Չնայած ՀԺԿ կուսակցությունը դեռ Տեր-Պետրոսյանին պատշտպանող որոշում չի կայացրել, Դեմիրճյանը կարծում է, որ մոտ ապագայում նոր ուժեր կմիանան իրենց առանցքին: Որեւէ լուրջ թեկնածու, որ այսօր խոսում է իր առաջադրման մասին, պետք է գիտակցի, որ համախմբումն այսօր հասարակական պահանջ է: Ս. Դեմիրճյանը վստահ էր, որ իր կուսակցությունը ըմբռնումով կմոտենա ինչպես իր չառաջադրվելուն, այնպես էլ Տեր-Պետրոսյանին սատարելու քայլին:

Լրագրողների դդմանը՝ գնահատելու Տեր-Պետրոսյանի կառավարման տարիները, Դեմիրճյանը պատերազմի, երկրաշարժի, անցումային շրջանի գործոնները շեշտելով՝ նկատել է, թե ի վերջո նրա նախագահության օրոք հաղթել ենք պատերազմում: «Չի կարելի եղած բացասականը բարդել մի մարդու վրա, իսկ դրականը վերագրել ում ասես, բայց ոչ իրեն», ասաց: Բայց սխալների մասին եւս չխուսափեց խոսել՝ կամայականություններ, սխալ կադրային քաղաքականություն, գործը ձախողած մարդիկ: «Մենք միշտ ասել ենք. եղել են սխալներ կադրային քաղաքականության մեջ, կամայականություններ դրսեւորումներ, որոշ մարդիկ ձախողել են իրենց սանձնված գործը, բայց պատասխանատվության չեն ենթարկվել: Բայց օբյեկտիվ լինելով պետք է ասեմ, որ երբ հանրագումարի ենք բերում՝ ի վերջո այդ ծանր տարիներին մենք հաղթել ենք պատերազմում, եւ դրանով ամեն ինչ ասված է», ասաց նա:

Լրագրողը հետաքրքրվեց՝ արդյոք հնարավո՞ր է Վրաստանի իրավիճակի կրկնությունը Հայաստանում: Դեմիրճյանը հնարավոր համարեց. «Ուզում եմ զուգահեռ անցկացնել

Հայաստանում 2004 թվականի ապրիլյան իրադարձությունների հետ: Երկու դեպքում էլ ուժ կիրառվեց, բայց Վրաստանում Սաակաշվիլին եկող հունվարի 5-ին նշանակեց նախագահական արտահերթ ընտրություններ եւ դրանով, ըստ էության, ինչ-որ կերպ կատարեց ժողովրդի ու ցուցարարների պահանջը: Մեր դեպքում 2004-ին ուժ կիրառվեց խաղաղ ցուցարարների դեմ, թեեւ կար վստահության հանրաքվե անցկացնելու ՍԴ որոշումը, սակայն այդպես էլ դա չիրականացվեց», դիտարկեց Ս. Դեմիրճյանը:

Մ. Խ.

Երեք ընկերություններ կաբելային հեռարձակման լիցենզիա են ստացել

Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը երեկվա նիստում որոշեց երեք ընկերությունների կաբելային հեռարձակման համար լիցենզիա տալ: «Բարգավաճող ցանցեր» ընկերությանը Ջարենցավանում հեռուստահաղորդումների կաբելային հեռարձակման լիցենզիա տալու որոշում կայացրեց՝ 200 հազար լիցենզիոն վճարով: Երեւանում կաբելային հեռարձակման լիցենզիա տրվեց «Արվեստի արտադրամաս» ՍՊԸ-ին՝ լիցենզիոն վճար սահմանելով 400 հազար դրամ: Իսկ Արմավիրում եւ Մեծամորում կաբելային հեռարձակում իրականացնելու լիցենզիան տրվեց «Թեւ» ընկերությանը, որը հեռուստագործունեություն է իրականացնում «Նոյ Հայաստան» անվամբ: Այս ընկերությանը լիցենզիոն գումարը եւս սահմանվեց 200 հազար դրամ:

Գ. Գ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահություն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենյակ / հեռ 581841

Հաճախորդաց ծառայություն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայություն / հեռ 529353

Հանձնարարական տարածք
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են
Համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տարով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Բացից հետո՝ անտառը տեսնենք

ՀՀԿ խմբակցության անդամ, ԱԺ սոցիալական, առողջապահության եւ բնապահպանության հարցերով մշտական հանձնաժողովի փոխնախագահ Մկրտիչ Մինասյանը ՀՀԿ 11-րդ համագումարի նախօրեին պատասխանեց «Ազգի» հարցերին:

-Պարոն Մինասյան, ՀՀԿ համագումարի շուրջը մամուլը մի փոքր աժիոտաժ ստեղծել էր դեռ ավելի վաղ՝ համագումարի հետաձգման հետ կապված, անակնկալներ կարո՞ղ են լինել:

- Առդեն հրապարակվել է, որ կուսակցության խորհուրդը համագումարում ընտրելու համար ՀՀԿ նախագահի թեկնածու է առաջադրել ՀՀԿ խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանին, միաժամանակ համագումարն առաջադրելու է նրա թեկնածությունը որպես ՀՀ նախագահի թեկնածուի: Համագումարում նաեւ կազմակերպական բնույթի խնդիրներ են քննարկվելու, խորհրդի կազմում որոշակի փոփոխություններ կլինեն. մարդիկ կան, որ արդեն ի պաշտոնե այլ գործունեությամբ են զբաղված՝ նրանք դուրս կգան խորհրդի կազմից: Եվ մարդիկ կան, որոնք քաղաքական դաշտում են՝ կուսակցության կազմում են, ենթադրվում է, որ նրանք լրացնելու են խորհրդի կազմը:

- Օրինակ՝ ո՞վ:

- Օրինակ՝ Հրանուշ Հակոբյանը, որ այժմ Հանրապետական կուսակցության անդամ է, բնական է, որ այդպիսի քաղաքական գործիչը պետք է լինի խորհրդի կազմում, համագումարին սպասե՞ք կտեսնեք:

Կարծում եմ, համագումարում պետք է ուվագծվի ե՛ւ ռազմավարությունը, ե՛ւ մարտավարությունը, որովհետեւ համապետական ընտրություններ են մոտենում, կուսակցությունն այդ ընտրություններին պետք է նախապատրաստվի ամբողջ թիմով եւ ողջ երկրի տարածքում: Բնականաբար՝ հիմա հիմնական հարցադրումները կարվեն, խնդիրները կառաջադրվեն, հետո այդ խնդիրները խորհուրդը կքննարկի: Համոզված եմ, որ այլ կուսակցություններ եւս սպասելու են մեր թեկնածուին, բնականաբար խորհուրդը հետագայում այդ խնդիրները կքննարկի նաեւ այլ կուսակցությունների ղեկավար կազմերի հետ՝ համատեղ կազմակերպական մոտեցումները, ընտրություններն օրենքի սահմաններում եւ արդյունավետ իրականացնելու խնդիրը եւ այլն:

- Ո՞ր կուսակցություններին նկատի ունեք:

- Հայաստանում արդեն հանդես է եկել «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, արտախորհրդարանական ուժերից մեզ սպասելու են «Հզոր հայրենիքը», ԺԱԿ-ը եւ այլն:

- Ո՞ւմ եք հրավիրել ձեր համագումարին, չհրավիրվածներ կա՞ն:

- Բոլոր քաղաքական ուժերին հրավիրել ենք, թե ովքեր կմասնակցեն՝ վաղը կերեւա:

- Վաղվանից հետո շատ ջրեր կպարզվեն ե՛ւ Հանրապետականի համար, ե՛ւ մյուս կուսակցությունների, դրանից հետո իսկապես հսկակեցված մարտավարությամբ հանդես գալու անհրաժեշտություն կա հենց ՀՀԿ-ի համար: Ո՞նց եք պատկերացնում այդ հսկակեցումը, խորհրդարանական խմբակցությունն ինչպե՞ս է իրեն պահելու:

- Մեր կուսակցությունը քանի որ ազգային-պահպանողական կուսակցություն է եւ գտնվում է քաղաքական դաշտի աջ կենտրոնական մասում՝ մենք պահպանելու ենք այս գիծը, եւ մեր թեկնածուն, հենք ունենալով մեր հիմնադրույթները, իր քաղաքական պլատֆորմն այդպես է ձեւավորելու, ենթադրում եմ:

Ձուլ կազմակերպական խնդիրները կլուծվեն կենտրոնական շտաբ, ինչպես նաեւ մարզային եւ համայնքային շտաբներ ստեղծելուց եւ մեր մարտավարությունը մեզ սպասող մյուս կուսակցությունների հետ համատեղ քննարկելուց հետո:

Այս ընտրություններից առաջ, քարոզարշավի ժամանակում ԱԺ-ն ձմեռային արձակուրդում է լինելու, այնպես որ առանձնապես աշխատանքի առումով կորուստներ չեն լինելու:

- Երիտասարդների հետ հանդիպման ընթացքում Լ. Տեր-Պետրոսյանը մեսիջներ է ուղարկել ե՛ւ ձեր կուսակցությանը, ե՛ւ ՀՀԿ առաջնորդին, ելույթի սղագրությունն, անշուշտ, ընթերցել եք, ո՞ր ասածներին համաձայն չեք:

- Նախ եւ առաջ՝ եթե Սերժ Սարգսյանին բարձր է գնահատել եւ անվանել իր պարտականությունները բոլորից լավ կատարող, պետականության մոտեցում ունեցող անձնավորություն՝ ես հակադրվել չեմ փորձի, միասին աշխատել են. ես գնահատում եմ, որ գնահատվում է: Բայց այն, որ սանդղակը կամ նշանաձողը որոշում է Հայաստանի նախկին նախագահը՝ թե ընդամենը նախարարի մակարդակի է, նա մոռանում է, որ Սերժ Սարգսյանը արդեն 10 տարի աշխատում է, բազում պաշտոններ է վարել, այս երկրի ստեղծման, ձեւավորման եւ զարգացման ակունքներում է կանգնած, եւ վստահ եմ, որ այդպիսի նշանաձող իրավունք ունի դնելու, գնահատելու միայն ժողովուրդը եւ Աստված: Թե չէ՝ էդպես չի լինի, ինքը կարող է, ուրիշը չի կարող: Ընտրություններ կան՝ ժողովուրդն է որոշելու, ձայն բազմաց՝ ձայն Աստծո: Դա քաղաքական իմաստով էլ սխալ եւ անընդունելի է:

Իսկ ավելի վաղ, որ հարազատների հետ կապված բաներ էր ասում առաջին նախագահը, սա եւս անընդունելի է, ազգակցական կապերը քաղաքական կատեգորիա չեն, եւ բարձրագույն խնդիրներ քննարկելու պարագայում ազգակցական կապերը դարձնել քաղաքական շահարկման առարկա, ի սկզբանե անընդունելի է:

Ընդհանրապես՝ ճիշտ կլինի, որ կամուրջներ չայրվեն: Որ ասում է՝ կլաններն երկիր չէ, ավազակապետություն է, մի բուռ է, ու վերջ, հետո էլ ասում է՝ պատրաստ եմ աշխատել Ազգային ժողովի հետ, այստեղ հակասություն էլ կա, ո՞նց է պատրաստ աշխատել, ուրեմն, ավազակապետության Ազգային ժողովի հետ: Մեր լիդերը՝ Սերժ Սարգսյանը, իր անդրադարձներից մեկում ասաց, որ ինքը չի պատրաստվում այդ մեթոդներով աշխատելու, անձնավորված քննադատելու, ազգականների մասին խոսելու, եւ կարծում եմ, որ ճիշտը սա է: Իսկ ինչ վերաբերում է ընդհանրապես կամուրջները չայրելուն, այո, կան մարդիկ, որոնք պարտավոր են ուղղակի օրենսդիրը լինելու եւ պաշտպանելու այն մեթոդներն ու բարեկրթությունը, որ քաղաքակրթությունն այսօր ստեղծել է, ոչ թե հրահրելու, ընդհանրապես ամեն ինչ մերժելու, սեւացնելու եւ այլն: Ես այդպիսի մոտեցումները չեմ ընդունում: Կարծում եմ՝ ճիշտն այն է, որ մենք բացից հետո նաեւ անտառը տեսնենք, այսինքն՝ նախ պետք է կատարված գործերը տեսնել: Եվ Տեր-Պետրոսյանն ավելի ճիշտ կանի, որ իր ծրագրերը ներկայացնի, եւ ոչ թե փորձի սեւացնել. սեւ փիարով քաղաքականություն չի լինում՝ նախ սեփական ծրագրերի հիմնադրույթները պետք է ժողովրդին ներկայացնել:

- Հնարավոր չե՞ք համարում, որ ինչ-որ իմաստի հանրապետականների մի մասն աջակցի Տեր-Պետրոսյանին, համենայն դեպս այդ կարգի կանխատեսումներ եւս մամուլն անում է:

- Ես կարծում եմ՝ ընդամենը մտքի վարժանք եւ քաղաքական տեխնոլոգիայի կիրառում է սա, էդ նպատակն ունի: Ես ՀՀԿ ներսում շփվելով բոլորի հետ՝ այդպիսի տրամադրությունների նշույլ անգամ չեմ տեսնում, վստահ եմ, որ Հանրապետականը կոտ կուսակցություն է, մարդկային, քաղաքական եւ քաղաքագիտական կատեգորիաներն ընկալող մարդկանցով ձեւավորված հիմնականում եւ այսօր հսակ տեսնում են՝ ո՞վ է իրատեսական քաղաքականության կրողը: Հանրապետականը երկրի կայունությունը համարում է ավելի կարեւոր, քան ժողովրդահաճո խոսքեր ասելով ավելի լավը լինելու տպավորություն ստեղծելը: Իրատեսությամբ եւ կոնկրետ գործերով ենք մենք գալիս:

- Տեր-Պետրոսյանը ընդդիմության առանցքային թեկնածու կդառնա՞, ըստ Ձեզ:

- Ես չեմ կարող ասել՝ առանցքային կդառնա, թե ոչ, բայց որ միակ թեկնածուն չի լինի՝ փաստ է:

- Հայաստանում Վրաստանի դեպքերի կրկնությունը հնարավոր համարո՞ւմ եք:

- Չեմ կարծում: Մեր ժողովուրդը վերջին ընտրություններով շատ բան արտացուցեց, որ ինքն ավելի շատ հավատում է կայունությանն ու այն ուժին, ով իրատես է եւ քաղաքականություն իրականացնում է առանց պոպուլիզմի, ամենօրյա գործունեությամբ, ծայրահեղ ընդդիմությանն էլ ժողովուրդն Ազգային ժողով չբերեց: Քաղաքացիական պատերազմի նախապայման Հայաստանում չկա:

- Ընտրարշավի ծայրահեղ դրսեւորումներ, որոնք տանում են հասարակության մեջ իրար հանդեպ թշնամության, կարո՞ղ են, ըստ Ձեզ, տեղի ունենալ:

- Քաղաքակիրթ ընտրարշավի եւ քաղաքակիրթ ընտրությունների պետք է գնանք: Եթե որեւէ մեկի կողմից այդպիսի բան լինի՝ դրան կպատասխանենք քաղաքակիրթ պայքարի ոճը պահպանելու կոչով: Կոռեկտության ճանապարհով պետք է գնանք:

Մ. Թ.

120 գյումրեցի երեկ սպասավ բնակարանի գնման վկայագիր

Քաղաքաշինության նախարար Վարդան Վարդանյանը երեկ Գյումրիում էր: Գյումրեցիներին անձամբ հանձնեց բնակարանների գնման վկայագրերն ու վստահեցրեց, որ ծրագիրը երկրի վարչապետի ամենօրյա ուշադրության կենտրոնում է, եւ բոլոր նրանք, ովքեր կարգի համաձայն ցանկություն կհայտնեն ծրագրից օգտվելու, վստահաբար, հնարավորություն կստանան: Բնակարանի գնման վկայականների համար միջոցներ են տրամադրվելու նաեւ եկող՝ 2008 թվականի պետական բյուջեից:

28-ամյա Արման Խնկոյանն արդեն 5-րդ անգամ է սպանում այդ հնարավորությունը եւ նախորդ չորսը չի կարողացել իրացնել՝ բնակարան գնել. «Գումարը փիչ էր: Հիպոթեկային վարկ էլ չտվեցին. իմ ու կնոջս աշխատավարձը 80 հազարից ցածր է՝ մերժեցին: Այս անգամ, հույս ունեմ, 4 մլն 700 հազար դրամ արժողությամբ վկայականը տուն կդառնա՝ մի նման բան գտել եմ»:

Գյումրեցի Համբարյան Արեւիկն էլ երկար է սպասել ԲԳԿ սպանալու իր հերթին. «Էնքան ասին՝ գնա, տարան-բերին՝ վերջում էլ, թե ուշացել ես, էլ չես կարող դիմել, իսկ տնակս իրացրել են ու հիմա բոմժի պես եմ ապրում ընտանիքս 7 անդամների հետ»:

Ծայրահեղ են գյումրեցիների կարծիքները ԲԳԿ ծրագրի առնչությամբ, եթե մեկը բողոքում է ծրագրին մասնակցելու հնարավորությանը երկար սպասելուց, ապա մյուսը, որոնց թիվը փիչ չէ, ընդգծում է, որ ԲԳԿ տրվող միջոցները չափազանց փիչ են բնակարան ձեռք բերելու համար: Իսկ տրվող միջոցները որոշվում են կադաստրի տված բնակարանների տուկյական միջին արժեքի համաձայն: Նույն այդ տվյալով որոշվել է մեկ քմ բնակտարածքի համար 74 հազար դրամ տրամադրել 2007 թվականին տրվող ԲԳԿ ծրագրով: Ի դեպ, այս գինը վերանայվում է եռամսյակը մեկ՝ համայնքի կադաստրի տված տեղեկանքի հիման վրա նոր գին սահմանվում: Քաղաքաշինության նախարարության եւ Շիրակի մարզպետարանի տվյալներով, ԲԳԿ-ների բաշխմանը զուգահեռ տվյալ բնակավայրերում աճում են նաեւ անշարժ գույքի գները: Սակայն հազիվ թե այդ աճով բացատրվեն գյումրեցիների ունեցած ԲԳԿ-ների իրացման դժվարությունները:

Պետբյուջեից ֆինանսավորվող ԲԳԿ ծրագիրն, ըստ գյումրեցիների, պահանջարկ ունի միայն կապիտալ շինարարության Գյումրիում բացակայության պատճառով, այնուամենայնիվ միայն այս տարի 300 գյումրեցի ընտանիք է մասնակցել ծրագրին, որը մարզի անօթեւանների 10 տոկոսն է միայն: Իսկ հանրապետությունում 2005 թվականից առ այսօր ԲԳԿ է սպացել ավելի քան 1500 ընտանիք, որից 700-ը Գյումրիում: Նախորդ տարի տրամադրված 670 ԲԳԿ-ից իրացվել է 560-ը, իսկ իրացման աճը 2005-ից 2006 թվականին կազմել է 20 տոկոս՝ 60-ից 80 տոկոսի հասնելով: Այս տվյալները ներկայացնելով քաղաքաշինության նախարար Վարդան Վարդանյանը տեղեկացրեց նաեւ, որ կա կառավարության հսակ հանձնարարականը վթարային շենքերի վիճակը նորից ուսումնասիրելու, կարգավիճակը որոշելու, որպեսզի լուծումներ տրվեն: Իսկ մինչ այդ տանիքի նորոգման անհրաժեշտություն ունեցող Գյումրիի 120 շենքերից 30-ի տանիքն են նորոգել, ինչը Շիրակի մարզպետ Լիդա Նանյանի հետ տեղում լինելով տեսավ քաղաքաշինության նախարար Վարդան Վարդանյանը: Նույնկերպ եղավ նաեւ Գյումրի-Արմավիր ճանապարհի Մարմաշեն տանող հատվածում, որտեղ նորոգվել է նախկինում տրակտորով անգամ դժվարանցանելի 2 կմ՝ 147 մլն դրամով, այնուհետեւ Անի քաղամասի նորոգված բակերից մեկում:

Ն. Պ.

ՕՐՍԿԱՐԳ

Երկուշաբթի

◆Ժամը 10.00-ին «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցի «Տիգրան Մեծ» սրահում տեղի կունենա «Խոշտանգումների դեմ կոնվենցիայի արձանագրություն» թեմայով կոնֆերանս:

◆Ժամը 11.00-ին «Մետրոպոլ» հյուրանոցում կսկսվի պոչամբարների անվտանգ կառավարմանը նվիրված երկօրյա սեմինարը:
Ժամը 12.00-ին՝ Ամ քառօրյա նիստ:

◆Նույն ժամին Գնահատման եւ թեստավորման կենտրոնում լրագրողների հետ կհանդիպեն հայոց լեզու եւ հայ գրականություն, մաթեմատիկա առարկաների քննական հանձնաժողովների նախագահները:

◆Ժամը 13.00-ին «Փաստարկ» ակումբում տեղի կունենա «Ազգային միասնության ուխտ» կուսակցության նախագահ Ռաֆայել Համբարձումյանի մամուլի ասուլիսը:

◆Ժամը 15.00-ին Խնկո-Ապոր գրադարանում կբացվի «Կոնուս» մանկապատանեկան կենտրոնը:

◆Լիտվայի ազգային պատգամավորության նախարար Յոզաս Օլեկասի գլխավորած պատվիրակությունը եռօրյա այցով կժամանի Հայաստան: 16:00-ին պատվիրակությունը կայցելի ՀՀ Ազգային թանգարան:

«Մատաղիսի» գործով լրացուցիչ նախաքննությունն ավարտվել է

Զինվորական դատախազությունը հայտնի «Մատաղիսի» գործով լրացուցիչ նախաքննություն ավարտել է, եւ երկու զինծառայողների սպանության մեջ մեղադրվող երեք երիտասարդների փաստաբաններին մինչեւ դեկտեմբերի 28-ը իրական գործի նյութերին ծանոթանալու ժամանակ է տվել:

Հիշեցնենք, որ տղաներ Մատաղիսի զորամասում սպանվել էին երկու զինվոր, որոնց սպանության համար մեղադրվում էին նույն զորամասի երեք զինծառայողներ Արայիկ Զալյանը, Մուսա Սերոբյանն ու Ռազմիկ Սարգսյանը, որոնց առաջին ատյանի դատարանը դատապարտել էր 15 տարվա, իսկ վերաքննիչը՝ ցմահ ազատազրկման: Տղաներից մեկը՝ Ռազմիկ Սարգսյանն իր անմեղությունն ապացուցելու համար մոտ 120-օրյա հացադուլ էր հայտարարել: Տարիներ տեւած դատավարությունը, հասարակական կազմակերպությունների եւ անհատների աղմուկը ի վերջո նպաստեցին, որ վճռաբեկ դատարանը նախորդ Ամանորի շեմին արդարացման վճիռ կայացնի: Տղաներին ազատ արձակելուց հետո սակայն իրական գործն ուղարկվել էր լրացուցիչ նախաքննության, որը փաստորեն արդեն ավարտվել է:

Տղաների փաստաբան Հայկ Ալումյանն ասել է, որ իրական գործի նյութերին ծանոթանալուց հետո իրենք մի քանի միջնորդություն կանեն, որոնց ընդունման դեպքում գործը չի մնա դատարան: Հիշեցնենք, որ տղաների փաստաբանը Զարուհի Փոսաճյանն էր, որը հիմա պատգամավոր է:

Գ. Գ.

Հայտնաբերվել է այրված տղամարդու դիակ

Նոյեմբերի 8-ին, ժամը 07.35-ին հրդեհ է բռնկվել Արարատի մարզի Գեղանիստ գյուղում: Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մարվել է ժամը 09.24-ին: Այրվել է Հ. Սահակյանին պատկանող 18 քմ մակերեսով վագոն-տնակն իր գույքով: Տնակում հայտնաբերվել է 1932-ին ծնված Հ. Սահակյանի այրված դին:

Գայլերի հարձակում

Նոյեմբերի 8-ին, ժամը 03.00-ի սահմաններում գայլերը հոշոտել են Շիրակի մարզի Վահրամաբերդ գյուղի բնակիչ Ազատ Ղազարյանի անասնագոմում գտնվող 10 ոչխար:

Մ. Մ.

Ցեղասպանությունը ժխտողներին պետք է պարսավել, ոչ թե պատվել

«Կալիֆոռնիա կուրիեր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր Հարութ Սասունյանն իր հերթական հոդվածում անդրադառնում է այն տարածված երեւույթին, երբ երկակի ստանդարտներ են կիրառվում քաղաքական գործիչների գնահատման ոլորտում: Նա գտնում է, որ ցեղասպանությունը ժխտողներին՝ բոլորին, անկախ իրենց զբաղեցրած պաշտոնից, պետք է պարսավել եւ ոչ թե պատվել: Նա մասնավորապես անդրադառնում է Իրանի (այս տարվա հոկտեմբերին) եւ Ռումինիայի (անցյալ տարվա հոկտեմբերին) նախագահների Երեւան կատարած այցելություններին եւ Երեւանի պետհամալսարանի ուսանողների հետ հանդիպման ժամանակ նրանց «պատվավոր դոկտորի եւ ոսկե մեդալի» արժանանալուն, այն դեպքում, երբ նրանցից առաջինը չափազանց զգուշավորություն ցուցաբերելով պարզապես ասաց, որ Իրանը դատապարտում է մարդկության դեմ գործադրված ամեն տեսակի ոճրագործություն, իսկ երկրորդը՝ որ պատրաստ չէ ճանաչելու Հայոց ցեղասպանությունը, որպեսզի Թուրքիայի հետ իր երկրի հարաբերությունները չխաթարվեն:

«Ոչ ոք համալսարանում չմտածեց ինքնուրույն գնահատել, թե արդյոք այցելող պաշտոնական անձնավորությունները արժանի՞ են, թե՞ ոչ նման պատվի», գրում է Սասունյանը, ավելացնելով. «Անցյալ ամիս հրեական մի շարք խմբավորումներ դատապարտեցին համալսարանի արարքը նշելով, որ Իրանի նախագահը Հոլոքոստի ճանաչված ժխտողներից է:

Երեւանի հրեական համայնքի նախագահ Ռիմա Վարժապետյանն առաջինն էր համալսարանին քննադատողների մեջ: Ուրիշներ հետեւեցին նրան: Ամերիկա-հրեական կոմիտեն եւ Հակազրպարտչական լիգան այդ առնչությամբ հայտարարություններ հրապարակեցին: Առաջինը բոլորովին իրավունք չուներ այդ խլրտին դիմելու, քանի որ հրաժարվում է ճանաչել Հայոց ցեղասպանությունը եւ համագործակցում է Թուրքիայի ժխտողականների հետ: Սա բացահայտ երկակի ստանդարտների կիրառություն է: Երկրորդը նույնպես երկար տարիներ Հայոց ցեղասպանությունը չճանաչելուց հետո, վերջերս առավել անչափ եւ ազդեցիկ հրեա ղեկավարների ճնշումների տակ ստիպված եղավ հայտարարություն հրապարակել եւ ընդունել կատարվածը, բայց հիշեցնենք, որ ինքն անձամբ 2005-ին Նյու Յորքում Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանին պարգեւատրեց «Հոգատարության խիզախության» շքանշանով: Հատկանշական է, որ հրեական համայնքի անդամներից ոմանք անմիջապես քննադատեցին նրան այդ քայլի համար: Նույն քննադատական խոսքերը կարելի է հղել Ամերիկա-հրեական կոնգրեսի անդամներին, որոնք 2004-ին դարձյալ Նյու Յորքում էրդողանին մեկ ուրիշ շքանշանով էին պարգեւատրել:

Ամերիկահայկական երկու թերթեր՝ «Armenian weekly»-ն եւ «Armenian reporter»-ը իրենց խմբագականներում անցյալ շաբաթ իրավացիորեն քննադատեցին Երեւանի պետհամալսարանին Իրանի նախագահին պարգեւատրելու առնչությամբ: Բայց նրանք պետք է հիշեցնեին եւ դատապարտեին նաեւ վերոհիշյալ ամերիկահրեական կազմակերպություններին Թուրքիայի ուրացող վարչապետին պարգեւատրելու համար: Դատապարտումը չպետք է երկակի ստանդարտներ պարունակի:

Հոլոքոստի, Հայոց (եւ այլ ազգությունների) ցեղասպանությունը ժխտողներին հավասարապես պետք է դատապարտեն հրեաները, հայերն ու աշխարհի ողջ մարդկությունը: Ժխտողներից ոչ մեկին չպետք է թույլ տալ խուսափել պատասխանատվությունից եւ չպետք է պատվել որեւէ մեկին, որ անպատվում է հիշատակը մարդկության դեմ գործված ոճրագործությունների զոհերի»:

Թարգմ. Հ. Ծ.

Կենդանիները նույնպես գթասրտության կարիք ունեն

Այսօր ամենուր հանդիպում ենք սոված, կապաղած, թափառող շների, որոնք հավաքվելով աղբարկղերի, շենքերի, նկուղների ու բակերի շրջակայքում, շփվում են դժոխականների հետ, երբեմն կծում նրանց ու վնասում: Չնայած Երեւանի քաղաքապետարանի համապատասխան վարչության դրամաշնորհային մրցույթը շահել են երկու կազմակերպություններ, որոնք պարտավոր են իրականացնել թափառող շների ստերիլացումը, սպանդը, սակայն նկատելի ոչինչ չի արվում, կենդանիները բազմանում են անօգնական ու սոված:

Բնության, կենդանիների նկատմամբ մեծ սեր ու խնամք տանող ամերիկաբնակ տեր եւ տիկին Հեռման եւ Շուշիկ Խնդիրյանները Երեւանում վարձակալել են տարածք ու վերանորոգելուց հետո դարձրել թափառող շների կացարան, որտեղ իրականացվում են շների ստերիլացումը, ամորձատումը, սննդի ու հետագա ճակատագրի խնդիրների լուծումը: Հանդիպելով բարեարքների հետ, տեղեկացանք, որ գթասիրտ ամուսինները, լինելով ամերիկյան խոշորագույն Humane Souety of United States եւ Companion Animal Network կազմակերպությունների (նշարեն՝ Կարո Ալեքսանյան) ներկայացուցիչները, Հայաստանում կամավորական սկզբունքով իրականացնում են թափառող շների ստերիլացումը, նրանց բնակավայրեր խաղաղ ու հանգստացած վիճակով վերադարձնելու ծրագիրը: Ամերիկայից ժամանել են նաեւ երեք գլխավոր բժիշկ մասնագետներ՝ դոկտոր Ջենիֆեր Սկառլեսը, Ջեյն Թոնլին (Սան Ֆրանցիսկո, Կալիֆոռնիա), Քրիստոֆեր Գարզը (Վաշինգտոն), որոնք Հայաստանի բժիշկների հետ համատեղ իրականացնում են ծրագիրը: Պրն Խնդիրյանը նշեց, որ ծրագրի շրջանակներում Հայաստան ժամանած մասնագետների ու վիրահատությունների համար Հայաստանի կառավարությունը որեւէ գումար չի տրամադրել:

Ծրագիրը բարեգործական է, իրականացնողները կամավորական հիմունքներով են աշխատում: Հոկտեմբերի 15-21-ը Երեւանի քաղաքապետարանի աջակցությամբ սկսվեց

Տեր եւ տիկին Խնդիրյանները բժիշկների հետ:

ծրագրի 1-ին փուլի աշխատանքը, որին բացի երկու հայ անասնաբույժ բժիշկներից, մասնակցում էին նաեւ Երեւանի անասնաբուժական համալսարանի 2-4-րդ կուրսի 22 ուսանողներ: Այդ օրերին վիրահատել են 49 շների, ամրացվել են վզնոցներ, որտեղ նշված են ԱՄՆ-ում գործող կազմակերպության անվանումը, համարը եւ այլ տվյալներ: Բացի դրանից, ամորձատված շների ականջները ներկվել են դեղին ու կարմիր, որպեսզի հետագայում այդ շները սպանդի չենթարկվեն: Եթե առաջ նման վիրահատությունից 4-5 օր հետո միայն կարելի էր շներին բաց թողնել, այժմ նորագույն մեթոդներով կատարվող վիրահատությունից 12-24 ժամ հետո շները հանգստացած, խաղաղված բաց են թողնվում այն տարածքները, որտեղից նրանց հավաքել են:

«Եթե այսօր օրական 3 շուն էինք վիրահատում, ապա 6 ամսվա ընթացքում դրանց թիվը կհասցնենք 25-ի, իսկ հետագայում՝ օրական մինչեւ 60-70 վիրահատություն կանենք: Այսպիսի տեմպերով 6-7 տարում Հայաստանի բոլոր շները ստերիլացված կլինեն», նշեց պրն Խնդիրյանը:

Ամերիկյան կազմակերպության ներկայացուցիչները Երեւանի քաղաքապետ Երվանդ Զախարյանի հետ հանդիպման ժամանակ առաջարկեցին ամերիկյան բժիշկների մեթոդը ներդնել առանց ՀՀ կառավարության ֆինանսական աջակցության: Հանդիպման ընթացքում քաղաքապետին հայտնեցին, որ 2008-ի հունվարին հայտարարվող նոր մրցույթին իրենց էլ թույլ տան մասնակցել: Դոկտոր Սկառլեսը առաջարկեց քաղաքապետի անունից նամակ հղել կենդանիների պահպանության միջազգային կոմիտեին ու առաջարկել, որ պատրաստակամ են ՀՀ-ում ունենալու այդ կազմակերպության մասնաճյուղն ու գրասենյակը: Նամակն արդեն ուղարկվել է, եւ երբ այդ հեղինակավոր կազմակերպությունը իր մասնաճյուղը բացի Հայաստանում, ապա ավելի արագ կիրականացվի ծրագիրը, մեր երկրի կառավարությունը որեւէ ծախս չի անի ու դա կլինի մեծ օգնություն: Ծրագրի հիմնական նպատակն է մարդկանց մեջ արթնացնել սեր ու գթասրտություն կենդանիների նկատմամբ, ուստի ստերիլացումից հետո արդեն անվսանգ շները հետ են վերադարձվում իրենց բնակավայրերը:

Պրն Խնդիրյանը «Ազգի» հետ զրույցի ավարտին կոչով դիմեց այն կազմակերպություններին, որոնք իրականացնում են շների սպանդը. «Գոնե նրանց վերջին ժամերին մի քիչ գթասիրտ լինեն ու պարանները նրանց վզին դրված քարշ չտան մահվան, այլ խնամքով ու ջերմությամբ ճանապարհեն նրանց սպանդի...»:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՔԱՐՅԱՆ

Անթույլատրելի են հեռատեսությունները քաղաքական հայացքների համար

Դրանք այժմ կիրառվում են Խաչատուր Սուքիասյանի նկատմամբ

Խաչատուր Սուքիասյանին պատկանող ընկերություններից միանգամից երկուսում՝ «Բջնի» հանքային ջրերի գործարանում եւ «Պիցցա դի Ռոմայի» ցանցում հարկային ծառայության սուգումներ սկսելը, որոնք էլ փորձ արվի ներկայացնելու որպես հերթական միջոցառում կամ քաղաքականության հետ կապ չունեցող, ակնհայտ է, որ ունի քաղաքական ենթատեքստ: Գաղտնիք չէ, որ երբ առաջին նախագահը ցանկություն հայտնեց նորից վերադառնալ քաղաքականություն, հասարակությանը հայտնի գործարարը բացահայտ հայտարարեց, որ իրեն համարում է նրա կողմնակիցը, ինչին էլ հաջորդեցին տնտեսական ճնշումները նրա նկատմամբ՝ հարկային սուգումների տեսքով: Առաջ անցնելով նշենք, որ իշխանությունների նման մոտեցումը բացարձակապես ե՛ւ դատապարտելի է, ե՛ւ անթույլատրելի մի քանի առումներով:

Նախ, նման մեթոդներով ճնշումները խոսում են այն մասին, որ չնայած նախորդ՝ խորհրդարանական ընտրություններում առաջընթաց քայլ կատարվեց, դեռ հեռու ենք իրական ժողովրդավարությունից: Հաջորդը, նման գործելակերպը վնասում է գործարար միջավայրին, ավելի շերտավորելով գործարարներին արտոնյալների եւ ոչ արտոնյալների: Նաեւ ստեղծվում է անհավասար եւ անարդար մրցակցային դաշտ: Ներքին եւ արտաքին շուկաներում հաջողություն արձանագրած «Բջնի» եւ «Նոյ» հանքային եւ աղբյուրի ջրերը արդեն երկար ժամանակ արհեստականորեն դուրս են մղված շուկայից, ինչի հետեւանքով դարձյալ արհեստականորեն նպաստավոր պայմաններ են ստեղծվում հանքային ջրերի այլ արտադրողների հետ ներքին շուկայում եւ, որ ավելի վատ է, նաեւ արտաքին շուկայում ի վնաս «Բջնիի» եւ «Նոյի»: Հարկ է ավելացնել նաեւ, որ խոշոր հարկատու, հարկային սուգումների եւ ճնշումների պատճառով ներկայումս չաշխատող «Բջնի» գործարանը պետական բյուջե հարկեր չի վճարի այդ ժամանակահատվածում:

Եթե խոսվում է վերոնշյալ ընկերություններում թաքցված եկամուտների մասին, ապա պետք է նկատի ունենալ, որ սվերը Հայաստանի տնտեսության մեջ ահռելի ծավալներ ունի եւ որեւէ մեծ թե փոքր ընկերության ամեն պահի կարելի է անակնկալի բերել: Սակայն պայքարել սվերի դեմ չի նշանակում քաղաքական հաշիվներ մաքրել առանձին վերցրած մեկ գործարարի նկատմամբ:

Անկախ այն բանից, թե Խաչատուր Սուքիասյանը ո՞ր քաղաքական ուժին կամ գործչին է համակրում եւ որքանո՞վ ենք համամիտ կամ հակադրվում նրա տեսակետներին, չի կարելի եւ պետք է անհապաղ դադարեցնել քաղաքական հայացքների կամ համակրությունների համար նրա նկատմամբ պաժիչ քայլեր ձեռնարկելը: Որքերս Քոչարյանն ու նրա շրջապատը կարող են հանգիստ լինել՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը լուրջ հնարավորություններ չունի նախագահ ընտրվելու: Բնակչության գերակշիռ մեծամասնությունը, չսիրելով հանդերձ գործող նախագահին, վարչապետին եւ իշխանություններին, չի ցանկանում ընդհանրապես լսել առաջին նախագահի մասին: Եվ, ի վերջո, ժամանակն է հրաժարվելու հենց Լեւոն Տեր-Պետրոսյանի հիմնադրած՝ քաղաքական հակառակորդներին հեռատեսելու եւ ձերբակալելու, քերթեր եւ կուսակցություններ փակելու տխուր ավանդույթներից, անգամ դրանց՝ տնտեսական ճնշամիջոցների վերածվելու մոտեցումներից:

ԱԲԵԼ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ինչով է ղեկավարվում արվեստագետը

«Արմինֆո» գործակալությունը ինտերնետում հրապարակել է Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանի եւ բարդ Ռուբեն Հախվերդյանի հայտարարությունները Ռուսաստանում հայերին այլատյացություններից պաշտպանելու մասին: Երկու մտավորականները Հայաստանի դեսպանությանը մեղադրում են պասսիվության մեջ: Եվ եթե Անանյանը զուտ է իր հանձնարարականներում (ըստ ինֆորմացիայի), ապա Հախվերդյանը, ռուսներին մեղադրելով «ավանդական» մեծապետական շովինիզմի մեջ, ինքն էլ գլորվել-ընկել է ռուսատյացության գիրկը:

Մի կողմ թողնենք երգչի էժանագին դատողությունները դեսպան Արմեն Սմբատյանի հասցեին, որը, իբր, մտածում է միայն իր գրպանի մասին: Ռուսաստանում հայերի չդադարող սպանությունների մեջ մեղադրելով երկրի ղեկավարությանը, նա, միաժամանակ, երեւույթը պատճառաբանում է նաեւ Սմբատյանի կոնֆորմիզմով եւ բացարձակ ոչ պրոֆեսիոնալ գործունեությամբ: «Մենք վարժվել ենք Ռուսաստանին ընկալել որպես մեր տիրոջը»՝ ուրնեղում է բարդը:

Որքան կարելի է պարզունակ լինել այդ կարգի հայտարարությունների համար: Երգելն ու քաղաքականությունը, պարոն Հախվերդյան, ոչ մի ընդհանուր բան չունեն իրար հետ: Այլազգիների (ոչ միայն հայերի) սպանություններն արդարացում չունեն: Դրանք պետք է դատապարտել:

Բայց, մյուս կողմից, դում գիտեմ, որ այսօր Ռուսաստանում աճում է նոր նացիստական հայություն, որքան Հայաստանում: Ինչ է նշանակում. այդ հայերը, կոպիտ ասած, հիմա՞ր են, որ թողնում են իրենց արդար հայրենիքը եւ բոլոր հնարավոր ու անհնար միջոցներով բուն դնում այդ «գարշելի շովինիստական» երկրում: Արդյոք իրավացի չէ՞ ռուսը, որը ընդվզում է՝ դուրս եկող չի գալիս, չվերթ ձեր անկախ երկրները եւ ապրեք այնտեղ երջանիկ ու ապահով կյանքով: Ո՞վ է ձեզ հրավիրել մեր երկիր: Դում կարող եք, պարոն Հախվերդյան, որպես արվեստագետ ձեր սեփական կարծիքը հայտնել Երեւանի կոնսերվատորիայի նախկին ռեկտորի մասին, սակայն իրավունք չունեք խաղալու հարյուր հազարավոր ռուսաստանաբնակ հայերի բախտի հետ, թույլ տալով էժանագին հակառուսական հայտարարություններ:

Դում պատկերացնո՞ւմ եք ինչ կանեին երեւանցիները, եթե նրանց կամքին հակառակ քաղաքի բնակչության գրեթե կեսը կազմեին եկվոր այլազգիները: Եվ ասես դա դեռ քիչ է, իրենց էլ պահեին լկտի տանտիրոջ պես: Ռուսաստանի ոչ մի ղեկավար երբեք չի արդարացել այլազգիների սպանությունները: (*) Բայց եւ դժվար է կանգնեցնել ժողովրդի դժգոհությունը այդ սվար զանգվածից, որի զգալի մասը բավականին ցածրակարգ է, տգեղ ու հանցավոր: Եվ դա, ցավոք, վերաբերում է նաեւ հայերին:

Սակայն, պարոն Հախվերդյան, ձեր քաղաքական պարզունակության գլուխգործոցը ձեր հիացմունքն է Վրաստանից, որին «ծափահարում եք», քանզի նա «արժանապատվությամբ» է պահում իրեն Ռուսաստանի նկատմամբ:

Հիշում եք Կոիլովի հայտնի առակը: Եվ գտնում եք, որ նրա պուլիկ հերոսի հոխորտանքները «արժանապատվության» դրսեւորումներ են: Հավատացեք, եթե Սակաշվիլին իրեն զուտ պահեր, Ռուսաստանը կուշիներ աբխազներին ու օսերին գոնե երկխոսության մեջ մտնել Թբիլիսիի հետ: Իսկ քանի դեռ Վրաստանն իրեն «արժանապատիվ» է պահում, ապա նա իր երկու նախկին ինքնավարությունների սվերն անգամ չի տեսնի:

Ավելի լավ է երգեք, պարոն Հախվերդյան: Ընդ որում՝ ոչ քաղաքական երգեր: Երբեք մի ներշնչվեք հակառուսական հիստերիայով:

ԳԵՈՐԳԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Մոսկվա

Խմբ. կողմից- Սկինհեդների ու ռուսական մյուս ֆաշիստների ոճրային արարքները չարդարացնելը բնավ էլ բավարար չէ: Փաստն այն է, որ Ռուսաստանի եւ ոչ մի ղեկավար հրապարակային չի դատապարտել եւ լուրջ միջոցներ չի ձեռնարկել փորձանքների, այդ թվում նաեւ Ռուսաստանում բնակվող հայերի դեմ կատարվող ոճիրները կանխելու համար: Ի վերջո չպիտի մոռանալ, որ Ռուսաստանը եղել է գաղութարար երկիր, հետեւաբար, ինչպես գաղութարար այլ երկրներ, ստիպված է հյուրընկալել, առնվազն հանդուրժել նախկին գաղութացված երկրների խաղաղասիրներին:

10 ՆՈՅԵՄԲԵՐ 2007 ԷՋ Ա

ՀԱՅԵԼԱՅԱՆ

ՀԱՅԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Աստիարահի հնագույն քաղաքակրթությունները հանրության սեփականությունն է դարձրել հնագիտությունը, գիտության այլ ճյուղերի հետ համատեղ: Երբ ժամանակներս պահած կարդում ենք Տոյայի պեղումների կամ եգիպտական փարավոնների դամբարանների հայտնաբերման պատմությունները, մտածում ենք՝ կլինեն Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակավայրերի պեղումների մասին այնպիսի ուշագրավ պատմություններ, որոնց միջոցով կհառնեն մեր անցյալ թագավորական դինաստիաների նկարագրերը, մեր երկրի վաղնջական փառքն ու անցուդարձը, ու նաեւ՝ ծանոթ կլինենք հայրենի Շլիմանների կյանքին ու գործին, նրանց միջոցով՝ մեր հայրենիքի պատմությանը: Մյուս կողմից էլ՝ գուցե այդ պատմությունները կան, գրավիչ ու հետաքրքիր տանող լեզվով նրանց ներկայացնո՞ղի պակասը կա: Գնանք այդ պատմությունների հետքից՝ մի օր պիտի սկսենք դրանք:

Գավառում, հազարամյակներ առաջ

Պատմական գիտությունների դոկտոր, Գավառի հնագիտական արշավախմբի ղեկավար, «Էրեբունի» թանգարանի տնօրեն **Ատոմ Փիլիպոսյանը** 80-ական թվականներից պեղումներ է կատարում Սեւանի ավազանի Գավառի հատվածում: Այդ պեղումները շարունակական են արդեն քառորդ դար: Գավառի գրեթե բոլոր բնակավայրերի մոտակայքում պեղումներ են արվել, հայտնաբերված նյութերը վաղ բրոնզից մինչեւ Ուրարտուն ներառող ժամանակահատվածին են վերաբերում եւ հետաքրքրական պատկեր են տալիս մեր թվարկությունից առաջ 4-րդ-1-ին հազարամյակների Հայկական լեռնաշխարհի ցեղախմբերի կենցաղի, սովորույթների, ծեսերի, երբեմն նաեւ էթնիկական տեղաշարժերի մասին:

Հացառաշի, Արծվաբերի, Նորադուզի, հենց Գավառի հնագիտական արշավախմբերը, Փիլիպոսյանի ղեկավարությամբ պեղել են բրոնզի, երկաթի դարաշրջանի հնագիտական հուշարձաններ: Բոլորն էլ շատ հետաքրքրական նյութ են տվել, պեղումների մի զգալի մասը հողվածների եւ հրապարակումների ձեւով լույս են տեսել, դրանց մի մասը հնագետ **Ռուզան Մկրտչյանի** հետ համատեղ Ատոմ Փիլիպոսյանն ամփոփել է «Գեղհովտի վանտոմյան ուրարտական քարայր-դամբարանը» մենագրության մեջ: Այս՝ Գեղհովտի քարայրը ուրարտական դամբարան է՝ բարձրասիճան անձի թաղումով, որտեղ հայտնաբերվել են մեծ քանակությամբ բրոնզե կիրառական եւ պերճանքի առարկաներ, զենք, խեցեղենի մնացորդ. այդ մարդաբանական նյութը հիմնականում ուսումնասիրված է, մենագրության մեջ ներկայացված: Զուգահեռ նյութի վերլուծության առումով ներկայացվել են նաեւ Սեւանի ավազանի այլ հնավայրերի պեղումները, որոնք այս կամ այն չափով առնչվում են այս հրապարակման հետ:

Ա. Փիլիպոսյանը պատմում է, որ վերջին երեք տարում պեղումներ է կատարում Գավառից Արծվաբեր տանող ճանապարհի ձախ կողմում, Սբ. Հովհաննես մատուռից դեպի արեւմուտք գտնվող Դարի գլուխ դամբարանադաշտում, որտեղ դեռեւս 1905-06 թվականներին ուսումնասիրություններ է կատարել **Երվանդ Լալայանը**, իսկ 1968-69 թվականներին այդտեղ աշխատել է հնագետ **Գեղեոն Միքայելյանը**: Այդ տեղանքում դամբարաններ են, որոնք վերաբերում են ուշ բրոնզ-վաղ երկաթե դարաշրջանին, եւ դրանցից յուրաքանչյուրը կարող է նորություն տալ, ամեն մի դամբարանում կարող է գտնվել զենքի մի տեսակ, խեցեղենի մի նոր նմուշ: Դամբարանադաշտը վերաբերում է մ.թ.ա.15-14-րդ դարերից մինչեւ 7-6-րդ դարերը ներառող ժամանակահատվածին եւ շատ հետաքրքիր տեղեկություններ է տալիս Հայկական լեռնաշխարհի այս շրջանի սոցիալական, էթնիկական իրավիճակի վերաբերյալ, վաղ-պետական կազմավորումների մասին, զինագործությանը, խեցեգործությանը առնչվող խնդիրներ կարող են մեկնաբանվել այդ նյութերով: Կան նյութեր, որոնք հայտնաբերվել են այս դամբարաններից, սակայն Հայկական լեռնաշխարհի արտադրանք չեն, դրանք խոսում են նաեւ մշակութային կապերի մասին. «Մի շատ մարգ օրինակ ասեմ՝ դամբարաններում հայտնաբերվել են միջերկրածովյան եւ պարսիցծոցյան ծովախեցիներ, որոնք Հայաստանի գետերում եւ լճերում չեն հանդիպում: Դրանց առկայությունը հուշում է, որ մ.թ.ա.15-14-րդ դարերում եւ հաջորդաբար Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկները տեղաշարժվել են մինչեւ Պարսից ծոց, գնացել են Միջերկրական ծով, եւ այս ճանապարհին առեւտրական, տնտեսական, մշակութային առնչություններ կատարելով՝ բերել են որոշակի նյութեր, որոնք տեղում չկան: Դրանք պարզ պերճանքի առարկաներ են, որոնք ծիսական որոշակի դեր են նաեւ ունեցել, հավանաբար առնչվել են պտղաբերության, գեղեցկության եւ սիրո հետ», ասում է հնագետը:

Ինչ անվանումներով ցեղախմբեր են ապրել այս տարածքում

Այս տարածքի եւ նրա բնակիչների ցեղային անվանումների մասին տեղեկությունները պահպանվել են ուրարտական սեպագիր արձանագրություններում, որոնք մ.թ.ա. 9-րդ դարից կան: Տեղում էլ են սեպագիր արձանագրություններ հայտնաբերվել, դրանք պատկանում են Արգիշտի 1-ինին, Սարդուրի 2-րդին, այսինքն՝ ամբողջ 8-րդ դարը եւ 7-րդ դարի առաջին քառորդ տարածքը պարբերաբար Վանի ուրարտական տիրակալների հետաքրքրությունների ոլորտում է եղել: Այստեղ հիշատակվում են բազմաթիվ ցեղեր եւ երկրանուններ. Կիեխունի երկիրը Լճաշենի տարածքում՝ Իրգիշտիկունի մայրաքաղաքով, Արկուկինի բնակավայրը՝ հավանաբար Մարտունուց դեպի Վարդենիս տանող ճանապարհին, Լուերունի երկիրը՝ մոտավորապես ժամանակակից Երանոսից դեպի Մարտունի տանող հատվածում, եւ ամենահետաքրքիրը՝ այստեղ հիշատակվում է Վելիկուխի կամ Վելիկունի երկիրը, որի անվանումը ամենայն հավանականությամբ, ըստ մի շարք լեզվաբանների, պահպանվել է Գեղարքունիք գավառի կամ նահանգի անվան մեջ: «Վելի» եւ «գեղ» արմատները նույն արմատից են գալիս, ուրարտական ժամանակաշրջանի վ-ն մեզ փոխանցվում է նաեւ իբրեւ գ, բ-ն փոխանցվում է վ-ի, իսկ ու-ն (Ուելկունի է գրվում)՝ գ-ի՝ դառնալով Գեղարքունիք: Այսինքն մոտավորապես 2700-2800 տարի առաջ հիշատակվող այդ ցեղամիությունն իր անվանումը տվել է ողջ Սեւանի ավազանին, հավանաբար նաեւ լճին, եւ դատելով պահպանված արձանագրություններից, ինչպես նաեւ Արգիշտի 1-ինի՝ Վանի ժայռի տարեգրությունից, երկու թագավորների անուններ ունենք նաեւ, որոնք հիշատակվում են Վելիկուխի երկրում՝ Միտինին եւ Մորինուն, ովքեր սկզբում առավելապես իշխել են Գավառի տարածքում, այստեղ են հիշատակվում: Սակայն հավանաբար այս տարածքը հետագայում Վելիկուխի երկիր կամ վելերի բնակավայր է հանդիսացել: Ամեն դեպքում Սեւանի արեւմտյան եւ հարավային ափը ուրարտական արձանագրություններում ընդհանուր անվամբ հիշատակվում է նաեւ Ուդտրի-էթիոնի՝ Ծովային էթիոնի անվամբ: էթիոնին ցեղային միություն էր, որը զբաղեցնում էր Հայկական լեռնաշխարհի կենտրոնական հատվածը՝ Արարատյան դաշտը, Շիրակը: Կարծիք կա, որ «էթի» եւ «հայ» անունները նույն արմատից են ծագում. **«Արմեն Պետրոսյանի** ենթադրությունն է, չեմ կարող հաստատել կամ մերժել այդ կարծիքը, սակայն մի խնդիր շատ կարեւոր է՝ որ էթիոնի անվանումը որոշակի լայն տարածքի է վերաբերել, դրա մեջ մտել են Շիրակը, Արարատյան դաշտը, Մասսյաց գավառի զգալի մասը, Սյունիքի տարածքը, այնուհետեւ դրա մաս է կազմել նաեւ Սեւանի ավազանը: Գուցեեւ այդ ցեղամիությունը շատ ավելի վաղ է գոյություն ունեցել, բայց ուրարտական գրավոր արձանագրությունները մ.թ.ա. 8-րդ դարից են այդ մասին վկայում: 9-րդ դարից կա հաղորդում էթիոնիի մասին՝ Իշպուինիի եւ Մենուայի արձանագրություններում, այսինքն 9-րդ դարից այս ցեղամիությունը որոշ այդպիսին գոյություն ունի: Սեւան անվան ծագման բազմաթիվ մեկնաբանություններ կան, ես ավելի հակված եմ կարծելու, որ Սեւանը ծագել է ուրարտական Սուինիա կամ Ծուինիա երկրանունից. «ծուե- ծով» բառից, Սեւան հենց ծով էլ նշանակում է՝ եթե մեկնաբանելու լինենք ուրարտական սեպագրերով, ծովի տարածք, ծով», մեկնաբանում է Ա. Փիլիպոսյանը:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Գավառի անցուդարձը

Սեւան՝ ուրարտերեն նշանակել է ծով

Ի դեղ

Տողերիս հեղինակը Սեւանի արեւելյան ափին, Արեգունի գյուղում մի բազալտե հուշարձան է գտել, որը խաչքարի կերպով է քանդակված. խաչի փոխարեն՝ դեմք է, Մարիամի նման, հայկական տառերով գրություններ կան, բայց չեն կարդացվում: Հուշարձանը կարծես հնագույն նախախաչքար լինի: Արդյո՞ք այս տարածքում քրիստոնեության ընդունումից շատ ավելի ուշ եղե՞լ են ոչ քրիստոնյա հայեր. հարցն ուղղեցինք տարածքի հնագիտական նկարագիրն իմացող Փիլիպոսյանին. «Շատ հետաքրքրական հարց է, Սեբեոսը 7-րդ դարի Սյունիքին եւ Արցախին վերաբերող տեղեկություն ունի, որ մինչեւ 7-րդ դարն անգամ Հայաստանի այդ հատվածներում քրիստոնեությունը լրիվ չէր տարածված, եւ իզուր չէ, որ Ավարայրի ճակատամարտի ժամանակ Վասակ Սյունին ամեն կերպ փորձում էր հետ պահել տեղի բնակիչներին, որովհետեւ Սյունիքի բնակչության զգալի մասի մեջ զրադաշտական կրոնի հետեւորդներ կային, կարող էին ընդվզել», նկատում է հնագետը՝ հետաքրքրություն ուղղելով նշված տարածքի Բաբաջան գյուղին, որն ըստ էության Սեւանի հարավ-արեւելյան անկյունում է եւ բրոնզի դարին վերաբերող նյութերով է հարուստ:

«Շորժայում մի փոքր պեղումներ արել եմ՝ գտնվածը հիմնականում 7-6-րդ դարերի նյութեր դուրս եկան, բայց մինչեւ իմ այդտեղ գնալը, 60-70-ական թվականներին, Արտանիշում պեղումներ է կատարել **Հարություն Մնացականյանը** եւ հայտնաբերել է միջին բրոնզեդարյան դամբարանային համալիրներ: Այնտեղ մի հրաշք ամրոց կա Շորժայի մոտ, եռանկյունաձեւ դեպի լիճը խրվող հրվանդանի վրա: Նոր պիտի բացվի»՝ հնագետի երազանքները, պարզ է, պեղումներին են վերաբերում:

Դարի գլուխ

Դարի գլուխ անվանումը կրող դամբարանադաշտից հայտնաբերված նյութերը շատ հետաքրքրական են. պեղված դամբարանները ունեն եւ հյուսիս-հարավ, եւ արեւելք -արեւմուտք կողմնորոշում: Այդպիսի դամբարանները վերաբերում են ուշ բրոնզի վերջին, վաղ բրոնզի սկզբի փուլին. «Ինձ հետ դաշտում աշխատում են նաեւ ճարտարապետ **Լյուբա Կիրակոսյանը** եւ հնամարդաբան **Ռուզան Մկրտչյանը**, շատ հետաքրքրական տվյալներ ունենք: Երկու դամբարաններում հայտնաբերված մարդաբանական նյութերի մնացորդները ցույց են տալիս, որ այս դամբարաններում հավանաբար դիամասնատման ծես է կատարվել, այդ երեւույթը հատուկ էր այդ ժամանակաշրջանին, դա կար նաեւ Ուրարտուում (կարասային թաղումներն ավելի ուշ են՝ հենց ուրարտական շրջանից են հանդես գալիս): Դա թաղման արարողության տեսակ էր, երբ հանգուցյալի մարմինը՝ կտրված թեւերի եւ ոտքերի խաղերից, հավանաբար նաեւ գլուխը կտրված վիճակում, անատոմիական ամբողջությամբ կամ ոչ ամբողջությամբ իջեցվել է դամբարան: Պատճառը: Մտայնություն կար, որ կտրված յուրաքանչյուր մասից եւս թաղվողին նման մի զինվոր կամ ֆուտ կլինի:Կծկված, աջ կամ ձախ կողքի թաղումներ էլ կան. աջ կողքին թաղել են տղամարդկանց, ձախ կողքին՝ կանանց: Կծկված՝ որովհետեւ մարդու անատոմիան լավ գիտեին եւ սաղմի տեսք են տվել մարդուն, որպեսզի մյուս աշխարհում նա նորից վերածնվի»:

Գտնվել են բավական բարձր որակ ունեցող սեւ-փայլեցրած խեցեղեն, գավաթներ, սափորներ, սկահակներ՝ մշակված, նախշազարդված, գեղեցիկ կանթերով, եւ ամենահետաքրքիրն այն է, որ հայտնաբերվել են մեծ քանակությամբ պերճանքի առարկաներ՝ ագատից, սարդիոնից, հասպիսից, լեռնային բյուրեղապակուց ուլունքներ, բրոնզե շղթաներներ, ճակատակալ, ծամկալներ: Դամբարաններում նաեւ զոհաբերված կենդանիների ոսկորներ՝ այծի, ոչխարի, գայլի, շան, կզաքիսի: Սեւանի ավազանից երբեմն հայտնաբերվել են

Շարունակությունը՝ էջ 5

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Քաղաքաշինության մեջ սխալվելը հանցագործություն է

Պարոնայք ճարտարապետներ, ո՞վ ձեզ թույլ տվեց մեզ զրկել Արարատի խորհուրդ խորհնի իրավունքից Հյուսիսային ճառագայթի վրա...

«Ցի եկեղեցի՞» ենք կառուցում

ՌՈԲԵՐՏ ՂԱՀՏՈՅԱՆ

Հոդվածն արձագանք է մեծարգո վարչապետի եւ «Ազգ»-ի գլխավոր խմբագրի միջեւ տեղի ունեցած հարցազրույցի...

Երեւանի Հյուսիսային ճառագայթի վերին հատվածի վրա (Արաբկիր թաղապետարանի լայնահուն այգու շարունակության՝ Ն. Զարյան փողոցի հեռ հատման վրա կառուցված «BOSCH» խանութի հետեւից մինչեւ երկաթգիծ թեք հատվածում) սկսված մասշտաբային կառույցի հիմքի շինարարության աշխատանքների մտահոգությամբ՝ 2007 ապրիլ ամսին դիմել էինք ՀՀ վարչապետին, Երեւանի քաղաքապետին, գլխավոր ճարտարապետին, Երեւանի քաղաքաշինական խորհրդին, ինչպես նաեւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսին (դիմումներին կցել էինք նաեւ «Մորմոնները մեր տանը» հոդվածը): Քաղաքապետարան ուղղված դիմումը տպագրվել էր նաեւ «Голос Армении» թերթի 2007 թ. մայիսի 22-ի համարում՝ «Зданию со шпилем еще на этапе проектирования нужно сказать НЕТ» վերնագրով, որի արձագանքը՝ «Резонанс -«ГА» ЖДЕТ РАЗЪЯСНЕНИЙ» վերտառությամբ, հրապարակված է «ԳԱ»-ի հունիսի 12 -ի համարում:

Երեւանի քաղաքապետարանի կողմից տրված 17.11. 2006 թ. թիվ 18-11185-469 շինարարության թույլտվությամբ կառուցվող «Բնակելի համալիրը» մեր համոզմամբ լինելու է Մորմոնի եկեղեցու՝ Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցու, սիմվոլին միայն հատուկ սրածայր ցից կրող համալիր...

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի օգնականի գրության համաձայն, Երեւանի գլխավոր ճարտարապետը հանձնարարել էր Երեւանի Հյուսիսային ճառագայթ թաղամասի նախագծի հեղինակներին՝ պատասխանելու մեր դիմումներին: Հեղինակներ Ա. Ալեքսանյանը եւ Հ. Մուքաֆյանը մեզ ուղղված իրենց պատասխան-կարծիքում, ընտրված որոշակի լուծումներով հիացող ճարտարապետներին վայել անմիջականությամբ, նկարագրել են նախագծի ճարտարապետական երկսված հորինվածքը, ավելացնելով. «Զույգ շենքերի մոտեցման հանգույցում նախատեսված է ալեհավաք եւ այն ոչ մի կապ չունի «Մորմոնների», «Ցցի եկեղեցի» անունների հետ»:

Անկախ այն բանից, թե մեր «Գոյապահպանություն» համագործակցության (ԳՀ) կարգի միջոցների ու ալեհավաքների մասնագետներն ինչ կարծիք են հայտնել «սրածայր ցից-ալեհավաքի» կոնստրուկցիայի ու տպավորության «պարամետրերի» վերաբերյալ, մենք՝ մանկավարժ-ճարտարագետներս, հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը՝ ստացված պատասխան-կարծիքի համար:

Նշենք նաեւ, որ կառուցվող «Բնակելի համալիրի» նախագծի գաղափար-էսքիզը 2006 թ. աշնանը քննարկվել էր Երեւանի քաղաքաշինական խորհրդում եւ չէր արժանացել հավանության, իսկ նախագիծը ընդհանրապես չի դրվել քննարկման... Սակայն ընթանում են հիմքի կառուցման աշխատանքները (քննարկմանը մասնակցած ճարտարապետ Լեւոն Իգիթյանի հայտնած կարծիքն ամբողջությամբ կցվում է տույնին)...

Երեւանի գլխավոր ճարտարապետի հանձնարարությամբ եւ Հյուսիսային ճառագայթ թաղամասի նախագծի ճարտարապետների կողմից կազմած մեր դիմումների «Պատասխանը» ԳՀ-ում վերլուծելիս նաեւ կարծիք հայտնվեց՝ թողնել մեզ մտահոգող խնդիրների լուծման համար սկսած պայքարը, այն հիմնավորելով՝ աղանդների ակտիվ ու անարգել գործունեությամբ (սկսած պայքարը՝ մեր ճարտարապետ ընկերներին անգամ հիշեցրեց ժողովրդական հայտնի խոսքը՝ Ջուրն եկել-ջրաղացն է տարել, ընկել չախչախն ենք փնտրում...): Սակայն խորը հարգանքը Ժողովրդական ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի կազմած Երեւանի հատակագծերում նախանշված Երեւանի քաղաքաշինական հյուսիսային առանցքի ազգային գաղափարների նկատմամբ եւ ավագներիս ցանկությունը՝ օգնել ճարտարապետներին, որ նրանք ամոր կանգնեն իրենց ուսուցիչների մասնագիտական-բարոյական նորմերի վրա, պարտադրում են մեզ կրկին «սրածայր ցից-ալեհավաք» կրող «Բնակելի համալիրի» կառուցման քաղաքաշինական սպասվելիք վտանգների մասին բարձրաձայնել այս անգամ «Ազգ» օրաթերթի էջերում:

Ճարտարապետ Կարեն Բալյանը ճարտարապետական ու պատմական խորը ու համարձակ վերլուծության է ենթարկել Թամանյանի կազմած Երեւանի հատակագծերն ու պարզել նաեւ, թե ազգային ինչ ոգեղեն գաղափարներ է կարել հանճարեղ Վարպետը Արարատ լեռան հետ. «...Գլխավոր հատակագիծը՝ բացված դեպի Արարատ, արտահայտում է Հայաստանի ամբողջականության գաղափարը, կորցրած տարածքների վերամիավորման գաղափարը... Թամանյանը մահացավ Հայաստանի եւ Սովետական երկրի պատմության ամենադժնդակ դեպքերի նախօրեին: ...Ռեպրեսիայի ենթարկվեց եւ ազգային գաղափարախոսությունն ամբողջությամբ, դրված գլխավոր հատակագծում, եւ համապատասխան այն լուծումները, որոնք արտահայտում էին դրանք: Թամանյանը փրկվեց ֆիզիկական բռնությունից, բայց ռեպրեսիայի ենթարկվեցին նրա գաղափարները: Ընդ որում Թամանյանի անունը դարձրին խորհրդանիշ, խորտակելով նրա իմաստը... Նրա գլխավոր հատակագծի բոլոր հանգուցային կետերում իրականացվում էր Թամանյանի գաղափարների «ուղղում»: ...70-ականներին վեր հառնեց նոր դոմինանտ՝ պատկերասրահի «զիկկուրատը», դառնալով ամենաանհաջող միջամտությունը հրապարակի կոմպոզիցիայում: ...Կենտրոնական հրապարակի անսամբլից դուրս հանվեց Արարատը»: (Карен Бальян, «Город, смотрящий на Арарат:, «Проект-классика», Москва, N 1, 2006, стр.162: Այն ամբողջությամբ հրապարակվել է՝ «ԳԱ»-ի ապրիլի 19 -ի եւ հայերեն «ԳԱ»-ի ապրիլի 25-ի համարներում):

Բաբայան փողոցից վերեւ, Հյուսիսային ճառագայթի ազատ ընթացքը դեպի Կոմիտասի պողոտա, դեպի ազատ բնություն

Նախաբան

Երեւանի Հյուսիսային ճառագայթը, կառուցվող «սրածայր ցից-ալեհավաք» կրող «Բնակելի համալիրով», վերածվելու է, ցավոք, երկկողմանի փակուղու (էլ չենք խոսում այդ «Համալիրի» հարեւանությամբ գտնվող երկու դպրոցներում ածող մատաղ սերնդի բարոյական-հոգեւոր դաստիարակության խնդիրները վտանգված լինելու մասին): Այդ Համալիրը, անկախ իր պորտալի չափերից, որպես 21 -րդ դարի «զիկկուրատ», կանգնելու է Հյուսիսային ճառագայթի վրա - ա) փակելու է Հյուսիսային ճառագայթի - ազատ ընթացքը դեպի հյուսիս, դեպի ազատ բնություն՝ սկսած Բաբայան փողոցից դեպի Կոմիտաս, դեպի 12 հարկանի «ալյումինե-ապակյա» շենքերը (նկ. 2), բ) փակելու է Հյուսիսային ճառագայթի ազատ ընթացքը դեպի հարավ, դեպի Բիբլիական Արարատ (նկ. 1), սկսած Ճառագայթի այսօրվա վերջնամասից՝ հորիզոնում երեւացող «ալյումինե-ապակյա» 12 -հարկանի շենքերից, դեպի Կոմիտասի պողոտա ու Արաբկիրի թաղապետարանի լայնահուն այգի, մինչեւ Ն. Զարյան փողոց:

Այդ «Բնակելի համալիրով» Հյուսիսային ճառագայթը, փաստորեն, վերածվելու է ոչ միայն երկու կողմից փակուղու, այլեւ առանձին գլխի ենթարկվելու՝ այդ 14 հարկանի «Բնակելի համալիրը»՝ պատենբ-պորտալը, որպես Արարատը փակող, ազատ բնությունն արհամարհող ամբողջատիրության բռնացող գաղափարախոսության ճարտարապետության կարտախտի դասական վկայություն: Առաջներում այդտեղ կկանգնեցվեր հեղափոխության առաջնորդի հուշարձանը, իսկ ճառագայթը կավարտեին հենց առաջնորդի ոտքերի տակ, ինչպես այսօր իրենց նախագծով փորձում են վարվել «Համալիրի-հուշարձանի» հեղինակները...

Երեւանի քաղաքաշինական խնդիրների պատասխանատուներին ուղղված մեր դիմում-խնդրանքն է եղել, որ նրանք նախ կարետրեն բնության պարգեւ Արարատ Սուրբ լեռան թելադրող քաղաքաշինական ու բարոյահոգեբանական խնդիրները, ապա հաշվի առնելով, որ Արարատը իր մեջ կրում ու մեզ է հաղորդում Հայաստանի ամբողջականության գաղափարը, կորցրած տարածքների վերամիավորման գաղափարը, թույլ չտան, որ Արարատը վարագուրվի այդ «սրածայր ցից-ալեհավաք» կրող «Բնակելի համալիրով», որ Արարատը կարողանա նոպաստել երկիրը սիրող, իր հայրենիքով հպարտացող ու մարտունակ սերունդ դաստիարակելու սուրբ գործին:

Նախաբանն ավարտենք՝ մնայուն արժեքներ ստեղծող ազնիվ քաղաքաշինարարների կողմից սիրված շատ ծանրակշիռ խոսքով. «Քաղաքաշինության մեջ սխալվելը՝ հանցագործություն է» : Այն չի մոռացվում եւ չի ներվում: Իսկ մտածված կերպով



Բաբայան փողոցից վերեւ, Հյուսիսային ճառագայթի վրա կառուցվող «Բնակելի համալիրը», որպես 21 -րդ դարի «զիկկուրատ», փակելու է Հյուսիսային ճառագայթի ազատ ընթացքը դեպի ազատ բնություն (օրինակ է ծառայել մոսկովյան «Ереван май 2007» ամսագրի համապատասխան ֆոտոմոնտաժը)

խամասային փողոցների: Դրանց միջեւ կանգնելու է այդ 14 հարկանի «Բնակելի համալիրը»՝ պատենբ-պորտալը, որպես Արարատը փակող, ազատ բնությունն արհամարհող ամբողջատիրության բռնացող գաղափարախոսության ճարտարապետության կարտախտի դասական վկայություն: Առաջներում այդտեղ կկանգնեցվեր հեղափոխության առաջնորդի հուշարձանը, իսկ ճառագայթը կավարտեին հենց առաջնորդի ոտքերի տակ, ինչպես այսօր իրենց նախագծով փորձում են վարվել «Համալիրի-հուշարձանի» հեղինակները...

Երեւանի քաղաքաշինական խնդիրների պատասխանատուներին ուղղված մեր դիմում-խնդրանքն է եղել, որ նրանք նախ կարետրեն բնության պարգեւ Արարատ Սուրբ լեռան թելադրող քաղաքաշինական ու բարոյահոգեբանական խնդիրները, ապա հաշվի առնելով, որ Արարատը իր մեջ կրում ու մեզ է հաղորդում Հայաստանի ամբողջականության գաղափարը, կորցրած տարածքների վերամիավորման գաղափարը, թույլ չտան, որ Արարատը վարագուրվի այդ «սրածայր ցից-ալեհավաք» կրող «Բնակելի համալիրով», որ Արարատը կարողանա նոպաստել երկիրը սիրող, իր հայրենիքով հպարտացող ու մարտունակ սերունդ դաստիարակելու սուրբ գործին:

Նախաբանն ավարտենք՝ մնայուն արժեքներ ստեղծող ազնիվ քաղաքաշինարարների կողմից սիրված շատ ծանրակշիռ խոսքով. «Քաղաքաշինության մեջ սխալվելը՝ հանցագործություն է» : Այն չի մոռացվում եւ չի ներվում: Իսկ մտածված կերպով ստեղծում է մեծ պորտալի հմայք, թատերական բեմ դեպի Արարատ լեռ»:

Այդ երկսված ճարտարապետական հորինվածքի պորտալը թերեւ մեր հայ ճարտարապետների կողմից մեզ նվիրաբերած «մխիթարությունն է»՝ Արարատն ըմբոշխնելու գոնե մեծ «պորտալի հմայք»-ի միջից... Սակայն երկսված այդ պորտալի ամենալայն մասը կազմելու է ամբողջ շինության ճակատային՝ Արարատը փակող մասի, ընդամենը 26 %-ը (շինության 74 %-ը փակելու է Արարատը, այդ ի(նչ իրավունքով...): Այն, իրոք, կդառնա թատերական բեմի միջով բնության հետ շփվելու մխիթարություն... (Այդ պորտալով մխիթարվելու համար, հեղինակները ստիպված են եղել թերեւ լուծել մասնաշենքերի սեյսմիկ կայունությունն ապահովող կոնստրուկցիայի թանկ ու բարդ խնդիրները):

Այդ «Բնակելի համալիրի» երկսված ճարտարապետությունը շատ բնական է, որ գտել է իր մեծահարուստ պատվիրատուին՝ նրա բարոյական նորմերին համապատասխանող սիմվոլը՝ «սրածայր ցիցը», «օդի մեջ պահելու» ու դեպի երկինք մխրճել ու համար: Ավելին՝ «Սրածայր ցիցը» կանգնեցնել հաղթական բարձունքում, անպայման Հյուսիսային ճառագայթի առանցքի վրա, հենց Բիբլիական Արարատին՝ Գեղեցկություն Բարություն-Սեր ավետող Լեռանը դեմ առ դեմ, որպես իր «բարոյական նորմերը» ամենուրեք տարածող «անհաղթ սրածայր ցից», որը փորձում են ներկայացնել որպես ալեհավաք... (Ի դեպ, ռադիոկապի միջոցների մեր մասնագետների խոսքը՝ ուղղված «ալեհավաքի» նման կոնստրուկցիայի ընտրման խորհրդատուին, կարելի է ընդհանրացնել Գրիգորի Գորինի «Մոռանալ Հերոսատին» տրագիկոմեդիայից վերցված հետեւյալ թեւավոր խոսքով. «Մարդկային լկտիությունն ասվածներից զորավոր է...Եւ դա հասավ այնտեղ, որ մարդիկ ստեղծեցին ասվածներ, որպեսզի իրենց կուտակած մեղքերի համար թողություն խնդրեն: Միայն ստուգը կարող է այդքան լկտի լինել»: Դրամատիկական թատրոնի այդ ներկայացումն իր բարոյական հնչեղությամբ անփոխարինելի դպրոց է դարձել եւ արժանի է ամենայն ուշադրության):

Ինչպես նախագծող հեղինակներն են նշում իրենց պատասխանում՝ «Նախագծող ճարտարապետներս եւ պատվիրատուն եւս մտահոգված ենք ունենալու գեղեցիկ ճարտարապետական հորինվածք, որի համար անում ենք ամեն հնարավորը»: Սակայն, մեր համոզմամբ, Հյուսիսային ճառագայթը որպես ազատ Ճառագայթ մնալու եւ կոչվելու համար, ամեն հնարավորն

1. «Բնակելի համալիրի» ճարտարապետական հորինվածքի պորտալի մասին

Մենք բավականին ծանոթ ենք Մորմոնի աղանդի կողմից հրամցվող «բարոյական» նորմերին, որոնք բացառում են քրիստոնեական նորմերը: Նախագծի հեղինակների կողմից մշակված այդ մասշտաբային-զանգվածային «Բնակելի համալիրի» երկսված ճարտարապետական հորինվածքն ու պորտալը, որով, չգտես թե ինչու, փորձում են «ավարտուն տեսք բերել» Հյուսիսային ճառագայթը՝ պարզապես փակելով Հյուսիսային ճառագայթի ազատ ընթացքը դեպի բնություն, այսօր մեր կողմից ընկալվում է որպես ամբողջատիրության մտածելակերպի դասական վկայություն:

Շարունակությունը՝ էջ 9

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Քննարկումներ

Բ էջից

այն կլիներ, եթե հեղինակներն ու պատվիրատուն ընդունեին, որ քաղաքաշինական առումով գրագետ կլիներ այդ «Բնակելի համալիրը» կառուցել մեկ այլ տեղում կամ էլ՝ ճարտարապետական առումով, նախագիծը վերանայել (այդ ցանկալի առաջարկությունները բերված են հոդվածի վերջում):

2. Մեր հիմնական մտահոգությունը եղել ու մնում են՝ Հյուսիսային ճառագայթի քաղաքաշինական խնդիրները

Հունիս ամսին Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանատեսի հետ անձնական հանդիպումից հետո, երբ խոսակցությունը ընթացավ, ցավոք, կանխորոշված այլ հունով, կարող ենք արդեն բարձրաձայնել, որ մեզ համար երկրորդական հարց է դարձել, թե ինչ է կրելու այդ «Բնակելի համալիրը»՝ «գաղափարական տաճայր ցի՞ց », խա՞չ, թե՞ «ալեհավաք»: Քաղաքաշինական առումով կարևոր չէ, թե ինչ է կառուցվում Հյուսիսային ճառագայթի այդ հատվածի վրա՝ «Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցի՞» («Մորմոնների» կամ «Ցցի» եկեղեցի՞), «տաճայր ցից-ալեհավաք» կրող «Բնակելի համալի՞ր», «խաչը կրող հաղթակամա՞ր», թե՞, ասենք, «Հայ Առաքելական եկեղեցի»: Միևնույն է ... Մեր համոզմամբ՝ հանցագործություն է Հյուսիսային ճառագայթի վրա որևէ մի շինություն կառուցելը... Մենք պետք է կարողանանք բաց ճակատով նայել Բնության մեծ պարգև Արարատին ու գլուխ խոնարհել Մեծն Թամանյանի ազգային քաղաքաշինական պատգամների առջև:

Մոսկվայան շեղ «Ереван май 2007» ամսագրի 126 -127 էջերում գովազդի նպատակով տրված են այդ «Բնակելի համալիրի» նախագծի պատկերները՝ «АРМЕНИЯ ВИРТУАЛЬНЫЙ ГОРОД» խորագրի ներքո: Այդ պատկերների վերլուծումը սկսենք ուշադրության արժանի մի «մանրուքից». նախագծի բոլոր մեծադիր պատկերների վրա բացակայում է «տաճայր ցիցը» (հավանաբար մորմոններին հատուկ հեռատես զգուշավորության թելադրանքով. «տաճայր ցցով» աչք չծակել, խոսել ընտիր հայերենով, գործել կիրթ, շրջահայաց ու ժողովրդամ...): Հյուսիսային ճառագայթում կառուցված 3 հարկանի 7 զույգ միանման էլիտար մենատները 126 էջի ֆոտոմոնտաժի օգնությամբ սինթեզված են «տաճայր ցից-ալեհավաք» կրող «Բնակելի համալիրի» հետ՝ ձեւավորելով մի նոր անսամբլ թեք լանջի վրա, որը, ցավոք, չունի անսամբլային ներդաշնակություն:

Եթե «տաճայր ցիցը» նոր կոնստրուկցիայի ալեհավաք է, ապա հարգելի պատվիրատու եւ խորհրդական, ինչո՞ւ չեք հարգում գոնե մոսկվաբնակ բանիմաց հայերին՝ «տաճայր ցցերը» ցույց տալով նախագծի նաեւ մեծադիր պատկերներում...

Ֆոտոմոնտաժի նպատակային մեկ այլ «մանրուք» ներկայացված է «ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐԻ» ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ գովազդի գունագեղ տախտակի վրա: Այդտեղ, տաճայր ցիցը, արդեն գրավել է իր իմաստային հաղթական տեղը: Սակայն կրկին, ինչ-ինչ նպատակներով (թերեւ մեզ մխիթարելու համար), այգու կենտրոնի միջից պատկերված երկտված պորտալի մեջ մոնտաժված է... Մեծ Արարատը: Այդ դիրքից Մեծ Արարատը չի կարող երեւալ՝ այն վարագուրվելու է մասնաբային այդ Համալիրի աջ մասնաշենքի կողմից, մնալու է նրա ետեւի մասում: Արդյոք այդ ֆոտոմոնտաժը պատվիրող ճարտարապետին հայտնի չէ՞, որ դեպի հարավ գնացող Երեւանի քաղաքաշինական Հյուսիսային առանցքն ու նրա մասը կազմող Հյուսիսային ճառագայթն ուղղված են դեպի Փոքր Արարատի ձախ լանջը...

Թամանյանի մտածած Երեւանի քաղաքաշինական Հյուսիսային առանցքի ազգային խնդիրներն աննեղելի կերպով արհամարհող այդ «Բնակելի համալիրի» կառուցումը ՉԻ կարող արդարացվել Ոչ մի ճարտարապետական մեկնաբանությամբ. Ոչ կառուցվող մասնաբային-զանգվածային համալիրի հեղինակների գնահատականով՝ «գեղեցիկ ճարտարապետական հորինվածքով», Ոչ ստեղծվող երկտված «մեծ պորտալի հմայք, թատերական բեմ դեպի Արարատ լեռը»՝ հեղինակների հիացական բառերով, եւ ոչ էլ՝ սեպտեմբերի 6-ի «Նովոյե վրեմյա»-ի էջերում այդ նախագծի երկտված պորտալի վրա ընդգծված դեպի երկինք մխրճվող «տաճայրցից-ալեհավաքը» չտեսնելու տվող, քաղաքաշինական լուրջ խնդիրները հաշվի չառնող եւ այն հնուց կերպով շրջանցող հիացական աչքակապությունով...

Հարգելի հայ ճարտարապետներ՝ Ս. Դանիելյան, Ա. Ալեքսանյան եւ Հ. Մութաֆյան, ի սեր Աստծո, ի հարգանք Ժողովրդական ճարտարապետ, ակադեմիկոս Ա. Թամանյանի թողած ժառանգության. արդյոք դրմ չեք գտնում, որ Հյուսիսային ճառագայթը պետք է շարունակել կառուցապատել այնպես, ինչպես սկսել եք՝ չփակելով Ճառագայթի ազատ ընթացքը դեպի հյուսիս՝ Բնություն ու դեպի հարավ՝ Ոգի ու Շունչ հաղորդող Արարատ Լեռը:

Այդ թեք տարածքը, որտեղից բացվում է Երեւանի հրաշք համայնապատկերն Արարատ լեռով, բնության մեծ պարգեւն է: Այն հարկավոր է օգտագործել ոչ թե Կենտրոնի՝ բարձրահարկերով «ԼՅՆԵԼՈՒ» օրինակով, այլ բոլորովին այլ նպատակներով. Բազեների սերունդ դաստիարակելու՝ ազգային արժանապատվությունն ու գեղագիտական ընկալումները խորացնելու, ինչպես նաեւ տուրիստներին գրավելու ու հմայելու համար...

«Նովոյե վրեմյա»-ի սեպտեմբերի 6-ի էջերում բերված նոր նախագծի յուրօրինակ բարձրահարկերի տեսքով, որով պետք է «լցնեք» ձեռք բերված այդ «Բնակելի համալիրից» դեպի հարավ ընկած թեք լանջը, այն կվերածեք մի նոր թունել-վարագույրի՝ փակելով Մեծ Արարատը, Հայկական Պարն ու հրաշքներով լի երեւանյան համայնապատկերը՝ արեւելից դեպի հեքիաթներով լի արեւմուտի հորիզոնը...

Այդ թեք լանջի տարածքը, քաղաքաշինական առումով, հանցագործություն կլինի օգտագործել միայն որպես բազմահարկ շենքերով լցնելու համար ձեռք բերված տարածք... Այդ թեք տարածքի նախագծման համար անհրաժեշտ է, որ հ ա յ ճարտարապետները կյանքի կոչեն բոլորովին այլ մտածելակերպ ու պատվիրատուին խորթ բարոյական չափանիշներ, որոնց պետք է նեցուկ կանգնեն Երեւանը հայրենի օջախ համարող քաղաքաշինության պատասխանատու այրերը ... Սխալի կեսից ետ կանգնելը նույնպես քաջություն է՝ տրված միայն Տղամարդուն:

«Բնակելի համալիրի» սորին հատվածի հիմքում ամրանների տեղադրումն ու նկուղային հարկերում գարաժների պատերի բետոնապատումը եւ վերին հատվածում ընթացող հողային աշխատանքները մեզ ստիպում են սույն հոդվածով կրկին դիմել Երեւանն իր հարազատ օջախը համարող ղեկավարներին, որոնք Թամանյանի կազմած Երեւանի հատակագծերի քաղաքաշինական ազգային խնդիրները գնահատել գիտեն:

3. Մեր մտահոգության բուն խնդիրը, որը դուրս է մնացել Կարծիքի շրջանակից

Հարգելի պարոն Ս. Դանիելյան, մեզ համար անհասկանալի է, թե ինչո՞ւ Դուք որպես մեր մայրաքաղաքի քաղաքաշինության թիվ առաջին պատասխանատու, չեք կամեցել «տաճայր ցից-ալեհավաք» կրող «Բնակելի համալիրի» կառուցման տեղի ընտրության շուրջ պատասխանատու հարցում հիմնավոր կերպով մտահոգել բազմազբաղ ու հոգսաշատ հարգարժան մեր քաղաքապետին: Իսկ նախագծի հարգելի ճարտարապետներին ու պատվիրատուին (որի ո՞վ եւ ինչ լինելը խնամքով թաքցնում եք...), հավանաբար չեք էլ փորձել հասկացնել տալ, որ «ալեհավաքների» տեղադրման գործում պատվիրատուի նպատակասլաց ու առատաձեռն լինելը նրանց դեռ թույլ չի տալիս «Բնակելի համալիրի» կառուցման տեղի ընտրության հարցում հաշվի չնստել Հյուսիսային առանցքի, մասնավորապես Հյուսիսային ճառագայթի քաղաքաշինական ազգային գաղափարների հետ... (Ինչ է՝ քավության նոխազ են որոշել դարձնել ճարտարապետներին՝ պատվիրատուին ու համախոհներին թողնելով միայն հարմար դիրք գրավելն ու բավականություն ստանալու անզուսպ ձգտումները):

Հարգելի պրն Սամվել Դանիելյան, Դուք որպես Երեւանի քաղաքաշինության եւ ճարտարապետության պատասխանատու ու ճանաչված մասնագետ, չգիտես թե ինչու, ձեր պատասխան-կարծիքում մեզ մտահոգող քաղաքաշինական լուրջ խնդիրները շատ հեշտությամբ իջեցրել եք ճարտարապետական հարթության վրա՝ հանձնարարելով ճարտարապետներին կարծիք հայտնելու եւ այն էլ, հիմնականում, իրենց նախագծի մասին: Այդ իսկ պատճառով առիթ եք տվել, որ Ձեզ ուղղենք նաեւ նախագծի հետ կապված հարցեր, օրինակ՝ նախագծային առաջադրանքը, ասենք պատվիրատուի կողմից կազմելիս ու ձեզ հետ համաձայնեցնելիս, թելադրողն ինչն է եղել. 1. «Տաճայր ցից-ալեհավաքի» դիրքը՝ Հյուսիսային ճառագայթի առանցքի վրա «օդի մեջ» դեպի Երկինք ուղղված պահելը, թե՞ Բիբլիական Արարատին բարձրից նայող՝ Հյուսիսային ճառագայթը փակող Համալիրի Երիտասարդական պալատի ճակատագիրը, որը պահպանելու առավել արժանիքներ ուներ, քան այդ չորս բարձրահարկերն այսօրվա տեսքով):

Առաջին. «Բնակելի համալիրի» կառուցման նոր տեղի մասին

Այդ «Բնակելի համալիրը» վերանախագծել ու կառուցել Կոմիտասի պողոտայից վերեւ, Հյուսիսային ճառագայթի այսօրվա վերջնամասում՝ «ալյումինե-ապակյա» 12 հարկանի «լուցկու տուփ» հիշեցնող եւ իրենց երբեմնի «մոդայիկ» ճարտարապետությամբ արդեն հնամենի դարձած 4 շենքերի հարեւանությամբ՝ ա) դրանց դիմացը ընկած այգու տարածքում, մինչեւ Կոմիտասի պողոտայի կարմիր գիծը՝ ժամանակակից տեսք տալով ձեւավորվող նոր այգու մեջ նոր անսամբլին, բ) օգտագործելով 2 բարձրահարկերն ու դիմացը ընկած տարածքը (Ասենք՝ այդ հարուստ պատվիրատու կազմակերպությունը համապատասխան քայլերով գնում է մեջտեղի երկու բարձրահարկերն ու այստեղ տեղավորված ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության Արաբկիրի զբաղվածության տարածքային կենտրոնին եւ Ռադիոֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտին, համապատասխան գումարներով, տեղ է հատկացնում կողքի երկու բարձրահարկերում...Այդ երկու բարձրահարկերը վերանախագծվում են՝ դրանց հաղորդելով տաճայր ալեհավաք կրող շենքերին հատուկ ժամանակակից տեսք, դիմացն ավելացնելով ճարտարապետների ճաշակին վայել նոր մասնաշենքեր՝ մինչեւ Կոմիտասի պողոտայի մայթը, սակայն չփակելով Հյուսիսային ճառագայթը):

Այդ «Բնակելի համալիրը», որի նախագիծը, ինչպես նշում են հեղինակները, ունի «գեղեցիկ ճարտարապետական հորինվածք», կառուցել Հյուսիսային ճառագայթից շատ հեռու մեկ այլ՝ Երեւանի բարձրադիր եւ Արարատին նայող տեղանքում. օրինակ՝ լուծարված Արաբկիր կայարանից մոտ 250 մ վերեւ, բացվող նոր ճանապարհի ձախ կողմում ձեւավորվող էլիտար թաղամասի ծայրում, բնականից արդեն պատրաստի հիմքորակում, Արարատի դեմ-դիմաց:

Երկրորդ. «Բնակելի համալիրի» հիմքի շինարարության համար ծախսված գումարների իմաստավորման մասին

Նախագծի հեղինակները՝ ճանաչված ու գնահատված ճարտարապետներ Ա. Ալեքսանյանի եւ Հ. Մութաֆյանի կողմից մեզ ուղղված պատասխան-կարծիքում նշված է շատ ուշագրավ ու գնահատելի մի նախնական նախագծի մասին: Ինչպես գրում են նրանք. «BOSCH խանութի փոխարեն՝ տվյալ հատվածում նախատեսված էր տրծարան՝ որը ուներ երկու եզրերում փակ տարածքներ, եւ կենտրոնում 30.0 մ լայնությամբ բացօթյա ծածկված տարածք»: Այդ գաղափարը, ցավոք, նրանք ինչ-ինչ պատճառներով չեն կարողացել իրագործել(հավանաբար հայտնվել են «BOSCH»-ի, ապա ավելի զորեղ, «տաճայր ցից-ալեհավաքը» ամենուրեք ու հիմա էլ՝ Հյուսիսային ճառագայթի վրա, Բիբլիական Արարատին դեմառդեմ կանգնեցնելու մեծ ցանկություն ունեցող «Բնակելի համալիրի» պատվիրատուները...):

Այսօր, անկախ պետականության կերտման հույսերով լի մեր օրերում, ի՞նչը կարող է խանգարել Հյուսիսային ճառագայթ թաղամասի նախագծի հեղինակներ Ա. Ալեքսանյանին եւ Հ. Մութաֆյանին՝ կյանքի կոչելու այդ գեղեցիկ գաղափարը: Ասենք, այդ «Բնակելի համալիրի» համար փորված հիմքին, տեղադրված ամրաններին, երկաթբետոնե սյուներին ու պատերին համապատասխան, հեղինակները կարող են այդ թեք լանջի վրա վերանախագծել եւ կառուցել, ասենք, ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաներով հարուստ, դեպի Արարատ լեռն ազատորեն «ընթացող», Երեւանի համայնապատկերը ընդգրկող դիտահրապարակների՝ ասիճան առ ասիճան իջնող կասկադ (Արարատը դիտելու, Արարատի ոգին սերմանելու աճող մատաղ սերնդի հոգում՝ որպես կորցրած տարածքների վերամիավորման եւ ինքնահաստատման ամբողջական գաղափարներին պատշաճ կանգնող նվիրյալ մարտիկներ):

Դիտահրապարակների տակի ծավալներում կարելի է հիմնել, օրինակ, Արաբկիր Հայորդյաց Տուն՝ Բազեներ կրթելու ու դաստիարակելու Բույն:

Ցանկանում ենք համոզմունք հայտնել, որ Երեւանի քաղաքապետարանը՝ մեծարգո ՀՀ վարչապետի բարձր հովանու ներքո, կարող է ոտքներ գտնել՝ Ա. Ալեքսանյանի եւ Հ. Մութաֆյանի քաղաքաշինական ու ճարտարապետական այդ ազգօգուտ գաղափարն իրականություն դարձնելու համար:

Ելնելով վերը նշված առաջարկություններից, սույն հոդվածով դիմում ենք մեր հայրենի օջախի՝ Երեւանի քաղաքաշինության պատասխանատու նվիրյալներին, հետեւյալ խնդրանքով.

Երեւանի Քաղաքապետարանի քաղաքաշինական խորհրդում քննարկման հարց դարձնել վերը ներկայացված առաջարկությունները:

Համոզված ենք, որ կգտնվեն հայ բարերարներ՝ Հյուսիսային ճառագայթը դուրս բերելու դեպի ազատ բնություն, դեպի Արարատ ...

«Գոյապահպանություն» համագործակցության ծրագրերի համակարգող
15 հոկտ., 2007 թ.
Երեւան, Ն. Չարյան, 15, բն. 37ա
Հեռ. 253-243 բն. , 524-935 աշխ.

Քաղաքաշինության մեջ սխալվելը հանցագործություն է

Հետաքրքրություն

ՀԻՏԼԵՐԻ ԱՍՏՂԱԳՈՒՇԱԿԱՆ ՄԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երրորդ ռեյխի աստղագուշակությունը

Կան բաներ, որոնք հետաքրքրում են բոլորին՝ թե՛ տնանկներին, թե՛ երկրի նախագահներին, այն է, թե ինչ է սպասում իրենց ապագայում: Խոսքը կանխատեսման մեթոդների՝ աստղագուշակության, պայծառատեսության մասին է, որոնցից օգտվում են մարդկային ճակատագրեր տնօրինողները, կայացնելով կարեւորագույն, այդ թվում՝ ռազմահաղթական որոշումներ: Մարդիկ տարված են աստղագուշակությամբ, նրանք ծարավի են իմանալու իրենց ապագան եւ ձգտում են աստղերից տեղեկանալ սպասվող վտանգի մասին, զգուշանալ ու, եթե հնարավոր է, խուսափել կամ գոնե մեղմել հետեւանքները:

Գերմանիայում մինչեւ 1820 թիվը աստղագուշակությունը ընդգրկված էր համալսարանական ծրագրում որպես պարտադիր ուսուցման դասընթաց: Հետո այն որպես գիտական ճյուղ վերացվեց մինչեւ 1935 թիվը, երբ Ադոլֆ Հիտլերը փակված ուսումնական հաստատությունները վերափոխեց, այդ դասընթացները վերականգնեց եւ սկսեց կիրառել պետությունը ղեկավարելու նոր ոճ:

Հիտլերը առաջադեմորեն հովանավորում էր քաղաքական աստղագուշակության զարգացումը, որը նրան խորհուրդներ էր տալիս այն մասին, թե ինչպիսի ռազմաքաղաքական քայլեր է պետք անել, երբ եւ որտեղ պետք է հարվածներ հասցնել, գնահատում էր ծրագրերի հաջողությունը կամ սխալը: Այդ ժամանակահատվածում ամենալավ աստղագուշակը համարվում էր Հիտլերի անձնական խորհրդական Օսսո Գանուաենը: Դատելով ամեն ինչից, նա ազնվորեն էր կատարում իր ախտանշանը, Հիտլերին պատմում էր այն ամենը, ինչ որ տեսնում էր իր արտասովոր տաղանդով: Բայց, ինչպես գիտենք, առաջնորդները սիրում են, որ իրենց գովաբանում են, իսկ ավելի շատ սիրում են սեփական սխալները այլոց վերագրել: Գանուաենը Հիտլերին է ներկայացնում նրա քաղաքականության եւ ռազմական ծրագրերում այն սխալները, որոնք նրան հասցնելու են դաժան պարտության: Նա համարձակվում է նույնիսկ ասել գալիք ամենավատ պարտության՝ Գերմանիայի բաժանման մասին: Այդ ամենը դուր չի գալիս Հիտլերին. նա արդեն ընտրել էր իր ուղին եւ հավատում էր իր աստղի զորությանը: Գանուաենը ընտրահարկվում, այնուհետեւ վերացվում է:

Շուտով պալատական աստղագուշակի տեղը գրավում են Կարլ Կրաֆտը եւ Լուի դը Վոլը (Վիլը): «Ճակատագիրն այնպես էր տնօրինել, որ նրանք հանդիպեն, ծանոթանան եւ նույնիսկ աստղագուշակություն դասավանդեն Գերմանիայի միեւնույն ինստիտուտում: Սակայն նրանց հայացքները կյանքի մասին տարբեր էին: Դը Վոլը դեմոկրատ էր, իսկ Կրաֆտը հարում էր նացիոնալ-սոցիալիզմին: Մի անգամ Հիտլերի հորոսկոպը վերլուծելիս, Կրաֆտը տեսնում է, որ 1936-ի նոյեմբերի սկզբին նրան մահափորձ է սպառնում: Մի փոքր մտածելուց հետո Կրաֆտը նամակ է ուղարկում Հիտլերին, որով նախազգուշացնում է վտանգի մասին: Մինչեւ նամակը թղթաբանական երկար ճանապարհ կանցներ, Հիտլերի դեմ իսկապես մահափորձը կատարվում է նոյեմբերի 8-ին: Սակայն ճիվաղի բախտը բերում է: Հզոր ռումբը Մյունխենի քաղաքապետարանի շենքում պայթում է այն ժամանակ, երբ նա դուրս է գնում», այս մասին գրում է մեկ ուրիշ աստղագուշակ՝ Ֆելիքս Վելիչկոն:

Դեռքից հետո Հիտլերը սանում է Կրաֆտի նամակը, որն էլ սիրողում է խոր հարգանքով վերաբերվել աստղագուշակին եւ բոլոր հարցերում խոնարհաբար լսում է նրան:

Որոշ ժամանակ անց Կրաֆտի եւ դը Վոլի ճանապարհները բաժանվում են: Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ դը Վոլը փախչում է Մեծ Բրիտանիա: Լոնդոնում նա իր ծառայություններն է առաջարկում Չերչիլին, հայտնելով, որ ախտանշել է Հիտլերի մոտ եւ կարող է կանխատեսել պատերազմի ընթացքը: Գիրուկ, խելացի եւ մշտապես սիգարը բերանում վարչապետն իր նկատառումներն ուներ պատերազմի ընթացքի վերաբերյալ, բայց նրան գայթակղում է այն միտքը, որ կարող է օգտագործել արհեստավարժ մեկին՝ իմանալու համար, թե ինչ ազդեցություն ունեն աստղագուշակները Գերմանիան ղեկավարող վերնախավի վրա. հետախուզությունը նրան տեղեկացրել էր, որ Գերմանիայի ղեկավարի համար ախտանշում է աստղագուշակների մի ողջ ինստիտուտ: Չերչիլը վստահում է դը Վոլին եւ շահում: Աստղագուշակը հաստատել էր, որ Հիտլերը մեծ սխալ էր գործում, ծրագրելով ԽՍՀՄ-ի վրա հարձակվել մայր մտնող լուսնի ժամանակ: Դա նշանակում էր, որ պատերազմը Գերմանիայի համար ավարտվելու էր պարտությամբ: Բացի այդ դը Վոլը, լավ իմանալով գերմանացի աստղագուշակների մեթոդները եւ նրանց տրամաբանությունը, հայտնում է Չերչիլին, որ ֆյուրերի աստղագուշակները կանխատեսելու են դաշնակից զորքերի ափհանումը Բալկաններում: Դաշնակիցներն իսկապես մտադիր էին առաջին հարվածը հասցնել հենց այնտեղ:

Դա հանձարեղ կռահում էր, եւ Չերչիլը առանց վարանելու հավատում է դը Վոլին: Նա անմիջապես զանգահարում է գլխավոր շտաբ եւ ասում. «Ոչ ուզում եմ հարվածեմ, միայն ոչ Բալկաններին»: Բրիտանացի զինվորական ռազմավարները, ենթարկվելով ամենակարող վարչապետին, մշակում են հարձակման մեկ այլ ծրագիր՝ հյուսիսային Աֆրիկա-Սիցիլիա-Իտալիա, ֆրանսիական գավառ Նորմանդիա:

Ավելի համոզիչ լինելու համար, հետախուզությունը գերմանացիների մոտ է գցում իբր անգլիացի սպայի դիակ, որի մոտ եղած գծագրում ուղղակի էր Բալկանների վրա դաշնակիցների զորքերի հարձակման մանրամասն ծրագիրը: Այդպես Հիտլերը գերմանական հետախուզության պետից՝ Կանարիսից սանում է աստղագուշակների կանխատեսումների հաստատումը: Այդ պահից ամենալավ դիվիզիաները տեղակայում է Բալկաններում, պատրաստվելով անգլիացիներին ուժգին հակահարված հասցնելու: Թշնամու զորքերի հարվածների նոր ուղղությունները Հիտլերի համար միանգամայն անսպասելի էին: Նա գազազում է եւ հրամայում է գնդակահարել բաց աստղագուշակների: Կրաֆտը նույնպես ձերբակալվում է, սակայն նրան ողջ է թողնում: Ֆյուրերը նրան երբեմն ազատում էր կալանքից՝ հերթական խորհրդակցության համար, երբեմն նորից ձերբակալում: Վերջիվերջո Կրաֆտը Գանուաենի ճակատագրին է արժանանում՝ մահանում է Բուխենվալդի համակենտրոնացման ճամբարում, իսկ նրա տեղը գրավում են ուրիշ աստղագուշակ-խորհրդատուներ:

Չերչիլը, եթե չմտածեր դը Վոլին օգտագործելու մասին, պատերազմը հավանաբար այլ ընթացք կունենար:

Հիտլերի համար ախտանում էին հատուկ գիտահետազոտական ինստիտուտներ, որոնց հետազոտություններն ուղղված էին հանուն հաղթանակի միահյուսելու բնական եւ գերբնական ուժերը՝ ժամանակակից տեխնիկայից մինչեւ սեւ կախարդանքը: Այդպիսի ինստիտուտներից մեկում ախտանշի է ընդունվում Վիլհելմ Վուլֆը, որը շատ շուտով դառնում է Երրորդ ռեյխի պալատական աստղագուշակը: Նա նախ ախտանում է Հիմլերի մոտ, ապա, ավելի ուշ՝ Հիտլերի մոտ: Իր հուշերում Վուլֆը գրում է, որ Հիտլերն այնքան լուրջ էր վերաբերվում աստղագուշակությանը, որ աստղագուշակներին արգելել էր բացի իրենից որեւէ մեկի հետ խորհրդակցել: «Մենք չենք կարող թույլ տալ աստղագուշակներին, որպեսզի նրանք առաջնորդվեն սեփական գուշակություններով, բացառությամբ նրանց, ովքեր ախտանում են մեզ համար: Աստղագուշակությունը արտնյալ փորձամասնության սեփականությունն է»: Վուլֆին նշանակեցին շնորհազրկված Գանուաենի եւ Կրաֆտի պաշտոնին: Նրանց վիճակված ճակատագրի մասին իմանալով, Վուլֆը շատ զգույշ էր իր գործողություններում եւ ապրեց Երրորդ ռեյխից շատ երկար:

Պատերազմը որքան ավարտին էր մոտենում, ֆյուրերի հետ ախտանալն այնքան ավելի էր դժվարանում: Օբյեկտիվ կանխագուշակությունների փոխարեն նա ավելի ու ավելի էր պահանջում, որ ասեն իր մոտալուտ հաղթանակի մասին: Հենց այդ էլ նրան կործանեց: Աստղագուշակները վախենում էին նրան ճշմարտությունն ասել եւ ներկայացնում էին սխալ ու լավատեսական կանխատեսումներ:

Հիտլերի գաղտնախորհուրդ գերնախագիծը «Անեներբե» հայտնի ինստիտուտ էր: «Անեներբե» գերմաներենից թարգմանվում է «նախնիների ժառանգությունը» եւ նացիստական Գերմանիայի ամենախորհրդավոր կազմակերպությունն էր: Այդ գիտական ընկերակցությունը վաղուց սվերված է առասպելով: «Անեներբե»-ն ամենաառեղծվածայինն է բոլոր առասպելական կազմակերպություններից: Այն միակ հայտնի կառույցն էր, որ զբաղվում էր կախարդանքի հետազոտությամբ՝ պետության անմիջական օժանդակությամբ եւ ֆինանսավորմամբ: «Անեներբե»-ի վրա Երրորդ ռեյխը ավելի շատ միջոցներ է ծախսել, քան ԱՄՆ-ը ատոմային զենքի ստեղծման համար: Այն կազմավորվել է 1935-ին, Հենրիխ Հիմլերի հրամանով: Կազմակերպության նախնական անվանումն էր՝ «Հին գերմանական պատմության, գաղափարախոսության եւ գերմանացի նախնիների ժառանգության ուսումնասիրության ընկերակցություն»: Ստիծանաբար անվանումը կրճատվել է եւ դարձել «Նախնիների ժառանգությունը», իսկ կազմակերպությունն ընդարձակել է հետազոտությունների ախտարհագրական ընդգրկումը՝ Տիբեթից մինչեւ Անտարկտիկա: «Անեներբե»-ի առաջին ղեկավարը Հերման Վիրսն էր՝ ծագմամբ հոլանդացի, մի շարք էզոթերիկ հիմնավոր ախտանշների հեղինակ, պրոֆեսոր: Նա պնդում էր, որ ժամանակակից մարդկության արմատները ձեւավորել են երկու հնագույն ցեղեր. հյուսիսայինը՝ բարձր հոգեւորը եւ սուր բնազդներով սահմանափակված հարավայինը: Հիմլերը աջակցեց հյուսիսային ցեղի ակնառու գերազանցությամբ եւ առաջարկում է Վիրսին համագործակցել իրենց:

1937-ին «Անեներբե»-ն անցնում է էսէսի վերահսկողության տակ, որի ենթակայության տակ էին տասից ավելի գիտական ինստիտուտներ (շատերը նշում են 50-ը): Այդ կազմակերպության լիիշխան ղեկավարն էր Հենրիխ Հիմլերը, նրա օգնականներն էին Մյունխենի համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Վալտեր Վյուրստը եւ էսէսի սպա Վոլֆրամ Զիվերսը: Կազմակերպության կանոնադրության համաձայն, այն զբաղվում է «հյուսիսային հնդգերմանացիների տարածքի, հոգու, գործունեության եւ ժառանգության ուսումնասիրություններով եւ դրանց հրապարակմամբ»:

Այսօր «Անեներբե»-ի իրական գործունեության մասին հստակ որեւէ բան ասելը դժվար է: Այն ամբողջովին սվերագծված է ֆանտաստիկ լուրերով, կազմակերպության ամբողջ փաստաթղթերն ու տեխնոլոգիաները հափշտակել են դաշնակիցները եւ մինչ օրս ծածկված են խոր գաղտնիության ցողով: Սակայն, ինչպես ասում են, չկա այնպիսի գաղտնիք, որ հայտնի չդառնա: Ներկայացնենք ընդամենը մի քանի հարցեր, որոնցով զբաղվում էր «Անեներբե»-ն.

1. կազմակերպել արշավախմբեր եւ ուղարկել Տիբեթ՝ լեգենդար Շամբալան գտնելու եւ տիրապետել այնտեղի իմաստունների գիտելիքներին ու տեխնոլոգիաներին, որ պահվում են այդ անառաս երկրում (կամ մենաստանում).

2. փնտրել, գտնել եւ ամեն գնով ձեռք բերել հին կրոնական մասունքներ (ճակատագրի նիզակը, կայսրանի տաղանակը եւ այլն), որոնք ունեին հզոր առեղծվածային եւ բնական ուժ.

3. գտնել եւ ձեռք բերել հնագույն քաղաքակրթությունների (Ատլանտիդայի, Եգիպտոսի եւ այլն) առեղծվածային գիտելիքներն ու տեխնոլոգիաները.

4. ուսումնասիրել եւ գործնականորեն կիրառել էզոթերիկ ողջ գիտությունը (աստղագուշակություն, կախարդանք եւ այլն) հանուն ռեյխի բարգավաճման.

5. կարդ հաստատել վերին ուժերի հետ եւ դրանք օգտագործել ֆաշիստական Գերմանիայի նպատակներին հասնելու համար (նկատի ունեն աստղային համակարգի առեղծվածային ուժերը, հեքիաթային էակներին՝ թզուկներ, ոգիներ եւ նմանօրինակ երեւույթներ).

6. տեխնիկական հետազոտություններ եւ գենային ինժեներիա (հնադարյան գիտելիքների եւ ժամանակակից նվաճումների վրա հիմնված), միջուկային, լազերային, հրթիռային, մանրաբանական, քիմիական զենքեր, թռիչքներ դեպի տիեզերք, սնորջրյա քաղաքներ, փորձեր մարդկանց վրա եւ այլն.

7. Հարավային Ամերիկայում եւ Անտարկտիդայում ստեղծել գաղտնի բազաներ՝ պատերազմի ավարտից հետո հետ բաշխելու համար: Ծրագրի մի քանի հեղինակներ պնդում են, որ այդ բազաները մինչեւ այսօր գոյություն ունեն: Այդ գաղտնի քաղաքները նկարագրում են որպես գաղութներ, այնպիսիք, ինչպիսիք ֆանտաստիկ ֆիլմերում ստեղծում են այլմոլորակային եկվորները: Նեոֆաշիստները, որ պարում են այնտեղ, ունեն հզոր գիտատեխնիկական նեռուժ, տիրապետում են սեւ կախարդների հմտություններին եւ մարդկության համար մեծագույն սպառնալիք են:

Նշված բոլոր կետերի վերաբերյալ հաստատ, կլանող ու շատ հետաքրքրական գրքեր են հրատարակվել, եւ դեռ շարունակվում են նոր ուսումնասիրություններ լույս տեսնել: «Անեներբե» կազմակերպությունը սոսկ պատասխանական ոգի էր՝ ծածկելու համար ուրիշ շատ կազմակերպությունները, որոնք ստեղծվել էին տխրահռչակ Հիտլերի եւ նրա համախոհների մոլագար ցանկությամբ:

Ամենահետաքրքրական հարցը, թերեւս, գերմանացի աստղագուշակների կանխատեսումներն էին երկրորդ համաշխարհային պատերազմի մասին: Բազմաթիվ տվյալները հաստատում են, որ հարվածներ հասցնելու ուղղությունն ու ժամանակն ընտրելիս, Հիտլերն առաջնորդվում էր նրանց հաշվարկների վրա: Ինչ էին, արդյոք շշնջացել նրա ականջին աստղերն ու աստղագուշակները:

1938-ի մարտին էյզենախ քաղաքի մոտ գտնվող ասպետական դղյակում խիստ գաղտնի պայմաններում խորհրդակցություն էին անում Երրորդ ռեյխի լավագույն աստղագուշակներն ու պայծառատեսները: Նրանք քննարկում էին Գերմանիայի ապագան: Միջոցառումը ղեկավարում էր քարոզչության նախարար դոկտոր Յոզեֆ Գեբելսը: Նրանց պահպանում էին էսէսի սպառազինումները եւ գեստապոյի հետախուզության ռադիո- եւ ռադիոտեխնիկական հետախուզության հատուկ աշխատակիցների խումբը, որը զինված էր գաղտնալսման նորագույն սարքավորումներով: Ցավոք, համարյա բոլոր արձանագրություններն ու ձայնագրությունները, նաեւ խորհրդակցության մասնակիցների մեծ մասն անհայտ կորել են, կարծես անհետացել են: Սակայն նրանցից մեկ-երկուսը փրկվել են, նրանք էլ պատմում են, թե ինչի մասին է խոսվել խորհրդավոր երեկոյի ընթացքում:

Այն ժամանակ՝ 1938-ին աստղագուշակներն ասում էին, որ Գերմանիան կանգնած է մեծ պատերազմի շեմին: Իսկ տարին բարենպաստ է Չեխոսլովակիային զինաթափելու եւ Սուդետն ու Բոհեմիան ազատագրելու համար: 1939-ը բարենպաստ է Լեհաստանը գրավելու համար: Վարեւավան օգնություն չի սպանա իր աջակիցներից, իսկ Ֆրանսիան ոմբակոծելու ամենահարմար ժամանակը 1940 թվականն է: Ռուսաստանի հետ պատերազմ սկսելու ճիշտ ժամանակը 1941 եւ 1946 թվականներն են: Ավելի նախընտրելի էր, համենայն դեպս, 1941-ը, քանի որ ԽՍՀՄ զինված ուժերն ու արդյունաբերությունը հզորանալու միտումներ էր ցուցաբերում, հետեւաբար 1946-ին ռեյխի համար, միգուցե, դժվար լիներ Խորհրդային Միության հետ պատերազմելը, այդ ժամանակ որոշները հաղթանակի կարող են հասնել միայնակ, առանց դաշնակիցների: Աստղագուշակները հայտնում են նույնիսկ հարձակման ամենահարմար ժամանակահատվածը՝ 1941-ի մայիսի երկրորդ կեսը: Նրանք միաձայն պնդում էին, որ պատերազմը պետք է եւ հնարավոր է հաղթանակի հասցնել մեկ ամառվա ընթացքում, ամենաուշը՝ մինչեւ հոկտեմբերի վերջը:

Ոչ բոլոր աստղագուշակների եւ պայծառատեսների կանխատեսումներում էր, սակայն, ամեն ինչ վարդագույն ներկայացվում: Գտնվեցին նաեւ այնպիսի համարձակներ, ովքեր համոզում էին ռեյխի ղեկավարությանը ԽՍՀՄ-ի հետ չպատերազմել: Նրանցից մեկը «տեսնում էր» 1942-ի աշնանն ու ձմռանը ռուսական մեծ գետի մոտ (հավանաբար՝ Վոլգայի) վերմախտի

մեծ կորուստներ: Մեկ այլ աստղագուշակ «հաշվարկել էր» 500.000 գերմանացի զինվորների ոչնչացումը 1943-ի ամռանը Ռուսաստանի դաշտերում: Հետագա տարիներին զոհերի թվի կրկնապատկում էր կանխատեսում:

Տեսնելով, որ Գեբելսը համարձակներին չի պատժում, նրանք ներկայացնում են նաեւ հետեւյալ պատկերը. անգլիացիներն ու ամերիկացիները ռեյխի հետ իսկական պատերազմ կսկսեն 1943-ին (հարավում), իսկ 1944-ին՝ հյուսիսում: Ռազմական դաշինքը Ռուսաստանի, Անգլիայի եւ Ամերիկայի միջեւ անխոցափելի է: Նրանց համախմբելու է ատելությունը նացիոնալ-սոցիալիզմի, ֆյուրերի եւ ռեյխի հանդեպ:

1946-ը Վաշինգտոնի, Լոնդոնի եւ Մոսկվայի հարաբերությունների համար շրջադարձային կլինի՝ երբեմնի դաշնակիցները թշնամիներ կդառնան: Նրանց միջեւ որոշակի ջերմություն կզգացվի միայն 1953-ից հետո, երբ Ստալինը կմահանա: Ընդ որում, երկու կարեւորագույն իրադարձությունները՝ թե՛ արեւմտյան դաշնակիցների թշնամանքը Ռուսաստանի հանդեպ, թե՛ կարմիր առաջնորդի մահը տեղի կունենան այդ խորհրդակցությունից 8 եւ 15 տարի անց, այսինքն՝ 1946 եւ1953 թվականներին: Հիշենք, որ 1946-ին Ուինստոն Չերչիլը հանդես եկավ «սառը պատերազմի» սկիզբը նշանավորող ճառով, իսկ Ստալինը մահացավ 1953-ին:

Գեբելսը, ձգտելով լիարժեք տեղեկատվություն ստանալ, բարեհաճորեն գովաբանում է աստղագետներին եւ հարցնում. «Գերմանիայի համար ինչպե՞ս է ավարտվելու գալիք պատերազմը»: Այդ ժամանակ աստղագետները գիտակցաբար զգուշավորություն ցուցաբերելով, մեղմորեն խոստացան, որ ի վերջո երկիրը կգնա նոր ու փայլուն ուղով: Այդ տեղի կունենա 1945-ի մայիսին, ընդ որում, երկրի սահմանները կփոխվեն:

Հիտլերը, սակայն Գեբելսի պես ներողամիտ չէր: Նա կարդալով խորհրդակցության հաշվետվությունները, դիվային կատաղությամբ թղթերը շպրտում է բուխարիի մեջ եւ հրամայում է աստղագուշակներից շատերին համակենտրոնացման ճամբարներ ուղարկել, իսկ նրանց, ովքեր ասում էին Գերմանիան պարտվելու է, բաժանվելու է երկու մասի եւ այդպես գոյատեւելու է 44 տարի, որից հետո միայն միավորվելու է, ֆյուրերը հրամայում է գնդակահարել:

Սակայն նույնիսկ նա չկարողացավ փոխել աստղերի կամքը եւ ճակատագիրը: 1945-ի մայիսը իրականում հաստատեց Գերմանիայի լավագույն աստղագուշակների կանխատեսումները:

Ըստ ռուսական մամուլի պատրաստեց

ՓԱՌՈՒՇԵՄ ԵՍԱՅԱՆԸ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

մրցույթի անցկացման մասին

(ծածկագիր՝ 1013-Ն-1)

Ի կատարումն ՀՀ կառավարության 2007թ.-ի սեպտեմբերի 6-ի թիվ 1013-Ն որոշման 1-ին կետի՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հրավիրում է մասնավորեցման բոլոր սուբյեկտներին մասնակցելու ***Տաշիրի կինոցանցի գույքի****, այդ թվում՝ 2253.1 մ.մ. մակերեսով կինոթատրոնի շենքի եւ գույքի զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.3 հա հողամասի մասնավորեցման մրցույթին (ծածկագիր՝ 1013-Ն-1):*

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1.	Մասնավորեցվող օբյեկտի հասցեն	ՀՀ Լոռու մարզ, Թ. Տաշիր, Լենինի փ.
1.2.	ՀՀ կառավարության որոշման համարը եւ ամսաթիվը	N1013-Ն, 06.09.2007թ.
1.3.	Գույքի (կինոթատրոնի շենքի) զբաղեցրած մակերեսը (Մ մ)	2253.1
1.4.	Գույքի զբաղեցրած, օգտագործման եւ սպասարկման համար անհրաժեշտ հողային տարածքը (հա)	0.3
1.5.	Հողամասի 1մ.մ.-ի կադաստրային արժեքը (դրամ)	222*
1.6.	Գույքի գնահատված տուկայական արժեքը (հազ. դրամ), այդ թվում՝ շենք, շինություններ գնահատված արժեքը հիմնական միջոցների (բացառությամբ անշարժ գույքի) գնահատված արժեքը	29425 27009 2416
1.7.	Գույքի գնահատման ամսաթիվը	12.06.2007թ.
1.8.	Գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը (դրամ)	1278371
1.9.	Անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական համարը, տրման ամսաթիվը	N0224671, 15.11.2000թ

* 1.5. կետը լրացվել է համաձայն ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրված տեղեկանքի:

2. Տեղեկություններ մասնավորեցվող գույքի կազմի մասին

Հ/Հ	Գույքի անվանումը	Հաշվեկշռային արժեքը (հազ. դրամ)	Գնահատված արժեքը (հազ. դրամ)
2.1	Հիմնական միջոցներ, այդ թվում՝	339,44*	29425
	շենքեր /1 հա/	259.500	27009
	տրանսպորտային միջոցներ /4 հա/	26.382	872.067
	արտադրական սեղ. գույք, գործիք եւ այլն /127 հա/	53.558	1543.653

* Ներկայացված են հիմնական միջոցների սկզբնական արժեքները

3. Մրցույթին մասնակցելու պայմաններ

3.1. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն մասնավորեցման այն սուբյեկտները (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք սահմանված կարգով վճարել են մրցույթի նախավճարը (տես 6.1 եւ 6.2 կետերը) եւ 6.3 կետում նշված ժամկետում ներկայացրել են մրցույթի մասնակցության հայտ (նեւը կարելի է ստանալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունից, 438 սենյակ), որը ներառում է հետեւյալ փաստաթղթերը՝

- գրավոր առաջարկ մրցույթի պայմանների վերաբերյալ (տես՝ 4.12 կետը),
- նախավճարի մուտքը հաստատող փաստաթղթերի պատճենները,
- գրանցման եւ հիմնադիր փաստաթղթերի պատճենները (իրավաբանական անձանց համար), հաղորդագիրների համար՝ անձնագրի պատճենը, սոցիալական քարտի պատճենը,
- հայտատուի կողմից տրված լիազորագիր (եթե մրցույթին ներկայանում է լիազորված անձը),- գործարար նպատակներով իրավաբանական անձանց համար նաեւ գրավոր հավաստում առ այն, որ Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ դիմողի (հայտատուի) կանոնադրությամբ տվյալ գույքը
- տվյալ նեւով գնելու համար պետական համապատասխան մարմինների կամ նրանց մարմինների (խորհուրդ, ընդհանուր ժողով) համաձայնությունը չի պահանջվում, կամ պահանջվող համաձայնությունները ստացված են կցելով այդ համաձայնագրերը:

3.2. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ օրենսդրությամբ հողի սեփականության իրավունք ձեռք բերելու իրավունք ունեցող անձինք:

4. Մրցույթի մասնակցության հայտերի ներկայացման կարգը

4.1. Մրցույթի մասնակցության հայտերը ներկայացվում են ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն՝ մինչեւ 6.3 կետում նշված ժամկետի լրանալը:

Մրցույթի մասնակցության հայտերը՝ 3.1. կետում նշված մրցույթի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերով, ներկայացվում են սոսնձված եւ սոսնձված ծրարով՝ անձամբ կամ փոստով: Փոստով ուղարկված հայտերի (ծրարների) ներկայացման ժամկետ է համարվում ծրարի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն մուտքի օրը եւ ժամը:

4.2. 4.1. կետին չհամապատասխանող հայտերն առանց ծրարը բացելու վերադարձվում են հայտ ներկայացնողին:

4.3. Մրցույթի հայտատուները՝ մինչեւ մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնական ժամկետի ավարտը (մինչեւ 6.3 կետում նշված ժամկետի լրանալը) կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտը: Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է հայտերի ներկայացման կարգով՝ ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը:

Մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնական ժամկետի ավարտից հետո (մինչեւ 6.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո) ներկայացված հայտի փոփոխությունն կամ հետ վերադարձման դիմումները ենթակա չեն քննարկման:

4.4. Մրցույթի մասնակիցների՝ մրցութային պայմաններին համապատասխան ներկայացրած առաջարկությունները պետք է արտահայտված լինեն թվային ցուցանիշներով եւ փոխ չլինեն ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն արժեքից (տես 4.12 կետը):

4.5. Մրցույթին ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են տոպրակի կամ պարզ ընթեռնելի ձեռագրով:

Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերեն լեզվով, իսկ օտար լեզուներով գրված փաստաթղթերը կարող են ուղեկցվել թարգմանություններով: Թարգմանությունների բացակայության դեպքում փաստաթղթերը կթարգմանվեն հանձնաժողովի կողմից:

4.6. Ծրարը պետք է հասցեագրված լինի մրցութային հանձնաժողովին՝ նշելով մասնավորեցվող օբյեկտի անվանումը եւ մրցույթի ծածկագիրը (ծածկագիր՝ 1013-Ն-1):

4.7. Մրցութային առաջարկները կարող են ընդունվել նաեւ ֆաքսիմիլային կապով: Ստացված փաստաթղթերը ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունում դրվում են ծրարի մեջ եւ փակվում:

Ներկայացված ծրարները ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից կնքվում եւ մուտագրվում են:

4.8. 6.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո ներկայացված առաջարկները չեն ընդունվում:

4.9. Մրցույթի հայտը գրանցվում է հատուկ գրանցամատյանում՝ հայտատուին տալով ստացական մրցույթի մասնակցության հայտը ընդունելու վերաբերյալ:

4.10. Մրցույթի հայտատուները 6.2 կետում նշված հատուկ հաշվին մուծում են մրցույթի մասնակցության նախավճար 6.1 կետում նշված գումարի չափով:

Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի նախավճարն ընդգրկվում է մասնակցի կողմից առաջարկված գույքի մասնավորեցման (օտարման) գնի մեջ: Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (կամ նրա լիազոր ներկայացուցչի) կողմից մրցույթի արդյունքների արձանագրությունը չստորագրելու, հետագա վճարումները չկատարելու եւ (կամ) պայմանագիր չկնքելու դեպքում նախավճարը չի վերադարձվում եւ մասնավորեցումը (օտարումը) համարվում է չկայացած:

Մրցույթում հաղթող չճանաչված մասնակիցները, ինչպես նաեւ մասնակցի կարգավիճակ չստացած հայտատուները, մրցույթի մասնակցության նախավճարի վերադարձման նպատակով պետք է դիմեն ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն:Հայտային վաղեմության ընդհանուր ժամկետում մրցույթում հաղթող չճանաչված հայտատուի (կամ նրա լիազոր ներկայացուցչի) կողմից համապատասխան դիմում չներկայացնելու դեպքում մրցույթի մասնակցության նախավճարը հաշվանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համապատասխան հաշվին:

4.11. Մրցույթի պահանջներին մրցութային առաջարկի անհամապատասխանության դեպքում մրցութային առաջարկ ներկայացրած սուբյեկտին մրցույթի մասնակցի կարգավիճակ չի տրվում եւ մրցութային առաջարկը հանվում է հետագա քննարկումից:

Մրցույթի հաղթողի որոշման համար առաջադրվում են հետեւյալ պայմանները.

- մասնավորեցվող գույքի համար առաջարկվող գինը /նվազագույն գինը՝ 29425 հազ.դրամ/,
- ներդրումների չափը՝ առաջիկա երեք տարիների կտրվածքով,
- սոցիալական երաշխիքներ, այդ թվում՝ աշխատատեղերի (ներկայացվում է մարդամսով) եւ միջին աշխատավարձի վերաբերյալ:

Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի առաջարկը առավելագույն չափով է բավարարում մրցույթի պայմաններին:

4.14. Մրցույթում հաղթողին է մասնավորեցվում նաեւ գույքի զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ՝ պետական սեփականություն հանդիսացող 0.3 հեկտար հողամասը՝ կադաստրային արժեքով:

5. Վճարումներ եւ պայմանագրի կնքում

5.1 Մրցույթի հաղթողը 10-օրյա ժամկետում ստանում է մրցույթի արդյունքների հաստատված արձանագրության օրինակը: Մրցույթի մյուս մասնակիցները կարող են ստանալ արձանագրության պատճենները:

5.2 Մրցույթի հաղթողը գույքի եւ հողամասի արժեքը պետք է վճարի մրցույթը ստանալու օրվանից եռամսյա ժամկետում, ՀՀ արժույթով, գույքի վաճառքի գնի 70 տոկոսն ուղղելով ՀՀ պետական բյուջե, 30 տոկոսը՝ համապատասխան հաշվին Ֆոնդային բյուջե՝ ըստ գույքի գտնվելու վայրի, իսկ հողի վաճառքի գումարը՝ «Պետական սեփականություն հանդիսացող հողի վաճառքից մուտքեր» գանձապետական հաշվին:

5.3 Համաձայն ՀՀ կառավարության 06.09.2007թ. N 1013-Ն որոշման, մրցույթի հաղթողի կողմից առաջարկված գնի եւ հողամասի վաճառքի գնի վճարումից հետո մինչեւ սույն ժամկետում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը գնորդի հետ կնքի մասնավորեցման պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է՝

- իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը՝ 1278371 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը), ինչպես նաեւ գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարները ու տուրքերը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- «Տաշիր» կինոթատրոնի գործունեության պրոֆիլը պահպանել առնվազն երեք տարի ժամկետով:

5.4. Մրցույթով մասնավորեցման արդյունքում գնորդը հանդիսանում է նաեւ գնահատման պահից հետո առաջացած իրավունքների եւ պարտավորությունների իրավահաջորդը:

5.5. Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում մրցույթի հաղթողի վճարած նախավճարի գումարը նրան հետ չի վերադարձվում, եւ մրցույթը համարվում է չկայացած:

6. Մրցույթի անցկացման այլ պայմաններ

6.1	Մրցույթի նախավճարի չափը	1471250 դրամ
6.2	Մրցույթի նախավճարի մուտագրման հատուկ հաշիվը	Թիվ1 տեղական գանձապետական բաժանմունք դրամային - 900013145017
6.3	Մրցութային առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	2007 թվականի նոյեմբերի 20-ը, ժամը՝ 13:00
6.4	Մրցութային առաջարկի ներկայացման վայրը	ք.Երեւան, Տիգրան Մեծ-4 ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն, 438 սենյակ
6.5	Մրցույթի անցկացման օրը, ժամը եւ վայրը	2007 թվականի նոյեմբերի 23-ը, ժամը՝ 15:00 ք.Երեւան, Տիգրան Մեծ-4 ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն
6.6	Ֆաքսիմիլային կապ	*(37410) 581441*
6.7	Ինտերնետ	*URL: //www.privatization.am*

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետեւյալ հեռախոսահամարով՝ 58-14-41:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ 2007Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-ԻՆ, ԺԱՄԸ 11:30-ԻՆ, Ք.ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 /4-ՐԴ ՀԱՐԿ/ ՀԱՍՑԵՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի թիվ 1010-Ն որոշման, «Լեռնավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-անը ամրացված գույքի կազմից հետ վերցված օտարման ենթակա գույքը

Հ/Հ	Գույքի անվանումը	Գնահատված արժեքը 14.06.07թ. դրությամբ /դրամ/	Մեկնարկային գին /դրամ/	Նախավճարի չափը /դրամ/
1	«Լեռնավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-անը ամրացված գույքի կազմից հետ վերցված ՀՀ Լոռու մարզի Լեռնավան գյուղում գտնվող 326.6մ.մ. ընդհանուր մակերեսով շենքը	1431000	1431000	71550

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի թիվ 1010-Ն որոշման՝

գնորդին է օտարվում նաեւ գույքի զբաղեցրած 567 քառ.մետր մակերեսով հողատարածքը կադաստրային արժեքով.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետը աճուրդի հաղթողի կողմից առաջարկված գնի եւ հողամասի կադաստրային արժեքի վճարումից հետո մեկամսյա ժամկետում գնորդի հետ կնքում է առուվաճառքի պայմանագիր, դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված 546804 դրամ վճարը՝ (ներառյալ ավելացված արժեքի հարկը), ինչպես նաեւ գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված օրենքով սահմանված կարգով:

Աճուրդը կանցկացվի դրտական (գնի ավելացման) եղանակով:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ հաստատությունները, որոնք մինչեւ 2007թ. նոյեմբերի 19-ը, ժամը 17:00 աճուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ ք. Երեւան Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/) ներկայացրել.

-աճուրդի նախավճարի մուծման անդորագիրը, որի չափն է՝ 71550դրամ, մուտագրման հաշիվն է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի թիվ 160006651014 դրամային հաշիվը.

-աճուրդի մասնակցության վճարի անդորագիրը, որի չափն է 10000 դրամ (վճարվում է «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ), գույքի գնի մեջ չի ներառվում եւ անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում.

-անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Աճուրդի մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է: Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Դիտորդի տոմսերը վաճառվում են մինչեւ աճուրդի սկսվելը: Աճուրդի մասնակիցները վաճառվող լոտին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00): Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, տրամադրում է քարտ: Աճուրդը վարում է աճուրդավարը: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հավելման (քայլի) չափով: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթած մասնակից:

Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող համարված մասնակիցը պարտավոր է՝ հանձնաժողովի ստանալուց 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդի մասնակցելու իրավունքից: Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնաժողովի ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը: Աճուրդում չհաղթող մասնակցին, մուծված նախավճարը վերադարձվում է վերջինիս դիմելուց հետո եռօրյա ժամկետում:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ք. Երեւան Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/ հասցեով՝կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 23-73-00, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

Հնարավոր փոփոխություններն ու լրացումները կհրապարակվեն այն ձեւով, ինչպես կատարվել է աճուրդի մասին սույն հրապարակային ծանուցումը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ՀԱՍՑԵՆ՝ Ք. ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 /4-ՐԴ ՀԱՐԿ/

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

I.«Հայշինանյութաո» հանրաքեռական մանրամասնաձախ միավորման «Երեւանի առեւտրական բազա» ՊՁ-ի լուծարումից հետո մնացած շարժական գույքը

N	Գույքի անվանումը	Շահ. տ/թ.	Քանակը (հատ)	Գնահատված արժեքը /դրամ/	30.11.07թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/	17.12.07թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/	03.01.08թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/	18.01.08թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/	04.02.08թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/
1	Հեռախոսի կաբել	1994	1	159740	17266	17266	17266	17266	17266
2	Մետաղյա կոնտեյներ	1985	1	599674	64809	64809	64809	64809	64809
3	Ցեռուցման խողովակաբար	1971	1	277797	30024	30024	30024	30024	30024
4	Փաքսածայնման հաստոց	1975	1	6378	693	693	693	693	693
5	Սղոցաերշանակ	1975	1	35251	3814	3814	3814	3814	3814
6	Տարողություն	1973	1	9080	985	985	985	985	985
7	Տարողություն	1973	1	11670	1265	1265	1265	1265	1265
8	Տարողություն	1973	1	11670	1265	1265	1265	1265	1265
9	Սառնարան բար	1985	1	2576	283	283	283	283	283
10	Կոնդիցիոներ	1980	1	38016	4113	4113	4113	4113	4113
11	Կոնդիցիոներ	1980	1	11970	1298	1298	1298	1298	1298
12	Բեռնասայլակ	1975	1	2136	235	235	235	235	235
13	Հեռուստացույց	1980	1	27459	2972	2972	2972	2972	2972
14	Ամբարձիչ դոկկաս	1983	1	1414	156	156	156	156	156
15	Պահարան մետաղյա	1983	1	3236	354	354	354	354	354
16	Օդաձգիչ	1984	1	2334	256	256	256	256	256
17	Նստահատիչ	1984	1	12284	1332	1332	1332	1332	1332
18	Ավտոկռունկ ՄԱԶ	1987	1	402118	43461	43461	43461	43461	43461
19	Գորկա	1976	1	4933	537	537	537	537	537
20	Նավթատար ԱՄ ԳԱԶ 52 87-10 ԱՊԲ	1984	1	231126	24981	24981	24981	24981	24981
21	Նավթատար ԱՄ ԳԱԶ 52 07-46 ԱՊԲ	1984	1	180791	19540	19540	19540	19540	19540
22	Նավթատար ԱՄ ԳԱԶ 52 58-32 ԱՊԲ	1983	1	213782	23107	23107	23107	23107	23107
23	Բեռնատար ԻՖԱ 60 12-29 ԱՊԲ	1989	1	285000	30803	30803	30803	30803	30803
24	Մետաղի ջարդոն		1.5տ	9000	976	976	976	976	976

II.«Հայշինանյութաո» հանրաքեռական մանրամասնաձախ միավորման «Երեւանի առեւտրական բազա» ՊՁ-ի լուծարումից հետո մնացած շարժական գույքը/տաղավարները/

N	Գույքի անվանումը	հասցեն	Շահ. տարին	Քանակը (հատ)	մակերեսը մ.մ	Գնահատված արժեքը /դրամ/	30.11.07թ.
1	Տաղավար ՊԿ-2	ք.Երեւան,Արին-Բերդի5-դ նրբանցք	1985	1	60	1587540	1587540
2	Տաղավար «Առարատ»	ք.Երեւան,Աթոյան փ.146	1976	1	60	232960	232960

Աճուրդները կանցկացվեն դասական (գնի ավելացման) եղանակով:

Բոլոր աճուրդները սկսվում են ժամը 11-ին «Աճուրդի կենտրոն» ոչտեսական ոչ առեւտրային կազմակերպությունում (հասցեն՝ ք.Երեւան,Դ.Անհաղթի 23): Տվյալ լոտ(եր)ի աճուրդը կայանալու դեպքում հաջորդ աճուրդ(ներ)ը չի (չեն) անցկացվում:

Աճուրդին կարող են մասնակցել մասնակցության իրավունք ձեռք բերած մասնավորեցման սուբյեկտները կամ նրանց կողմից լիազորված անձինք:

Աճուրդին մասնակցելու իրավունք են ձեռք բերում մասնավորեցման այն սուբյեկտները, որոնք յուրաքանչյուր աճուրդի համար մինչեւ աճուրդի նախորդող աշխատանքային օրը, ժամը 17:00 աճուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ ք. Երեւան Դ.Անհաղթի 23) ներկայացրել.

- աճուրդի մասնակցության հայտը,
- աճուրդի մասնակցության վճարի անդորագիրը՝ մասնակցության վճարի չափն է՝ առաջին աճուրդի համար 80 դրամ, երկրորդ աճուրդի համար 45520 դրամ, մուտագրման հաշիվն է՝ թիվ 1 տեղական գանձապետական բաժանմունքի աճուրդի մասնակցության նախավճարի դրամային թիվ 900013145025 հաշիվը,
- իրավաբանական անձինք ներկայացնում են հիմնադիր փաստաթղթերի պատճենները:

Մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է: Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին տրամադրում է քարտ: Աճուրդը անցկացնում է աճուրդավարը, որը հրապարակում է վաճառվող գույքը բնութագրող ցուցանիշները, գույքի մեկնարկային գինը, աճուրդային քայլի չափը: Աճուրդի մասնակիցը բարձրացնում է իր տոմսին համապատասխանող համարը, որով տպիս է իր համաձայնությունը հայտարարված գնով գույքը ձեռք բերելու մասին: Յուրաքանչյուր գնող կարող է գույքի գինն ավելացնել մեկ կամ մեկից ավելի քայլերով կամ քայլի չափից ոչ պակաս գումարով: Աճուրդավարը աճուրդը շարունակում է այնքան ժամանակ, հանի դեռ չի մնացել առավելագույն գին առաջարկած մեկ թեկնածու: Գույքի առավելագույն արժեքն առաջարկած թեկնածուն, աճուրդավարի կողմից առաջարկված գինը 3-րդ անգամ հայտարարելուց հետո, հաստատվում է աճուրդի հաղթող եւ պարտավոր է 30 րոպեի ընթացքում ներկայացնել մասնակցի տոմսն ու վճարել իր առաջարկած գնի առնվազն 5 տոկոսի չափով գումար եւ ստորագրել աճուրդի մասին արձանագրությունը: Վերը նշված պարտավորությունները չկատարելու դեպքում նրա մուտքած մասնակցության վճարը չի վերադարձվում եւ նա զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից ու դուրս է հրավիրվում դահլիճից: Այդ դեպքում գույքի աճուրդը վերսկսվում է մեկնարկային գնից:

Աճուրդի մասին արձանագրությունը ստորագրելուց հետո, որպես աճուրդում հաղթող ճանաչված մասնակից, նրան տվյալ է վճարման հանձնարարագիր՝ մնացած վճարման ենթակա գումարը սահմանված ժամկետում՝ 10 օրվա ընթացքում վճարելու համար: Սահմանված ժամկետում նշված վճարումը չկատարելու դեպքում իր կողմից վճարած մասնակցության վճարը եւ իր առաջարկած գնի առնվազն 5%-ի չափով գումարը հետ չի վերադարձվում, իսկ աճուրդը համարվում է չկայացած:

Գույքը գտնվում է ընկերության տարածքում: Վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով: Լրացուցիչ տեղեկությունների համար (յուրաքանչյուր աճուրդի նախավճարի չափի մասին) կարող եք դիմել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպություն, զանգահարել 23-73-00 հեռախոսահամարով, ինտերնետ՝ URL: //www.privatization.am: Հնարավոր փոփոխությունների ու լրացումների մասին տեղեկատվությունը կհրապարակվի այն ձեւով, ինչպես կատարվել է աճուրդների մասին սույն հրապարակային ծանուցումը:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ 2007Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ, Ք.ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 /4-ՐԴ ՀԱՐԿ/ ՀԱՍՑԵՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի թիվ 1014-Ն որոշման, «Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-անը ամրացված գույքից հետ վերցված օտարման ենթակա շենք-շինություններ

Հ/Հ	Գույքի անվանումը	Գնահատված արժեքը 12.06.07թ. դրությամբ /դրամ/	Մեկնարկային գին /դրամ/	Նախավճարի չափը /դրամ/
1	ՀՀ Արարատի մարզի Դարբնիկ գյուղում գտնվող 2886.05մ.մ. ընդհանուր մակերեսով շենք-շինությունները (բացառությամբ հանրակացարանային մասնաշենքի, էլեկտրական ենթակայանի եւ կազմակերպության շենքերի, շինությունների օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի)	52528000	52528000	2626400

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի թիվ 1014-Ն որոշման՝
գնորդին է օտարվում նաեւ գույքի զբաղեցրած 1526.5 մ.մ. մակերեսով հողատարածքը կադաստրային արժեքով.
ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետը աճուրդի հաղթողի կողմից առաջարկված գնի վճարումից հետո մեկամսյա ժամկետում գնորդի հետ կնքում է առուվաճառքի պայմանագիր, դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված 540000 դրամ վճարը՝ (ներառյալ ավելացված արժեքի հարկը), ինչպես նաեւ գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված օրենքով սահմանված կարգով:

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ համայնքները, որոնք մինչեւ 2007թ. նոյեմբերի 15-ը, ժամը 17:00 աճուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ ք. Երեւան Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/) ներկայացրել.

-աճուրդի նախավճարի մուծման անդորագիրը, որի չափն է՝ 2626400 դրամ, մուտագրման հաշիվն է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի թիվ 160006651014 դրամային հաշիվը.
-աճուրդի մասնակցության վճարի անդորագիրը, որի չափն է 10000 դրամ (վճարվում է «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ), գույքի գնի մեջ չի ներառվում եւ անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում.
-անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Աճուրդի մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է: Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Դիտորդի տոմսերը վաճառվում են մինչեւ աճուրդի սկսվելը: Աճուրդի մասնակիցները վաճառվող լոտին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00): Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, տրամադրում է քարտ: Աճուրդը վարում է աճուրդավարը: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Տանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հավելման (քայլի) չափով: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթաց մասնակից:

Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող համարված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդի մասնակցելու իրավունքից: Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը: Աճուրդում չհաղթող մասնակցին, մուծված նախավճարը վերադարձվում է վերջինիս դիմելուց հետո եռօրյա ժամկետում:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ք. Երեւան Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/ հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 23-73-00, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

Հնարավոր փոփոխություններն ու լրացումները կհրապարակվեն այն ձեւով, ինչպես կատարվել է աճուրդի մասին սույն հրապարակային ծանուցումը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ԿՈՐԵԼ Է

«Ինֆոտենդեր» ՓԲԸ-ի պետ. ռեգիստրի թիվ 02Ա-049040 վկայականը (գրանցման համարը 264.120.05216), գրանցված 21.11.2000թվական: Համարել անվավեր:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

Հակասություն

Իսլամի ակտիվացումը եւ քաղաքականացումը

Ադրբեջանի հակահայկական զինանոցում առանձնահատուկ տեղ են գրավում իսլամական գործոնն օգտագործելու փորձերը: Անհնար է Ադրբեջանի հակահայկական ռազմավարության եւ դրա վրա հիմնված քաղաքականության մասին ամբողջական պատկերացում կազմել՝ առանց այդ գործոնը հաշվի առնելու եւ նկատի ունենալու իր նպատակների համար դա օգտագործելու Ադրբեջանի նկրտումները:

XX դարի 60-70-ական թվականներին տեղի ունեցավ իսլամի շեշտակի ակտիվացում, որը 1979 թ. Իրանի իսլամական հեղափոխությունից հետո վերածվեց իսլամական բումի: Տեղի ունեցավ իսլամի քաղաքականացում եւ քաղաքականության իսլամացում, որն ըստ էության նոր եւ իր նախադեպը չունեցող երեւույթ էր: Դա նոր իրադրություն ստեղծեց ոչ միայն իսլամական, այլեւ համայն աշխարհում:

Դրա արդյունքներից մեկը եղավ քաղաքական իսլամի ձեւավորումը՝ որպես նոր քաղաքական ֆենոմեն եւ քաղաքագիտական ուղղություն: Սակայն Իսլամի քաղաքականացումը չպետք է շփոթել իսլամի՝ որպես կրոնի գործառույթի հետ: Իսլամագիտությունը կրոնագիտություն է, որի ուսումնասիրության առարկան բուն կրոնն է, նրա սրբազան գիրը՝ Կորանը, մուսուլմանական իրավական նորմերը՝ շարիաթը, մազհաբները, սուննան, հադիսները եւ այլն: Մինչդեռ քաղաքական իսլամը քաղաքականության եւ քաղաքական գիտությունների մարզին է վերաբերում՝ որպես նրա մի նոր բնագավառ: Իսլամի քաղաքականացման կամ քաղաքական իսլամի տակ պետք է հասկանալ իսլամական երկրների պետական մարմինների, զանազան քաղաքական ու հասարակական ուժերի, կրոնական կազմակերպությունների, ինչպես նաեւ գործիչների կողմից իսլամական կրոնի դոգմաների եւ հիմնադրույթների օգտագործումը քաղաքական նպատակներով, իսլամի կողմից ինստիտուցիոնալ-կառուցվածքային եւ զուտ քաղաքական ֆունկցիաների իրականացում, իսլամի քաղաքական դերի աճ իսլամական երկրների քաղաքական եւ պետական կառույցների բնույթի սահմանման, իսլամական երկրների ներքին եւ արտաքին քաղաքականության հիմնարար սկզբունքների ձեւավորման գործում: Իսլամը մուսուլմանական երկրներում դառնում է քաղաքականության աղախին, որը, սակայն, առանձին դեպքերում ինքն է դառնում տիրուհի՝ քաղաքականությանը դարձնելով իր աղախինը:

Այդ տեղաշարժերի հետեւանքով XX դարի երկրորդ կեսին մեկը մյուսի հետեւից անկախություն նվաճած մուսուլմանական երկրներում իսլամը հայտարարվեց պետական կրոն եւ սկսվեց պետական կառույցների ու կառավարման համակարգի վերակառուցում իսլամական դոգմաներին խստիվ համաձայն: Մի շարք երկրներում, ինչպես Սաուդյան Արաբիան, Օմանի սուլթանությունը, Արաբական Միացյալ Էմիրությունների մեջ միավորված յոթը էմիրությունները (Աբու Դաբի, Աջման, Դուբայ, Ումմ ալ-Կայվայն, ալ-Ֆուջայրա, Շարջա, Ռաս ալ-Խայմա), Կատարը, Եմենը (մինչեւ 1962 թ.), Իրանը եւ այլն, հաստատվեց աստվածապետություն՝ թեոկրատիա, սկսվեց շարժում Կորանը իսլամական երկրների սահմանադրություն հռչակելու համար, ինչպես դա տեղի էր ունեցել Սաուդյան Արաբիայում: Իսկ մի շարք երկրների՝ Պակիստանի, Իրանի, Մավրիտանիայի պատմական անվանակոչության մեջ մտցվեց «իսլամ» բաղադրատարրը, եւ նրանք համապատասխանաբար վերանվանվեցին Պակիստանի Իսլամական Հանրապետության, Իրանի Իսլամական Հանրապետության, Մավրիտանիայի Իսլամական Հանրապետության: Բանը հասավ այնտեղ, որ Պակիստանի 1962 թ. սահմանադրական փաստաթղթում մտցվեց հատուկ կետ՝ «Համայն տիեզերքի վրա աստծո սուվերենիտետի» վերաբերյալ: Այդ տարիներին Ալլահին նման իրավություններով օժտելը բնավ էլ բացառություն չէր, որի վկայությունն է Լիբիական թագավորության 1951 թ. սահմանադրության մեջ տեղ գտած հետեւյալ պարբերությունը՝ «Սուվերենիտետը պատկանում է աստծուն: Կամոքն Ամենազոր Աստծո սուվերենիտետը հանձնվում է ազգին»:

Եվ եթե հաշվի առնենք, որ իսլամը ոչ միայն կրոն է, այլ կենսաձեւ, այդպեսաձեւ, որով սահմանվում են մուսուլմանի անգամ առօրյա կեցության կանոնները, պահվածքը, սովորույթները, ապա դժվար չէ կռահել, որ իսլամական երկրներում ըստ էության տեղի ունեցավ պետական, քաղաքական, հասարակական եւ սոցիալական կյանքի վերակառուցում վերեւից մինչեւ ներքեւ՝ իսլամի դոգմաների հիման վրա:

Այսպիսով, իսլամը պահպանելով իր նախաստեղծ, հին եւ ավանդական գործառույթը՝ մուսուլմանների կրոնաբարոյական-մշակութային պահանջների սպասարկումը եւ նրանց դասակարգային եւ գույքային-իրավական հարաբերությունների կարգավորումը, ձեռք բերեց նոր, զուտ քաղաքական գործառույթ: Պետությունը դառնում է հզոր գործիք հոգեւորականության ձեռքում , իսկ իսլամը՝ պետական-ինստիտուցիոնալ մեխանիզմի օրգանական մասը, եւ կարեւոր, անգամ վճռորոշ դերակատարում սանձնում քաղաքական ինստիտուտների բնույթի սահմանման, ներքին եւ արտաքին քաղաքականության սկզբունքների, գաղափարական ուղղվածության որոշման գործում:

Դրան պետք է հաջորդեր եւ, իրոք, հաջորդեց իսլամական երկրների ինտեգրացման գործընթացը, որն իրականացվում է իսլամական միջպետական կառավարական, հասարակական եւ կրոնական կազմակերպությունների մակարդակներով: Ինտեգրացման գործընթացն ընդգրկում է բոլոր ոլորտները: XX դարի երկրորդ կեսում ձեւավորվեցին եւ ստարեզ իջան տարբնույթ իսլամական կազմակերպություններ, ինչպես Իսլամական համաշխարհային կոնգրեսը, Իսլամական աշխարհի լիգան, Աֆրո-ասիական իսլամական կազմակերպությունը, Եվրոպայի իսլամական խորհուրդը, Զարգացման իսլամական բանկը, Իսլամական բանկերի միջազգային ասոցիացիան, Գիտատեխնիկական զարգացման իսլամական ֆոնդը, Իսլամական արվեստի եւ մշակույթի ուսումնասիրության կենտրոնը, Առեւտրի զարգացման իսլամական կենտրոնը, Իսլամական մայրաքաղաքների կազմակերպությունը, Նորությունների իսլամական գործակալությունը, Երուսաղեմի ֆոնդը եւ այլն, եւ այլն: Դրանց շարքում գործում են կենտրոնացված իսլամական մեկ երկրում, այլ տեղակայված են մուսուլմանական տարբեր երկրներում՝ Սաուդյան Արաբիայում, Թուրքիայում, Մարոկկոյում, Բանգլադեշում, Եգիպտոսում, Պակիստանում, Ինդոնեզիայում, Մալայզիայում եւ այլն:

Խոսելով իսլամական երկրների ինտեգրացման մասին, հարկ է նշել, որ առայժմ հարց չի դրվում իսլամական բոլոր երկրները միավորել մեկ միասնական համաիսլամական պետության մեջ: Համենայն դեպս, հրապարակավ այդ մասին չի խոսվում, թեեւ կան մուսուլմանական մոլեռանդ գործիչներ եւ կազմակերպություններ, ինչպես «մուսուլման եղբայրները», որոնք փայփայում են համաիսլամական պետությունը՝ խալիֆայության տեսքով, վերականգնելու գաղափարը:

Իսլամի ակտիվացման եւ քաղաքականացման արդյունքում ձեւավորվեց միջազգային հարաբերությունների մի նոր տեսակ, որը հիմնված է իսլամական սկզբունքների վրա: Իսլամական բոլոր երկրները միջիսլամական միջպետական հարաբերությունները հռչակել իրենց արտաքին քաղաքականության առանձնահատուկ բնագավառ, որն առաջնային է մնացած բոլոր բնագավառների նկատմամբ: Եվ հիմա մենք արդեն կարող ենք խոսել իսլամի գլոբալ քաղաքականության, ընդհանուր ստրատեգիայի, նրա հիմնարար սկզբունքների եւ վերջնական նպատակների մասին:

Մեր ուսումնասիրությունները, հիմնված իսլամական երկրների եւ զանազան կազմակերպությունների պատմական փաստաթղթերի, ուղեմատների՝ իսլամական աստվածաբանների աշխատությունների եւ հայտարարությունների վերլուծության վրա, մեզ հիմք տվեց դեռեւս 1980-ական թվականների վերջերին առաջ քաշել եւ հիմնավորել «իսլամի գլոբալ ստրատեգիայի» վերաբերյալ տեսակետը, սահմանելով դրա հիմնարար սկզբունքները եւ վերջնական ստրատեգիական նպատակները: Իսլամի գլոբալ ստրատեգիան խարսխված է երեք հիմնարար սկզբունքների՝ ա) մարդագրական գործոնի, իսլամ դավանող ժողովրդների առաջագնա ծննդաբերության եւ աճի, բ) իսլամական երկրների քաղաքական, տնտեսական ներուժի եւ ինտեգրացման եւ գ) «իսլամական ազգի» տեսության վրա, ըստ որի, բոլոր այն ժողովուրդները եւ ազգերը , որոնք դավանում են իսլամ, կազմում են մեկ միասնական՝ իսլամական ազգ:

Իսկ ինչ վերաբերում է իսլամական գլոբալ ստրատեգիայի վերջնական նպատակին, ապա դրա նպատակն է հասնել ուժերի ներկա հավասարակշռության փոփոխմանը հօգուտ մուսուլմանական պետությունների, վերականգնել նրանց երբեմնի փառքը եւ տիրապետող դիրքեր հաստատել ամբողջ աշխարհում:

Համաիսլամական կազմակերպության

Համաիսլամական կազմակերպությունների շարքում, որի մասին խոսվեց վերեւում, առանձնահատուկ տեղ է գրավում Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը (ԻԿԿ): Դա համաիսլամական ամենակարեւոր քաղաքական միջպետական կազմակերպությունն է, որը հիմնվել է 1969 թ. սեպտեմբերի 25-ին Մարոկկոյի մայրաքաղաք Ռաբաթում կայացած հիմնադիր ժողովում, որին մասնակցում էին 25 մուսուլմանական երկրների թագավորներ, պրեզիդենտներ եւ կառավարությունների ղեկավարներ: ԻԿԿ-ի ստեղծման եւ գործունեության գլխավոր ոգեշնչողը Սաուդյան Արաբիան է, իսլամական պահպանողականության անառիկ ամրոցը: ԻԿԿ-ն փաստորեն իսլամական աշխարհի գլխավոր քաղաքական կազմակերպությունն է, որը կանխագծում եւ իրականացնում է իսլամական աշխարհի քաղաքականության գլխավոր ուղղությունները, ստրատեգիայի եւ տակտիկայի հարցերը: Նրա բարձրագույն մարմինը իսլամական անդամ երկրների պետությունների ղեկավարների գագաթաժողովն է (Summit): ԻԿԿ-ն ունի իր կանոնադրությունը, տարբեր մարմինները, որոնց մեջ պետության ղեկավարների գագաթաժողովից հետո ամենակարեւորը անդամ-երկրների արտաքին գործերի նախարարների կոնֆերանսը եւ Գլխավոր քարտուղարությունն է: Նրա աշխատանքները գլխավորում է գլխավոր քարտուղարը: 2005 թ. այդ պատասխանը զբաղեցնում է Թուրքիայի ներկայացուցիչ , պրոֆեսոր Էքմելեդդին Իհսանօղլուն: ԻԿԿ-ի մշտական նստավայրը գտնվում է Սաուդյան Արաբիայի Ջիդդա քաղաքում: Այժմ նրա շարքերում միավորված է Ասիայի, Աֆրիկայի եւ Եվրոպայի 57 իսլամական պետություն եւ ԻԿԿ-ն իր անդամների քանակով աշխարհում երկրորդ միջազգային կազմակերպությունն է՝ Միավորված ազգերի կազմակերպությունից հետո:

ԻԿԿ-ի գլխավոր նպատակներից է, ինչպես ամրագրված է նրա կանոնադրության մեջ, «Օժանդակել անդամ-պետությունների համաիսլամական համերաշխությանը, ամրապնդել համագործակցությունն անդամ-պետությունների միջեւ տնտեսական, սոցիալական, մշակութային, գիտական եւ այլ կենսականորեն անհրաժեշտ բնագավառներում, եւ կոնսուլտացիաների անցկացումն անդամ-երկրների հետ միջազգային կազմակերպություններում»:

ԻԿԿ-ն պաշտպանում է ջիհադի գաղափարը եւ նրա կիրառումը մուսուլմանական երկրների կողմից, ինչպես դա տեղի ունեցավ 1981 թ. Աֆղանստանի պարագայում, գտնելով, որ նրա ժողովուրդը սրբազան պատերազմ է մղում խորհրդային Միության դեմ:

Սկզբունքային նշանակություն ունի Իսլամական պետությունների ղեկավարների՝ Մեքքայում 1981 թ. կայացած երրորդ գագաթնաժողովում ընդունված դեկլարացիան, որտեղ տրված է «իսլամական ազգի» սահմանումը: Համաձայն դրա՝ «Բոլոր մուսուլմանները, անկախ նրանց քաղաքացիությունից ըստ լեզվի, գույնի եւ բնակության վայրի, կազմում են մեկ ազգ, որոնք կապված են միմյանց հետ միեւնույն հավատով, շարժվում են միեւնույն ուղղությամբ, սերում են միեւնույն մշակութային ժառանգությունից, եւ իրացնում են մեկ առաքելություն ամբողջ աշխարհում: Այսպիսով՝ նրանք կանգնած են որպես չափավորող (զսպող) ազգ, մերժում են միանալ որեւէ բլոկի կամ բոլոր բլոկներին եւ գաղափարախոսություններին, ամոր կերպով մերժում են անձնատուր լինել բաժանարար ազդեցություններին եւ կամ շահերի բախումներին»:

Ահա այսպիսին էր մուսուլմանական աշխարհում տիրապետող իրադրությունը եւ զարգացման միտումները սառը պատերազմի ավարտի եւ խորհրդային Միության տրոհման ու վերացման նախօրյակին:



Ադրբեջանի անդամակցությունը ԻԿԿ-ին եւ նրա հակայկական քաղաքականությունը այդ կազմակերպության հիմնադրույթների համատեքստում

Երբ փլուզվեց Խորհրդային Միությունը եւ 1991 թ. Ադրբեջանն հռչակեց իր անկախությունը, նրա առջեւ բացվեց մուսուլմանական աշխարհին եւ համամուսլմանական տարբեր կառույցներին ինտեգրվելու կամ չմիանալու հնարավորությունն ու հեռանկարը: Բայց, ինչպես շուտով պարզվեց, Ադրբեջանի համար նման դիլեմա գոյություն չուներ: Նա 1991 թ., անկախություն հռչակումից ետ չանցած, անմիջապես ցանկ կազմեց տասնամյակներ շարունակ քարոզվող աթեիզմից եւ խորհրդային-կոմունիստական արժեքներից իսլամի գիրկը եւ անդամակցեց ամենակարեւոր մուսուլմանական կառույցին՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպությանը, դառնալով նրա 45-րդ անդամը: Ադրբեջանն առաջինը նախկին խորհրդային, այսպես կոչված, իսլամական հանրապետություններից միացավ ԻԿԿ-ին: Շուտով նրան հետեւեցին մյուս իսլամական հանրապետությունները: 1992 թ. ԻԿԿ-ին անդամակցեցին Կիրգիզստանը, Տաջիկստանը եւ Թուրքմենիան, իսկ 1995 թ.՝ Ղազախստանը եւ Ուզբեկստանը:

Այսպիսով, խորհրդային Միության կործանումից հետո չորս տարի էլ չանցած Կենտրոնական Ասիայի բոլոր հինգ եւ Անդրկովկասի միակ իսլամաբնակ հանրապետությունը՝ Ադրբեջանը,

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

դարձան ԻԿԿ-ի լիիրավ անդամ, որը նրանց առջեւ լայնորեն բացում էր իսլամական աշխարհի, նրա բոլոր կառույցների, կենտրոնների, ֆոնդերի եւ միություններ դռները: Եվ վերոնշյալ հանրապետությունները հաճույքով այդ դռներից ներս մտան:

Դա նշանակում էր, որ Ադրբեջանը եւ Կենտրոնական Ասիայի մյուս հինգ հանրապետությունները լիովին ընդունում էին ԻԿԿ-ի հիմնարար սկզբունքները, կանոնադրական պահանջները, միանում նրա բոլոր հռչակագրերին եւ որոշումներին ու իրենց վրա պարտականություն վերցնում դրանց կատարման վերաբերյալ: Դա նշանակում էր նաեւ, որ նրանց համար ընդունելի էր «իսլամական ազգի» տեսադրույթը, որը հասարվում է առանցքային ԻԿԿ-ի եւ ժամանակակից իսլամական աշխարհի արժեքային համակարգում:

Բավական շատ շուտ հասկացան ԻԿԿ-ն եւ այլ համաիսլամական կառույցներն Ադրբեջանի շահերի համար օգտագործելու ու նրա ագրեսիվ ծավալապաշտական քաղաքականության համար իրագործելու կարեւորությունը եւ անհրաժեշտությունը: Սակայն հարկ է նշել, որ ԻԿԿ-ին անդամակցելու սկզբնական շրջանում Ադրբեջանի ղեկավարությունը չկարողացավ ակտիվ գործունեություն ծավալել նրա շրջանակներում: Դա բացատրվում է Ադրբեջանում տիրող քաղաքական անկայունությամբ, իշխանության համար մղվող սուր պայքարով, որը հնարավորություն չէր տալիս ղեկավարությանն կենտրոնանալ այլ խնդիրների վրա: Բավական է նշել, որ շատ կարճ ժամանակամիջոցում Ադրբեջանի պրեզիդենտի պաշտոնում մեկը մյուսին փոխարինեց երեք մարդ: Իրադրությունը փոխվեց, երբ խորամանկությամբ եւ զանազան հնարանքներով կարողացավ իշխանությունը զավթել Ադրբեջանի ՊԱԿ-ի նախկին ղեկավար, Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի նախկին առաջին քարտուղար Հեյդար Ալիեւը:

Շարունակությունը՝ էջ 2

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Հակամարտություն

Ե էջից

Նա շատ ակտիվ էր գործում բոլոր ուղղություններով, խստություն չդնելով միջոցների մեջ, լայնորեն օգտագործելով նաեւ կեղծիքը եւ ապատեղեկատվությունը: Նա իր ուշադրության կենտրոնում պահեց նաեւ Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը, փորձելով այդ հեղինակավոր կառույցն օգտագործել իր նպատակների համար: Նա նախ եւ առաջ ձգտում էր ակտիվ գործողությունների միջոցով ամրապնդել Ադրբեջանի դիրքերը ԻԿԿ-ում եւ բարձրացնել նրա դերակատարումը: Զուգահեռաբար նա շատ ակտիվ էր ԻԿԿ-ն հակահայկական նպատակներով օգտագործելու հարցում: Եվ դա հաջողվում էր նրան:

1996 թ. հոկտեմբերի 16-18-ը ԻԿԿ-ի նախաձեռնությամբ եւ մի շարք այլ իսլամական ֆոնդերի աջակցությամբ Բաքվում կայացավ Ադրբեջանի փախստականների հարցին նվիրված առաջին միջազգային կոնֆերանսը: Հեյդար Ալիեւը նման առիթը բաց չթողեց ամենամռայլ գույներով ներկայացնելու իրավիճակը եւ վարկաբեկելու հայերին եւ Հայաստանին: Նա խոսեց մեկ միլիոն ադրբեջանցի գաղթականների՝ հայերի ագրեսիայի զոհերի ծանր վիճակի մասին, որոնք ըստ նրա հաղորդման կենտրոնացվել էին 58 ճամբարներում: Տպավորություն գործելու նպատակով, Բաքվի իշխանությունները կազմակերպեցին կոնֆերանսի մասնակից պետությունների պատվիրակությունների այցելություն գաղթականների ճամբար: Իսկ Հեյդար Ալիեւը, օգտվելով առիթից, միաժամանակ դիմեց մասնակիցներին՝ նյութական լայն օգնություն ցույց տալ հայկական «ագրեսիայի» զոհ ադրբեջանցի փախստականներին:

Կոնֆերանսն ընդունեց բանաձեւ, որն ամբողջությամբ ադրբեջանանպաստ էր: Նրանում նշվում էր, որ անհրաժեշտ է աշխարհին ավելի հանգամանորեն տեղյակ պահել ադրբեջանցի գաղթականների մասին, աղաղակել միջազգային օգնություն նրանց դրությունը բարելավելու համար եւ Բաքվում հիմնել Մշտական Քարտուղարություն:

Բաքվում այդ կոնֆերանսի գումարումը եւ նրա ընդունած որոշումները համարվեցին ադրբեջանական դիվանագիտության փայլուն հաղթանակ, որը, ըստ ադրբեջանական քաղաքագետների, նշանակալի հարված էր Հայաստանի հեղինակությանը:

Ընդհանրապես նման հանդիպումների ժամանակ Ադրբեջանի ներկայացուցիչները գործում էին նախօրոք մշակված սխեմայով: Նրանք նախ նշում էին փախստականների վերաբերյալ իրենց հորինած 1 մլն թվականը, այնուհետեւ հայկական ագրեսիայի մասին, որի զոհերն էին այդ 1 մլն ադրբեջանցիները, դիմում միջազգային կազմակերպությունների օգնությանը եւ, որը խիստ կարեւոր է, ոչ մի խոսք չէր ասվում հայ գաղթականների՝ Սումգայիթի, Բաքվի եւ Ադրբեջանի այլ վայրերի հայկական զոհերի մասին: Այլ կերպ ասած, Բաքվում եւ մոտակայքի այլ կենտրոններում գումարվող զանազան համաիսլամական ֆորումներն օգտագործվում էին որպես Հայաստանը վարկաբեկելու եւ նրան ագրեսոր ներկայացնելու ամենահարմար վայրը: Իսկ միջազգային կազմակերպությունները եւ զանազան կոնֆերանսների եւ սիմպոզիումների մասնակիցները, վայելելով ադրբեջանցիների ճոխ հյուրասիրությունը, «մոռացության էին» տալիս այնպիսի մի «մանրամ», ինչպես ադրբեջանական ագրեսիան Ղարաբաղի դեմ, հայերի ջարդերը Ադրբեջանում եւ նրանց արտաքսումը իրենց տներից ու բնակավայրերից:

Սակայն վերոնշյալ կոնֆերանսը միակը չէր, որ տեղի տեղի ունեցավ Բաքվում: 1998 թ. դեկտեմբերին Բաքվում անցկացվեց ԻԿԿ-ի եւս մեկ կարեւոր միջոցառում՝ «Ադրբեջանի պրեզիդենտ Հեյդար Ալիեւի բարձր հովանու ներքո»: Խոսքը «Իսլամական քաղաքակրթությունը եւ Կովկասը» թեմայով միջազգային սիմպոզիումի մասին է: Հեյդար Ալիեւը դեռեւս խորհրդային տարիներին, լինելով Ադրբեջանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար, ջանք չէր խնայում Ադրբեջանը որպես Անդրկովկասի մշակութային եւ գիտական հինավուրց կարեւոր կենտրոն ներկայացնելու համար, աղավաղելով եւ կեղծելով տարածաշրջանի բնիկների պատմությունը եւ մշակույթը, ադրբեջանցիների պատմությունն արհեստականորեն հնացնելով եւ հարուցանելով հարեւան ժողովուրդների պատմության եւ մշակույթի հաշվին: Նա այդ քաղաքականությունը տանում էր նաեւ հետխորհրդային շրջանում: Այդ սիմպոզիումը եւս նման մի փորձ էր: Սակայն նման մի համաժողովի հրավիրումը Բաքվում չէր սահմանափակվում միայն դրանով: Հեյդար Ալիեւը եւ նրա թիմակիցները սովորաբար նման հանդիպումներն օգտագործում էին հակահայկական նպատակներով: Անհասկանալի զույգների ժամանակ նրանք միշտ փորձում էին Հայաստանը ներկայացնել որպես ագրեսոր երկիր, իսկ Ադրբեջանին՝ անմեղ զոհ: Նրանք հույս ունեին այդ ճանապարհով թուլացնել Հայաստանի միջազգային դիրքերը, հասնել նրա քաղաքական եւ բարոյական մեկուսացմանը, միաժամանակ շահել այլ երկրների համակրանքը եւ աջակցությունը:

Այսպիսով՝ Հեյդար Ալիեւին հաջողվեց իշխանությունը գրավելուց հետո, երկու տարվա ընթացքում՝ 1996 եւ 1998 թթ., ԻԿԿ-ի երկու կարեւոր միջոցառում անցկացնել Բաքվում եւ դառնալ իսլամական այդ կազմակերպության միջոցառումների կարեւոր նստավայր մուսուլմանական մյուս երկրների մայրաքաղաքների կողքին:

Հեյդար Ալիեւը ԻԿԿ-ն Ադրբեջանի շահերի համար օգտագործելու իր քաղաքականության մեջ մեծ տեղ էր հատկացնում անձնական շփումներին: Նա 1997 թ. մայիսի 9-ին այցելեց ԻԿԿ-ի կարեւոր ենթակառույցներից մեկը՝ ԻԿԿ-ի Իսլամական պատմության, արվեստի եւ մշակույթի կենտրոնը, որը գտնվում է Ստամբուլում, որտեղ համաձայնություն ձեռք բերվեց այդ կենտրոնի եւ Ադրբեջանի համապատասխան հաստատությունների միջեւ համագործակցություն հաստատելու եւ ընդլայնելու վերաբերյալ: Հատկանշական է, որ համաձայնությունների շրջանակներում մշտապես շեշտվում էր պատմության հարցերի ուսումնասիրության եւ իսլամական ժառանգության պահպանման անհրաժեշտությունը, հարցեր, որոնք մշտապես խոցելի են եղել Ադրբեջանի պատմության համար:



Սակայն դրանք կարելի է դիտարկել որպես նախնական հաջողություններ: Հաջորդ տարիներին, երբ Հեյդար Ալիեւի դիրքերն ավելի էին ամրապնդվել եւ երբ արդեն կատարվել էր որոշակի նախնական աշխատանք եւ հաջողվել էր ԻԿԿ-ն ամբողջովին տրամադրել ի նպաստ Ադրբեջանի, Հեյդար Ալիեւը եւ նրան գահի վրա հաջորդած նրա որդին՝ Իլհամ Ալիեւը, ավելի համարձակորեն ու բացահայտորեն են գործում եւ կարողանում են ԻԿԿ-ի բարձրագույն մարմիններին՝ պետությունների ղեկավարների գագաթաժողովին եւ արտաքին գործերի նախարարների կոնֆերանսին, պարտադրել իրենց հակահայկական տեսակետները, որոնք համապատասխան արտացոլում էին գտնում այդ մարմինների կողմից ընդունված որոշումներում եւ բանաձեւերում: Դա շատ ակնհայտորեն է երեւում , երբ մենք ԻԿԿ-ի փաստաթղթերին ծանոթանում ենք ըստ ժամանակագրության:

Կարելի է ասել առաջին «ոռմբը» պայթեց 1999 թ., երբ Իսլամական կոնֆերանս կազմակերպության Արտաքին գործերի նախարարների՝ Բուրկինա Ֆասոյում կայացած կոնֆերանսը 1999 թ. հուլիսի 1-ին ընդունած բանաձեւում անդրադարձավ հայ-ադրբեջանական հարաբերություններին: Նրանում միակողմանիորեն ամբողջապես արտացոլում էր գտել ադրբեջանական տեսակետը: Ահա բանաձեւի այդ հատվածը. «Կոնֆերանսը վերահաստատում է իր ուժեղ աջակցությունը (strong support) Ադրբեջանի Հանրապետության կառավարությանը, որը Հայաստանի Հանրապետության ագրեսիայի առարկան է դարձել, ընդլայնելով սպառնալիքը ազերի ժողովրդի մշակութային եւ պատմական ժառանգությանը: Նա կոչ է անում Հայաստանին իր բոլոր զորքերը դուրս բերել Ադրբեջանի տարածքներից»: Հետաքրքիր է, որ այդ բանաձեւում, գտնե արտահայտ հավասարակշռությունը պահպանելու համար, ոչինչ չէր ասվում հայկական կողմի կորուստների, ադրբեջանական ագրեսիայի կամ հայ գաղթականների մասին:

Եթե ԻԿԿ-ի Արտաքին գործերի նախարարների վերոնշյալ կոնֆերանսն իր ընդունած բանաձեւում առանձին հատված էր հատկացրել հայ-ադրբեջանական հարաբերություններին եւ առկա կոնֆլիկտին, ապա 2003 թ. հոկտեմբերի 16-17-ը Մալայզիայում գումարված Տասներորդ իսլամական գագաթաժողովն ավելի հեռու գնաց: Նա ընդունեց առանձին, հատուկ բանաձեւ՝ «Ադրբեջանի դեմ Հայաստանի Հանրապետության ագրեսիայի մասին» խորագիր ներքո:

Այդ փաստաթուղթը շատ կարեւոր է Ադրբեջանի հակահայկական գործունեության ծավալները ԻԿԿ-ի շրջանակներում ճիշտ գնահատելու եւ դրա քաղաքական արդյունքների մասին հստակ պատկերացում կազմելու տեսանկյունից:

Դա կարեւոր է նաեւ ԻԿԿ-ի դիրքորոշման առումով: Իսլամական պետությունների ղեկավարների Տասներորդ գագաթաժողովում ընդունված բանաձեւն առաջին պաշտոնական փաստաթուղթն էր, որտեղ նրանք անդրադարձել էին ոչ թե առանձին հարցերի, այլ կոնֆլիկտին ամբողջությամբ: Հետեւաբար, դա հնարավորություն է տալիս ավելի ամբողջական գաղափար կազմելու ԻԿԿ-ի եւ նրա բարձրագույն մարմնի քաղաքականության մասին առաջին աղբյուրից:

Բանաձեւում ասված էր, որ Տասներորդ Իսլամական գագաթաժողովը՝

«ելնելով Իսլամական կոնֆերանս կազմակերպության Կանոնադրության սկզբունքներից եւ խնիրներից:

Լրջորեն մտահոգված է Ադրբեջանի Հանրապետության դեմ Հայաստանի Հանրապետության ագրեսիայով, որի արդյունքում օկուպացվել է ադրբեջանական տերիտորիայի ավելի քան 20%-ը:

Խորապես ցնցված է ավելի քան մեկ միլիոն ադրբեջանցի փախստականների եւ գաղթականների ողբալի վիճակով, որը հայկական ագրեսիայի արդյունք է:

Վերահաստատելով անդամ պետությունների հարգանքը Ադրբեջանի հանրապետության տարածքային, տերիտորիալ ամբողջականության եւ քաղաքական անկախության հանդեպ:

Նշելով նաեւ Հայաստանի Հանրապետության ագրեսիվ քաղաքականության աղակառուցողական ազդեցությունը խաղաղության գործընթացի վրա ԵԱՀԿ-ի շրջանակներում:

Նկատի առնելով Գլխավոր քարտուղարի զեկուցագիրը

1. Խստորեն դատապարտում է Ադրբեջանի Հանրապետության դեմ Հայաստանի հանրապետության ագրեսիան:

2. Համարում է Ադրբեջանի օկուպացված տարածքներում Ադրբեջանի քաղաքացիական բնակչության դեմ կիրառած գործողությունները որպես ոճրագործություն մարդկության դեմ:

3. Խստորեն դատապարտում է Ադրբեջանի գրավյալ տարածքներում հնագիտական մշակութային եւ կրոնական հուշարձանների կողոպուտը եւ ոչնչացումը»:

Այնուհետեւ մտահոգություն հայտնելով, որ Հայաստանը մինչեւ այժմ չի կատարել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համապատասխան որոշումները եւ խստորեն պահանջելով կիրառել դրանք, Տասներորդ գագաթաժողովի բանաձեւը

«Կոչ է անում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին ճանաչել ագրեսիայի առկայությունն Ադրբեջանի հանրապետության դեմ, ձեռք առնել համապատասխան քայլեր...

Պարտավորեցնում է բոլոր պետություններին ձեռնպահ մնալ Հայաստանին ռազմական զենք եւ զինամթերք մատակարարելուց, որը կարող է խրախուսել ագրեսորին՝ ընդլայնել կոնֆլիկտը եւ շարունակել Ադրբեջանի տարածքների օկուպացումը: Անդամ պետությունների տերիտորիան չպետք է օգտագործվի նման մատակարարումների տրանզիտի համար:

Կոչ է անում անդամ պետություններին, ինչպես նաեւ միջազգային հանրության մյուս անդամներին, կիրառել այնպիսի արդյունավետ քաղաքական եւ տնտեսական միջոցներ, որոնցով վերջ տրվի հայկական ագրեսիային եւ Ադրբեջանի տերիտորիայի օկուպացմանը»:

Բանաձեւը միաժամանակ կոչ էր անում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հակամարտությունը լուծել արդարացիորեն եւ խաղաղ ճանապարհով, սակայն տերիտորիալ ամբողջականության պահպանման եւ միջազգայնորեն ճանաչված սահմանների անխախտելիության սկզբունքների հիման վրա: Միաժամանակ բանաձեւը պարտավորեցնում էր ԻԿԿ-ի անդամ պետություններին, Իսլամական Զարգացման բանկին եւ այլ հաստատությունների՝ անհապաղ ֆինանսական եւ մարդասիրական օգնություն ցույց տալ Ադրբեջանին:

Այդ բանաձեւը կարելի է համարել հայ-ադրբեջանական հակամարտության վերաբերյալ ԻԿԿ-ի ընդունած որոշումների բարձրակետը: ԻԿԿ-ն մինչեւ այդ եւ դրանից հետո, երբեք առանձին կամ հատուկ նման մեծածավալ որոշում չի ընդունել: Բանաձեւն աչքի է ընկնում կոշտ բնութագրումներով, խիստ ձեւակերպումներով եւ տառապում է կողմնակալությամբ եւ անհաշտելի հակասության մեջ է գտնվում ճշմարտության հետ: Անվերապահորեն հիմք ընդունելով ադրբեջանական տեսակետը եւ բազմիցս կոչ անելով ԻԿԿ-ի անդամ պետություններին սատարել ԻԿԿ-ի մեկ այլ անդամ պետությանը՝ Ադրբեջանին, կամա թե ակամա, ԻԿԿ-ն տուրք է տվել կրոնական գործոնին, գլորվել է կրոնական դաշտը եւ հենց այդ դաշտում է փորձում համախմբել իսլամական բոլոր 57 պետություններին՝ ի պաշտպանություն Ադրբեջանի եւ ընդդեմ անհիմն կերպով ագրեսոր հայտարարված Հայաստանի:

Գագաթաժողովը կոչ անելով ոչ միայն անդամ պետություններին՝ այսինքն մուսուլմանական երկրներին, այլեւ միջազգային հանրության անդամ այլ երկրների, դադարեցնել զենքի մատակարարումը Հայաստանին եւ թույլ չտալ իրենց տարածքը այդ նպատակի համար որպես տրանզիտ օգտագործել, եւ կիրառել արդյունավետ քաղաքական եւ տնտեսական միջոցներ ընդդեմ Հայաստանի, որն իր արտացոլումն է գտել բանաձեւում, դրանով իսկ փորձ է անում Հայաստանի շուրջը ստեղծել շրջափակման երկրորդ գոտին, որը դիվային մի պահանջ է մարդասիրության անունից խոսող իսլամական երկրների թագավորների եւ պրեզիդենտների կողմից:

Բանաձեւի բովանդակությունը եւ ընդունված որոշումների բնույթը վկայում են այն հստակ կայծավալ նախապատրաստական աշխատանքի մասին, որ կատարել էին Ադրբեջանի ներկայացուցիչները, ինչպես ընդհանրապես ԻԿԿ-ի, նրա գլխավոր գործադիր մարմինների, այնպես էլ առանձին անդամ պետությունների հետ, եւ հաջողացրել էին նրանց բոլորին համոզել եւ նրանց համար ընդունելի դարձնել իրենց տեսակետները: Առանց նման նախնական աշխատանքի անհնար է նման բանաձեւի ընդունումը: Ադրբեջանին հաջողվեց Իսլամական կոնֆերանս կազմակերպության բանաձեւում ամրագրել Հայաստանի ագրեսոր լինելու եւ Ադրբեջանի անմեղ «գառնուկ» լինելու տարօրինակ վարկածը, փորձ արվեց Հայաստանին պատժելու գործում ներգրավել ՄԱԿ-ին եւ նրա Անվտանգության խորհրդին, կասկածանքի որոմ սերմանել Հայաստան-ԵԱՀԿ փոխհարաբերություններում՝ Հայաստանին ներկայացնելով որպես աղակայունացնող գործոն: Այդ բոլորն Ադրբեջանը, հարկավ, մտցնում է իր «հաղթանակների» ակտիվում: Կարելի է ասել, որ նա հաջողության հասավ նաեւ իր մյուս գլխավոր նպատակի ճանապարհին՝ անհրաժեշտ նյութական, ֆինանսական եւ մարդասիրական օգնություն ստանալ իսլամական բոլոր երկրներից եւ ֆինանսական կենտրոններից:

Դժվար չէ նկատել, որ այդ բանաձեւն իր մի շարք մասերով որոշակի վտանգ է ներկայացնում Հայաստանի հանրապետության ազգային անվտանգությանը եւ սխալ կլիներ անտեսել այդ փաստաթուղթը եւ նրանից բխող ապագա քայլերն ու գործողությունները:

Սակայն այդ բանաձեւը խարսխված է սխալ եւ կեղծ հիմնադրույթների, կարելի է ասել ավազի վրա: Կանցնեն տարիներ, դարաբաղյան կոնֆլիկտն էլ կլուծվի, ամեն ինչ իր տեղը կընկնի, սակայն այդ բանաձեւը պատմության մեջ կմնա որպես մի ամոթալի եւ խայտառակ փաստաթուղթ՝ հիմնված սուտ եւ a la Azerie կեղծիքի վրա:

Հեյդար Ալիեւի մահվանից եւ Իլհամ Ալիեւի «գահ» բարձրանալուց հետո, Ադրբեջանի իսլամական քաղաքականությունը ոչ միայն չթուլացավ, այլեւ ավելի ակտիվացավ: Ամեն ինչ վկայում է այն մասին, որ այդ հարցում Ադրբեջանի նոր նախագահը ոչ միայն իր հորը չէր զիջում, այլեւ որոշ հարցերում անգամ գերազանցում է նրան: Նա ավելի կարեւորեց իր հակահայկական քաղաքականության մեջ իսլամի գործոնի օգտագործումը, բնականաբար, առաջին հերթին Իսլամական կոնֆերանս կազմակերպության ներուժը: Դրա մասին են վկայում հետեւյալ փաստերը:

2005 թ. դեկտեմբերի 6-7-ը Մեքքայում գումարվեց երրորդ արտակարգ իսլամական գագաթաժողովը, որը հիանալի օգտագործեց Ադրբեջանն իր հակահայկական քաղաքականության մեջ: Կոնֆերանսի օրակարգն էր՝ «21-րդ դարի մարտահրավերներին դիմագրավելը»: Դա շատ կարեւոր հարց էր, որը հուզում էր եւ շարունակում է հուզել բոլորին, այդ թվում եւ համայն իսլամական աշխարհին, որի մասին կոնֆերանսի բացման ժամանակ խոսեց Սաուդյան Արաբիայի թագավոր Աբդալլահ իբն Աբդ Ալ-Ազիզը, ապա նաեւ Մալայզիայի վարչապետ Դաթո Սերի Աբդուլլահ բին Ահմադ Բադավին, ԻԿԿ-ի Գլխավոր քարտուղար էկմեկեդդին Իհսանօղլուն եւ ուրիշներ: Դրա կարեւորության մասին էր խոսում նաեւ այն հանգամանքը, որ այդ հարցը քննարկելու համար հրավիրվել էր արտակարգ կոնֆերանս՝ երրորդն ԻԿԿ-ի ամբողջ գոյության ընթացքում:

Կոնֆերանսն ընդունեց «Գործողությունների տասնամյա ծրագիր՝ դիմագրավելու մարտահրավերներին, որոնք սպասում են Իսլամական Ումմային (Հավատակցությանը կամ Ազգին-Ն.Հ.) 21-րդ դարում»: Դա, ըստ էության, ծրագրային փաստաթուղթ է:

Կոնֆերանսի բանաձեւի Քաղաքական բաժնում՝ Իրաքի, Պաղեստինի եւ Երուսաղեմի, սիրիական Գոլանի բարձունքների եւ արաբական այլ գրավյալ տարածքների ազատագրման, թուրք մուսուլման կիպրոսցիների եւ թուրքական Կիպրոսի, Սուդանի, Սոմալիի, Քաշմիրի, իսլամական համերաշխության, իսլամական ինքնության (Islamic identity) պահպանման եւ այլ հարցերի հետ միասին, որոնք համարվեցին ամենակարեւոր մարտահրավերները, առանձին ենթաբաժին էր հատկացված նաեւ Ադրբեջանի դեմ ուղղված այսպես կոչված «հայկական ագրեսիային»: Նրանում ասված էր. «Կոնֆերանսը կրկին դատապարտում է հայկական շարունակվող ագրեսիան Ադրբեջանի սուվերենության եւ նրա տարածքային ամբողջականության դեմ, եւ կոչ անում ամբողջական եւ առանց որեւէ պայմանի հեռացում Ադրբեջանի օկուպացված բոլոր տարածքներից»:

Շարունակությունը՝ էջ 5

Հակամարտություն

Ջ էջից

Իհարկե, նման բնութագրումը նորություն չէր: Բայց կարեւորն այստեղ այն էր, որ ԻԿԿ-ն, նրա բարձրագույն մարմինը հանդիսացող իսլամական պետությունների ղեկավարների գագաթաժողովը կրկին հավաստում էր իր դիրքորոշումը վերոհիշյալ կոնֆլիկտի նկատմամբ այն ժամանակ, երբ Հեյդար Ալիեւն այլեւս չկար եւ Ադրբեջանի պրեզիդենտն էր Իլհամ Ալիեւը: Դրանով այդ գագաթաժողովը ցանկանում էր ցույց տալ, որ Հեյդարի մահվանից հետո ԻԿԿ-ի դիրքորոշման մեջ «հայկական ագրեսիայի» հարցում փոփոխություն տեղի չի ունեցել եւ Իլհամը նույնպես կարող է աղավինել ԻԿԿ-ի աջակցությանը եւ ազատորեն գործել իսլամական հաղթական դաշտում: Մյուս կողմից, հարկ է ընդգծել, որ Ադրբեջանին հաջողվել էր Ադրբեջանի դեմ «հայկական ագրեսիայի» հարցը մցցնել 21-րդ դարի մարտահրավերներին Իսլամական Ումմայի դիմագրավելու տասնամյա ծրագրում: Իսկ դա նշանակում էր Ադրբեջանի համար աղահովել ԻԿԿ-ի եւ նրա անդամ պետությունների քաղաքական, տնտեսական, նյութական, ֆինանսական եւ բարոյական աջակցությունն ու օգնությունը: Նման պարագաներում, ունենալով այդպիսի թիկունք, Իլհամ Ալիեւն դառնում է ավելի անզիջող բանակցային գործընթացում, ամբարտավան, անկառավարելի եւ ռազմատենչ:

Փաստորեն այստեղ եւ այլ որոշումներում ԻԿԿ-ի մարմինները եւ բոլոր կառույցները, ղեկավարվելով իսլամական համերաշխության մղումներով, անվերապահորեն հալած յուղի տեղ էին ընդունում ադրբեջանական տեսակետները՝ տեղ չթողնելով այլ վարկածների կամ մոտեցումների համար: Ահա թե ինչու նման բանաձեւերը եւ որոշումները մեծ խանդավառություն էին առաջ բերում Բաքվում, իսկ Ադրբեջանի ղեկավարությունը տոնում էր իր հերթական դիվանագիտական եւ քաղաքական «հաղթանակը» Հայաստանի նկատմամբ:

Իլհամ Ալիեւը շարունակելով ԻԿԿ-ի հետ ավելի սերտորեն համագործակցելու եւ այդ համագործակցությունն ավելի ընդարձակելու ու բազմազան դարձնելու քաղաքականությունը, կարողացավ հասնել այն բանին, որ ԻԿԿ-ի Արտաքին գործերի նախարարների երեսուներեքերորդ կոնֆերանսը 2006 թ. հունիսի 19-21-ը գումարվեց Բաքվում: Դա արդեն լուրջ հաջողություն էր նրա իսլամական քաղաքականության մեջ, որը նա նույնպես օգտագործեց իր արտաքին այնքան մոտ հակահայկական քաղաքականության նպատակների համար:

Կոնֆերանսը բացեց Ադրբեջանի նախագահը: Նա շատ ակտիվ էր, փորձում էր հասնել քաղաքական գործչի եւ լիդեր դեր խաղալ, զանազան ուղիներով եւ մեթոդներով ուղղորդել կոնֆերանսի աշխատանքները:

Իհարկե, նա այլաթող չէր անում Հայաստանին զրպարտելու եւ բոլոր միջոցներով վարկաբեկելու խնդիրը: Բայց այս անգամ փորձեցին Հայաստանին հարված հասցնել այլ կողմից: Կոնֆերանսում քաղաքական, տնտեսական, ահաբեկչության եւ այլ հարցերի հետ միասին քննարկվեց եւ ընդունվեց բանաձեւ՝ «Իսլամական սրբատեղիների պահպանման մասին»: Այդ բանաձեւը հիմնականում վերաբերում էր չորս իսլամական հուշարձանների, որոնք, ինչպես նշված էր բանաձեւում, «քանդվում եւ կործանվում են»: Առաջինը վերաբերում էր Այոդայի Բաբրի մզկիթին Հնդկաստանում, երկրորդը Ջարար-է-Շարիֆ իսլամական համալիրին Քաշմիրում, երրորդը Իրաքին, իսկ չորրորդը՝«Իսլամական պատմական եւ մշակութային հուշարձաններին եւ գերեզմաններին Ադրբեջանի օկուպացված տարածքներում»: Չորրորդ մեղադրանքը վանդալիզմի եւ բարբարոսության մեջ հասցեագրված էր Հայաստանին եւ Լեռնային Ղարաբաղին, որոնք, իբրեւ թե, իրենց հսկողության տակ գտնվող տարածքներում կործանում են պատմական հուշարձանները եւ ավերում գերեզմանները: Մենք չգիտենք բանաձեւում թվարկված մյուս հուշարձանների վերաբերյալ տեղեկությունները որքանով են համապատասխանում իրականությանը: Բայց ինչ վերաբերում է գրավյալ տարածքներում «իրականացված» ադրբեջանական հուշարձանների կործանմանը, ապա դա, մեղմ ասած, չի համապատասխանում իրականությանը եւ ադրբեջանական կողմը չի կարող որեւէ փաստ բերել: ԻԿԿ Արտաքին գործերի նախարարության կոնֆերանսը ադրբեջանական տեսակետը հիմք ընդունելով, առանց սուգելու փաստերը, ներառել էր իր կողմից ընդունված բանաձեւում: Այսինքն, մենք տվյալ դեպքում դարձյալ գործ ունենք ադրբեջանական հերթական կեղծիքի հետ, որը բացի հայերին վարկաբեկելուց՝ նաեւ մեկ այլ կարեւոր նպատակ էլ էր հետապնդում:

Հայտնի է, որ ադրբեջանցիները 2006 թ. իրականացրին Հին Ջուղայի հայկական պատմական հուշարձանների, այդ թվում եւ խաչքարերի զանգվածային բարբարոսական ոչնչացում, որը բողոքի մեծ ալիք բարձրացրեց աշխարհում: Տարբեր երկրների մշավորականները, կրթված մարդիկ, մշակույթի գործիչներ, մշակութային կազմակերպություններ բողոքի ձայն բարձրացրեցին ադրբեջանցիների կիրառած վանդալիզմի դեմ, ջանալով հասնել այդ բարբարոսական գործողությունների դադարեցմանը, գտնե փրկել այն, ինչ կարելի էր փրկել: Հայաստանը պաշտոնապես բողոք հայտնեց եւ պահանջեց ՅՈՒՆԵՍԿՕ-ից՝ համապատասխան քայլերի դիմել եւ մասնագետներից կազմված հանձնաժողով ուղարկել Հին Ջուղա՝ տեղում եղեռնագործությունը սուգելու համար: Ցավոք սրտի ՅՈՒՆԵՍԿՕ-ն չկարողացավ օրերեսիվ կերպով գործել, իսկ Ադրբեջանը ընդհանրապես հրաժարվեց որեւէ պատվիրակության թույլ տալ մտնել Հին Ջուղա:

Եվ մինչ մենք՝ հայերս, զբաղված էինք այդ հարցերով, Իլհամ Ալիեւը, օգտագործելով ԻԿԿ-ի արտաքին գործերի նախարարների Բաքվում գումարված երեսուներեքերորդ նստաշրջանը, կարողացավ հասուկ բանաձեւ ընդունել տալ իսլամական պատմական եւ կրոնական հուշարձանների պահպանման վերաբերյալ, որտեղ առանձին կետ մցցվեց հայերի կողմից գրավյալ տարածքներում ադրբեջանական պատմական հուշարձանները եւ գերեզմանները «կործանելու» մասին:

Ոգեւորված կեղծիքի վրա հիմնված իր «հաջողություններով», Ադրբեջանի ղեկավարությունը թույլ էր տալիս նոր եւ ոչ պակաս կեղծիքներ, որոնք մարդկային սովորական տրամաբանության մեջ ոչ մի կերպ չի տեղավորվում: Դրա փայլուն ապացույցն է Բաքվի հաջորդ քայլը:

ԻԿԿ-ի արտաքին գործերի նախարարների 2006 թ. կոնֆերանսը, որը, ինչպես նշվել է, գումարվել էր Բաքվում, որոշում ընդունեց անցկացնել միջազգային կոնֆերանս՝ «Լրատվամիջոցների դերը հանդուրժողականության եւ փոխհասկացողության զարգացման գործում» թեմայով: Բաքուն անմիջապես նախաձեռնությունն իր ձեռքը վերցրեց եւ հասավ նրան, որ ԻԿԿ արտաքին գործերի նախարարների կոնֆերանսը որոշեց այդ նոր համաժողովը նույնպես անցկացնել Բաքվում: Եվ, իրոք, այդ համաժողովն ընթացավ Բաքվում 2007 թ. ապրիլի 26-28-ը: Կոնֆերանսին ներկա էին իսլամական 49 երկրների եւ 11 միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Կոնֆերանսում Ադրբեջանն երկու գլխավոր նպատակ էր հետապնդում: Առաջին՝ ապացուցել, որ նա միջազգային հարաբերություններում սանձնում է նոր, ավելի բարձր եւ կարեւոր դերակատարում: Այդ միտքը հստակորեն արտահայտվեց Իլհամ Ալիեւի ելույթում: Նա ուղղակի նշեց, որ «Ադրբեջանն ավելի ու ավելի է ակտիվ դեր կատարում միջազգային հարաբերություններում» եւ «ձգտում իր ներդրումն ունենալ հիմնախնդիրների լուծման գործում ոչ միայն տարածաշրջանում, այլեւ աշխարհում»:

Երկրորդ, ցույց տալ, որ Ադրբեջանը հանդիսանում է հանդուրժողականության կենտրոն եւ օրինակ, իսկ Հայաստանը՝ ագրեսոր եւ ցեղասպանության կազմակերպիչ: Այդ դժվարագույն եւ անաղարտելի խնդիրը դրված էր Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Էլմար Մամեդյարովի վրա, որը ներկայացրեց Ադրբեջանի տեսակետը քննարկվող հարցի վերաբերյալ: Եթե հավատալու լինենք Մամեդյարովին, ապա Ադրբեջանը մի իսկական դրախտավայր է ազգային բոլոր փոքրամասնությունների համար, հանդուրժողականության տիպար, որը կարող է դասեր տալ բոլորին, ոչ միայն տարածաշրջանի երկրներին, այլեւ աշխարհին: Ահա Ադրբեջանի արտաքին գործերի նախարարի կողմից կոնֆերանսին ներկայացված կեղծիքից եւ սախոսությունից հյուսված այդ մարգարտաշարը: Նախարարն առանց կարմրելու եւ քրտնելու կոնֆերանսի բարձր ամբիոնից հայտարարեց. «Ադրբեջանի պատմությունը հիմք է տալիս ասելու, որ Ադրբեջանը հանդուրժողականության օրինակ է: Ադրբեջանի կառավարությունը վարում է ազգային փոքրամասնություններին պաշտպանելու արդյունավետ քաղաքականություն: Մինչ Հայաստանը վարում է ագրեսիվ քաղաքականություն եւ ցեղասպանություն ընդդեմ ադրբեջանցիների, հայերն այժմ խաղաղ ապրում են Ադրբեջանում: Նրանք ունեն հավասար իրավունքներ եւ ոչ մի խտրականության չեն հանդիպում: Դա մեր կառավարության համամարդկային ընդհանուր արժեքների վրա հիմնված քաղաքականության կենդանի օրինակը կարող է լինել»: Մի երկիր, որտեղ հայերի եւ Ադրբեջանի մյուս ազգային փոքրամասնությունների ջարդերը, կոտորածները, բռնի տեղահանումները կրկնվում են պարբերաբար, որտեղ նման քաղաքականությունը փաստորեն բարձրացված է պետական քաղաքականության մակարդակի, իր արտաքին գործերի նախարարի բերանով, հանդգնում է ներկայանալ որպես հանդուրժողականության եւ ազգային փոքրամասնությունների պաշտպան, մի երկիր, որտեղ 1988-1990 թթ. իրականացվեց հայերի կոտորածը եւ զանգվածային բռնի տեղահանումը, որի արդյունքում գործնականում այնտեղ հայ չմնաց, մի երկիր, որն այդ բոլորից հետո հայտարարում է, թե «հայերը խաղաղ ապրում են Ադրբեջանում», նման երկրի ղեկավարությունը, կարծում ենք, որ մշավոր եւ հոգեկան խանգարումների հետ կապված լուրջ պրոբլեմներ ունի: Դրանք բժշկության հետ կապված հարցեր են, որտեղ պաշտպան անհերքելի փաստերը եւ պաշտությունը որպես գիտություն այլեւս անելիք չունեն:

ԻԿԿ-ի բանաձեւերում եւ որոշումներում, ինչպես տեսանք, մշտապես շեշտվում է «հայկական ագրեսիան», ադրբեջանական տարածքների «բռնագրավումը», Ադրբեջանի տերիտորիալ ամբողջականության պահպանումը եւ նրա միջազգայնորեն ճանաչված սահմանների անձեռնամխելիությունը: Այդ բոլորն ըստ էության ուղղված է նաեւ Լեռնային Ղարաբաղի եւ նրա ինքնորոշման իրավունքի ճանաչման դեմ, փորձ է անում գնով Ղարաբաղը պահպանել Ադրբեջանի տարածքում՝ Ադրբեջանի ենթակայության տակ: Այդ հարցում ԻԿԿ-ի դիրքորոշումը, բացառապես հիմնված Իսլամական կոնֆերանս կազմակերպության անդամ Ադրբեջանի տեսակետների եւ նրա քաղաքական շահերը պաշտպանելու վրա, հանդիսանում է Իսլամական կոնֆերանս կազմակերպության սկզբունքային բնույթի սխալներից մեկը: Պատահականություն չէ, որ ԻԿԿ-ի գլխավոր քարտուղար Էկմելեդդին Իհսանօղլուն (Թուրքիա) հատուկ հայտարարությամբ հանդես գալով այս տարվա օգոստոսին ԼՂՀ-ում կայացած պրեզիդենտական ընտրությունների կապակցությամբ, հայտարարեց, որ «ԻԿԿ-ն չի ճանաչում այսպես կոչված պրեզիդենտական ընտրությունները Լեռնային Ղարաբաղում»:

ԻԿԿ-ի դիրքորոշումն այդ հարցում անաչառ չէ, նա միակողմանիորեն հաշվի է առնում միայն Ադրբեջանի շահերը, ուստի եւ չի ծառայում տարածաշրջանում խաղաղության եւ կայունության հաստատմանը:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ Ադրբեջանի հակահայկական քաղաքականությունն Իսլամական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում խարսխված է իսլամական հիմնադրույթները, իսլամական համերաշխության գաղափարը իր շահերին ծառայեցնելու ծրագրի վրա, որի օգնությամբ Ադրբեջանը ձգտում է ղարաբաղյան հիմնախնդիրը լուծել իրեն ձեռնտու տարբերակով:

Այդ բոլորով հանդերձ, հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել մի կարեւոր հանգամանքի վրա: Չնայած այն իրողությանը, որ ԻԿԿ-ն, նրա տարբեր մարմինները եւ կառույցներն իրենց տարբեր համաժողովներում ընդունում են հակահայկական բանաձեւեր եւ որոշումներ, այդուհանդերձ, Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը հետեւողական չէ իր որոշումներն իրագործելու հարցում: Նրա ընդունած որոշումները շատ հաճախ մնում են հռչակագրեր եւ գործնական մարմնավորում չեն գտնում: ԻԿԿ-ի անդամ շատ երկրներ նորմալ, անգամ բարեկամական հարաբերություններ են պահպանում Հայաստանի Հանրապետության հետ, համագործակցում նրա հետ տնտեսական, կրթական, մշակութային, գիտական եւ այլ ոլորտներում: Դրա փայլուն օրինակներից են Հայաստանի բարեկամական հարաբերությունները Իրանի Իսլամական Հանրապետության, արաբական երկրների մեծամասնության հետ, ինչպես Լիբանանը, Սիրիան, Եգիպտոսը եւ այլն:

Այս իրողությունը հավանաբար կարելի է բացատրել նրանով, որ, առաջին՝ ԻԿԿ անդամ պետություններից շատերի ղեկավարությունը, պահպանելով հանդերձ իրենց հավատարմությունը իսլամական դոգմաներին եւ համերաշխության գաղափարին, այդուհանդերձ, քաղաքական իսլամի՝ այն էլ նրա ֆանատիկ տարբերակով, կողմնակից չեն, շատ լավ հասկանալով, որ դա իրենց համար լրացուցիչ շատ մեծ բարդություններ կարող է ստեղծել ժամանակակից աշխարհում:

Երկրորդ՝ մուսուլմանական բոլոր երկրները տիպաբանորեն պատկանում են զարգացող երկրների շարքին, իսկ նրանցից որոշ երկրներ անգամ դասվում են չզարգացած երկրների թվին: Մուսուլմանական բոլոր երկրների առջեւ կանգնած է տնտեսական հետամնացությունը հաղթահարելու եւ արդիական պետության վերածվելու ռազմավարական խնդիրը: Իսկ դա պահանջում է պրագմատիզմ, պրագմատիկ մոտեցում նրանց առջեւ կանգնած խնդիրների լուծման համար, որը նրանց համար ունի կենսական նշանակություն: Պրագմատիզմ է պահանջվում նաեւ ժամանակակից միջազգային բարդ հարաբերություններում ճիշտ կողմնորոշվելու համար: Եվ մուսուլմանական որոշ պետությունների ղեկավարներ հասկանում են դա եւ ցուցաբերում նման պրագմատիկ մոտեցում: Նրանցից շատերը, կողմ քվեարկելով ԻԿԿ-ում քննարկվող բանաձեւերին, այդ թվում եւ այնպիսիներին, որոնք ադրբեջանամոտ են, եւ դրանով ցուցադրելով իրենց իսլամական համերաշխությունը, միաժամանակ ձեռնպահ են մնում Հայաստանի հանրապետության դեմ ակտիվ, առավել եւս թշնամական գործողություններից, հասկանալով, որ ջիհադը աշխարհում առաջինը քրիստոնեությունը պետական կրոն հռչակած Հայաստանի դեմ անմտություն է եւ հղի ծանր հետեւանքներով:



Իհարկե, դա չի նշանակում, որ պետք է հանգստանալ եւ մոռացության տալ ԻԿԿ-ի կողմից ընդունվող վերոնշյալ փաստաթղթերը, որոնք ադրբեջանամոտ եւ հակահայկական ուղղվածություն ունեն եւ սպառնալիք են մեր ազգային անվտանգությանը: Դա աններելի սխալ կլիներ: Չպետք է նաեւ մոռանալ, որ մեր հարափոփոխ աշխարհում կարող է այնպիսի իրադրություն ստեղծվել, որ մուսուլմանական աշխարհում հայտնվեն ուժեր, որոնք կարող են նոր շունչ փչել այդ փաստաթղթերին, նրա դրույթներին, եւ այդ բոլորը դեկլարացիաների հարթությունից տեղափոխել գործնականության հարթություն, որի հետեւանքով վիրտուալ վտանգը կվերածվի իրականի: Հայաստանը պետք է պատրաստ լինի դրան եւ անակնկալի չգա:

Կարծում ենք, որ Հայաստանը բոլոր մակարդակներով՝ կառավարական, պառլամենտական, հասարակական, գիտական, մշակութային եւ այլն, մուսուլմանական պետությունների ղեկավարների, կրոնական գործիչների, մտավորականության, զանազան կազմակերպությունների ներկայացուցիչների հետ բանակցությունների, հանդիպումների կամ քննումների ժամանակ նորբ ձեւով պետք է անդրադառնա այդ հարցերին, պարզաբանի մեր դիրքորոշումը եւ մոտեցումները, բացահայտի ադրբեջանական կեղծիքը եւ այդ կերպ իսկությունը եւ ճշմարտությունը հասցնի իսլամական աշխարհին: Դա, իհարկե, պահանջում է երկարատեւ եւ համբերատար աշխատանք:

Դրանում իրենց արժանի ներդրումը կարող են ունենալ հայ մասնագետները՝ արեւելագետները, պատմաբանները, քաղաքագետները, փիլիսոփաները: Նրանք կարող են ուսումնասիրել այդ հարցերը, նախապատրաստել համապատասխան աշխատություններ, որոնք կարելի կլինի հրատարակել օտար լեզուներով եւ տարածել մուսուլմանական երկրներում:

Կարծում ենք, որ շահեկան կլիներ այդ հարցերը քննարկման առարկա դարձնել համաշխարհային միջազգային գիտաժողովներում եւ սիմպոզիումներում:

Նպատակահարմար է Երեւանի պետական համալսարանում բացել իսլամական ուսումնասիրությունների ամբիոն՝ իսլամագիտական հարցերը մասնագիտորեն եւ ոչ սիրողական մակարդակով ուսումնասիրելու համար: Նման ամբիոնը կարող էր կապեր հաստատել մուսուլմանական աշխարհի հայտնի իսլամագիտական կենտրոնների հետ, որը նույնպես կարող է ծառայել վերոնշյալ խնդիրներին:

Եվ, վերջապես, անհրաժեշտ է համապատասխան ջանքեր գործադրել Իսլամական կոնֆերանս կազմակերպությունում ունենալու Հայաստանի ներկայացուցիչ՝ դիտորդի կարգավիճակով: Հասկանալի է, որ դա դժվար խնդիր է, բայց ոչ անհնարին: Եվ բնավ էլ պարտադիր չէ, որ այդ դիտորդը հայ լինի: Այդ առաքելությունը կարող իր վրա վերցնել մուսուլմանական երկրի որեւէ ներկայացուցիչ, որն ընդունված կարգ է միջազգային հարաբերություններում: Ի վերջո, Հայաստանին հաջողվեց իր ներկայացուցիչն ունենալ Արաբական պետությունների լիգայում, որն իր շարքերում համախմբում է մոտ երկու տասնյակ պետություն, որոնք բոլորն էլ Իսլամական կոնֆերանս կազմակերպության անդամ են:

Անելիքներ շատ կան:

Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Հրապարակման ծանոթագրությունները տեղի սղության պատճառով չենք տեղադրել:

Իգնացի Լուկասիեւիչ

Ծննդյան 175-ամյակի առթիվ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԻՆԱՍՅԱՆ

Լեհահայ անվանի դեղագործ, գյուտարար, հասարակական-քաղաքական գործիչ, բարերար Իգնացի Յուզեֆի Լուկասիեւիչը ծնվել է 1822-ի մարտի 8-ին, միջին ունեցվածքի տեր հայի ընտանիքում: Եղել է Յուզեֆ եւ Ամալիա Սվիեցիկների 6-րդ զավակը: Հայտնի է նաեւ Իգնատի Լուկաշեւիչ անունով: 1832-36-ին սովորել է Ժեշովի քաղաքի գիմնազիայում: Հոր մահից հետո նյութական դժվարությունների պատճառով ուսումը ընդհատելով 1836-46-ին աշխատել է Լանցուտայի եւ Ժեշովի դեղատներում որպես դեղագործի օգնական: 1840-ին ինքնություն է հանձնել դեղագործի օգնական աշխատելու համար: 1837-ին անդամագրվել է «Լեհական ազգի համընդհանուր կոնֆեդերացիային»: 1840-ին, կապված հայրենասիրական գործունեության հետ, ենթարկվել է ոստիկանական հետաքննության: 1845-ին Լեհաստանում հեղաշրջման նախապատրաստության նպատակով աշխատել է հեղափոխական գործիչ Էդվարդ Դեմբովսկու հետ: Ազգային-ազատագրական շարժմանը մասնակցելու պատճառով 1846-47-ին բանտարկվել է Ժեշովի, ապա Լվովի բանտերում, սակայն ապացույցներ չլինելու պատճառով ազատ է արձակվել:

1848-ին վերադարձել է դեղագործի օգնականի իր նախկին աշխատանքին: 1850-ին ընդունվել է Կրակովի Յագելոնյան համալսարանի դեղագործական ֆակուլտետը, իսկ 1852-ին վաղաժամկետ ստացել Վիեննայի համալսարանի դեղագործի դիպլոմ: 1854-ին դեղատուն է վարձել Գոռլիցեում, որտեղ 1855-ի խոլերայի համաճարակի ժամանակ ցուցաբերելով արտասովոր անձնվիրություն, զբաղվել է հիվանդների բուժմամբ: 1857-ին, երբ ցանկացել է տեղափոխվել Յասլե, տեղի հրեաների խորհուրդը նրան առաջարկել է փոխհատուցել վարձակալած դեղատան վարձագումարը, որպեսզի նա մնա Գոռլիցեում եւ շարունակի բուժել մարդկանց: Հետագա ողջ կյանքում, ինչպիսի աշխատանք էլ աներ, մշտապես զբաղվել է մարդկանց բուժելու սրբազան գործով:

Լուկասիեւիչն աշխարհում կերոսինի արդյունաբերության հիմնադիրն է: 1852-ին սկսել է նավթի թորման աշխատանքները: 1853-ի հուլիսին Լվովում, հայ Պիոտր Միկոլասխայի դեղատան լաբորատորիայում, աշխարհում առաջին անգամ, նավթի ֆրակցիայից ստացել է կերոսին: 1853-ի հուլիսի 31-ին, սեփական նախագծով պատրաստած լամպը լիցքավորելով իր թորած կերոսինով, լուսավորել է Լվովի գավառային հիվանդանոցը, ինչը համարվում է այդ տարիների համաշխարհային տեխնիկայի նվաճումներից մեկը: Այդ լամպն այսօր ցուցադրվում է Լեհաստանի Կրոսնո քաղաքի թանգարանում: 1854-ին հարավ-արեւելյան Լեհաստանի Կրոսնոյի շրջանի Բուբրկա տեղանքում հորատել է առաջին նավթահորերը եւ կազմակերպել նավթի արդյունահանումը: 1862-ին. Եվրոպայում առաջինը կիրառել է հորատանցքի փորման ամերիկյան եղանակը: 1880-ին Գոռլիցեում հիմնել է Լեռնային արդյունաբերության աջակցման ու զարգացման նավթային ընկերությունը, որը 1882-ից հրատարակել է իր «Գոռնիկ» ամսագիրը:

1857-ին Իգնացին ամուսնացել է իր քրոջ դստեր, իրենից 15 տարով կրտսեր Հոնորատա Ստախերսկայի հետ: Լինելով մոտիկ ազգականներ, ամուսնության համար նրանք հատուկ թույլտվություն են ստացել պապից: 1865-ին գնել է Խորուվկայի կալվածքը, որտեղ Հոնորատան հիմնել է աղջիկների ժանեկագործության դպրոց, որը տարիներ անց հայտնի է դարձել իր բարձրորակ արտադրանքով:

1876-ին Լուկասիեւիչը եղել է Լվովի Ազգային սեյմի պատգամավորության թեկնածու:

Անխոնջ մշակը մինչեւ իր կյանքի վերջին օրերը շարունակել է գիտական պրպտումները, ակտիվորեն մասնակցել հասարակական եւ բարեգործական կազմակերպությունների աշխատանքներին: 1873-ին Վիեննայի համընդհանուր ցուցահանդեսում Լուկասիեւիչը արժանացել է միջազգային մեդալի:

1878-ին Կրակովում թողարկվել է Լեհաստանի նավթարդյունաբերության 25-ամյակին նվիրված հոբելյանական մեդալ, որի վրա պատկերված է Իգնացի Լուկասիեւիչի դիմանկարը: Այդ մեդալի մեկ օրինակը պահվում է Վիեննայի Մխիթարյան միաբանության թանգարանում:

Իգնացի Լուկասիեւիչը մահացել է 1882-ի դեկտեմբերի 7-ին Խորուվկայում: Թաղված է Զրեցինայի մոտակայքում, որտեղ ինքը մի եկեղեցի էր կառուցել:



Կրակովի դեղագործության թանգարանում պահվում են այս հանճարեղ հայորդուն պատկանած կահույքը, դիմանկարները, ձեռագրերը, հուշամեդալները: Նրան կոչել են մարդ, որը «լույս պոկեց հողից»: Լեհաստանի տարբեր քաղաքներում կան նրան նվիրված հիշարժան վայրեր, թանգարաններ, հուշարձաններ, հուշատախտակներ, մեդալներ, գրքեր, նամականիշներ եւ այլն: Նրա անունով է կոչվում Լեհաստանի Լոնժկու Օրդինացկում գտնվող դեղագործական դպրոցը:

Ա էջից

Գավառի հնագիտական անցուդարձը

նաեւ խմբային թաղումներ (բայց ոչ Դարի գլխից): Դամբարաններից կարելի է որոշել, թե սոցիալական ի՞նչ կարգավիճակ ունեցող անձի՞ք են հոտղարկավորվածները: Ավելի ցածր սոցիալական կարգավիճակ ունեցողները այլ դամբարաններում են թաղվել, սոցիալական ավելի բարձր կարգավիճակ ունեցողները, բնականաբար, ավելի ընդարձակ դամբարանային խցեր ունեին: Դրանք ամրոցների մոտ եղած դամբարաններ են. «Ցավոք՝ Դարի գլուխ դամբարանադաշտի բնակատեղին արդեն կառուցապատվել է, տվել է առանձին հողամասերի տեսքով եւ արդեն մեկ տասնյակ տարուց ավելի է, այնտեղ առանձնատներ են կառուցում: Ամրոցը պեղված չէ, եւ որ տեղեկատվական առաջ նյութ կհավաքվեր՝ ոչ մի կասկած չկա: Հիմա մենք փորձում ենք այն հատվածները պահպանել, որոնք դեռեւս անխաթար են եւ այդ հատվածներում այլեւս կառուցապատումներ չեն արվում: Կա հուշարձանների պահպանության գործակալությունը, որը բավական լավ հսկում է այս ամենը, պարզապես մենք ունենք համընդհանուր տգիտության-չկրթվածության մակարդակ, որ գտածը չենք հանձնում (խոսքը տնատերերի մասին է-Մ.Խ.), ուշադրություն չենք դարձնում, հանում-մի ինչ զբաղվում ենք՝ կոտրում- գցում ենք մի կողմ: Մեր պեղածների մի մասը հնագիտության ինստիտուտում են, զգալի մասը վերականգնված են, իսկ մի ամբողջ հավաքածու, մի ամբողջ սրահի նյութ, որ տարիներ պեղել ենք եւ վերականգնել ռեստավրատորի միջոցով՝ հանձնել ենք Գավառի երկրագիտական թանգարան», դիտարկում է գավառագետ-հնագետը:

Իսկ ինչպիսի արժեքավոր իրեր են հայտնաբերվե՞լ. մեր հարցը վերաբերում էր հնագիտական իրերի կոմերցիոն արժեքին. «Ինձ համար մի փոքրիկ անպաճույճ խեցին անգամ հնագիտական շատ մեծ արժեք ունի, իսկ ինչ վերաբերում է մշակութային առումով բարձր արժեքներին՝ ինձ համար շատ կարեւոր են Քանագեղի պեղումները՝ 5 կմ Երանոս չհասած, դեպի հյուսիս, հենց ճանապարհի եզրին, 1999-2003 թվականներին ենք պեղել», հարցն իր ուզած ուղղությամբ է տանում հնագետը: Քանագեղի պեղումների ժամանակ, հենց սոցիալական բարձր կարգավիճակ ունեցող դամբարանվածների հատվածում հայտնաբերվել են պերճանքի առարկա ձուլելու կաղապար, մեծ քանակով զենք: Հետաքրքրական է, որ խմբային թաղում պարունակող դամբարանում՝ որոշակի մարդկանց խումբ (ոչ միայն ընտանիքի անդամներ) զոհաբերվել են՝ հանգուցյալին անդրաշխարհում ուղեկցելու համար: Դա մոտավորապես մ.թ.ա. 15-րդ դարն է, այսինքն դա այն ժամանակահատվածն է, երբ Հայկական լեռնաշխարհում ձեւավորվեցին ցեղային միություններ: Հավանաբար արդեն Վելիկուխի երկիրը ձեւավորվել էր:

Պետությունը պեղման գումարներ տալի՞ս է, դրանք բավարա՞ր են գործն ավարտին հասցնելու համար, միջազգային գումարներն իրենց նպատակին ծառայո՞ւմ են: «Ինքս ղեկավարում եմ հայ-ռուսական համատեղ արշավախումբը, որը պեղումներ է կատարում Տաշիրի տարածքում, բայց քանի որ նրանք պալեոլիթյան հուշարձաններ են ուսումնասիրում, որոնք իմ հետաքրքրությունից հեռու են, ես հիմնականում կազմակերպչական եւ տեխնիկական աշխատանք եմ իրականացնում: Իսկ ինչ վերաբերում է միջազգային, ասենք, ամերիկյան արշավախմբերին՝ դրանք բավական կան Հայաստանում, որոշակի սկզբունքներից ելնելով ես նրանց հետ չեմ աշխատում: Ուղղակի նրանց դրած խնդիրները շատ ավելի կոնկրետ են՝ իրենց հետաքրքրում է նյութ, այդ նյութի կոնկրետ չափերը, իսկ մեկնաբանությունները կատարում են իրենք: Նրանք ունեն ներկայացնելու որոշակի սկզբունք՝ սա մարդու կողմից ստեղծված մշակույթ է, բայց թե մարդն ո՞վ է եղել, եւ կամ ո՞վ կարող էր լինել՝ էթնիկական, մարդաբանական մեկնաբանությունները, սա նրանց չի հետաքրքրում: Ինձ համար սկզբունք է՝ եթե նյութ ես պատրաստել, այդ նյութը ինչ-որ դիրքով դրված է դամբարանում, ուրեմն այդ նյութը դրել է մարդը, եւ էդ մարդն ինչ-որ բան մտածել է էդպես դնելու համար. իսկ ո՞վ է այդ մարդը, եթե նա անուն ունի, նրա ապրած երկիրն անուն ունի, եթե այդ երկրի տարածքում ձեւավորվել է մեր ժողովուրդը, որքանո՞վ է առնչվում մեր պատմությանն ու մշակույթին, որքանով է դա պահպանվել մեզ մոտ, սա է ինձ հետաքրքրում, նրանց՝ ոչ»:

Բայց մենք կարո՞ղ ենք փակ մնալ դրսի գիտության համար եւ դա չի՞ վնասում հենց մեզ՝ եւ գիտության զարգացման, եւ աշխարհին մեր տեսակետները լսելի դարձնելու առումով: Հնագետը կարծում է, որ մենք մեր աշխատությունները պետք է նաեւ անգլերեն հրատարակենք, եւ այդպես անում ենք: Եվ պատմեց մի նպատակի մասին. եթե փորձը եւ ժամանակ թույլ տա՝ կներկայացնի Գեղարքունիքի մարզի Սեւանի ավազանի հնագիտական, սոցիալ - մշակութային իրավիճակը մեր թվարկությունից առաջ 3-րդ-1-ին հազարամյակներում: Հետո նաեւ իր դոկտորական ատենախոսության նյութը կհրատարակի՝ «Հայկական լեռնաշխարհը Մերձավոր Արեւելքի պատմամշակութային փոխառնչությունների ոլորտում», իսկ հնամարդաբան Ռուզան Մկրտչյանի հետ համատեղ ներկայացնելու են նաեւ Հայկական լեռնաշխարհի էթնածագումնաբանական խնդիրները:

Զարմացնող, օրինաչափությունից դուրս վկայություններ կա՞ն, ինչի մասին խոսելը հիմա մոդայիկ է

Ըստ հնագետի՝ նախ ժայռապատկերները մեկնաբանելու համար պետք է գալ նրանց գտնե մոտավոր ժամանակահատված, մինչդեռ ժայռապատկերները դուրս են պատմամշակութային միջավայրից, առանձին են. այնպես որ՝ նրանց թվագրումը մոտավոր է, ամեն դեպքում եթե ժայռապատկերի վրա մարտակառքի պատկեր կա՝ առնվազն երկրորդ հազարամյակի սկզբից ավելի վաղ չի կարող լինել, որովհետեւ հնագիտական բոլոր նյութերը ցույց են տալիս, որ այս փոխադրամիջոցը կամ գինատեսակը մեզ մոտ 2-րդ հազարամյակից առաջ գոյություն չի ունեցել. «Իսկ քվեարկելով որոշելը, թե Ադամը հայ է-հայ չի, չենք կարող», կատակում է Ա.Փիլիպոսյանը:

Մի հետաքրքրական աշխատանք կա խեթական կամ լուվիական ծագմամբ, որը սեպագրով հասել է մեզ՝ «Տրակտատ Կիկուլիի մասին» (այսինքն՝ ձիաբուծության մասին): Ոմն Կիկուլի շաբաթ շաբաթ ներկայացնում է, թե ինչպես պետք է ձին խնամել, ինչպես վարել այն, մի խոսքով՝ ձիավարժություն է սովորեցնում. «Իմ հայտնաբերած ամենավաղ ձիասանձը գտնվել է Օշականից եւ ամենավաղ վկայություններից մեկն է Հայաստանում ձիու առկայության եւ վերաբերում է մ.թ.ա. 16 դ դարին, ավելի վաղ մարտակառքի, սանձի մասին չեմ կարող խոսել, քանի որ ավելի վաղ փաստ չունեմ: Ենթադրաբար կարող ենք ինչ ասես խոսել: **Պարիս Հերունին** Զորագ քարերը դարձնում է 7-րդ հազարամյակի համաշխարհային աստղադիտարան: Նախ՝ 7-րդ հազարամյակի բնակավայր Հայաստանում դեռ չի հայտնաբերվել»: Եվ շատ տեղին հիշում է, որ պալեոլիթի ամենալավ մասնագետը՝ **Վասիլի Լյուբինը** 90 տարեկանին մոտ է, բայց շարունակում է գալ եւ աշխատել Հայաստանում, նա այդպիսի բան չի ասում: Նա հիմա էլ Հայաստանում է՝ Տաշիրում. մի քանի տարի առաջ հարավային Վրաստանում, պատմական Ջավախքի տարածքի Դմանիսի բնակավայրի հատվածում, միջնադարյան բնակավայրի հիմքի տակ պատահաբար բացվել է «հոմոէրեկտուս» մարդաբանական տիպը՝ նախամարդու տիպերից մեկն է: Վեց գանգ է բացվել, եւ ամենայն հավանականությամբ նրանց հիմնական բնակության վայրը, կամ շրջագայության վայրը եղել է Տաշիրի տարածքը, որովհետեւ ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա է Տաշիրից, Վրաստանի տարածքում: Ֆրանսիական, գերմանական, ամերիկյան արշավախմբեր են աշխատել այդ հնավայրում, իսկ շարունակության վրա, արդեն մեր տարածքում 4 տարի ուսումնասիրություն է կատարում հայ-ռուսական արշավախումբը: Արդեն ուսումնասիրվել են բավական շատ բնակավայրեր, հատկապես Մեծավանի՝ նախկին Շահնազար գյուղի տարածքում, եւ այստեղ մի քանի հազարից ավելի պալեոլիթյան մարդու գոյության եւ աշխատանքի արդյունքներ են գտել՝ հատիչներ, քերիչներ եւ այլն: Դա մեծ նորություն է, եւ հնարավորություն է տալիս նախամարդու գոյությունը Հայկական լեռնաշխարհի այս հատվածում հասցնել մինչեւ 1մլն 200-300 հազար տարվա:

Մեզ մո՞տ էլ են գանձ որոնում

«Գանձագողության դեպքեր մինչեւ վերջերս չկային, բայց այն դամբարանադաշտում, որտեղ մի քանի օրից պեղելու ենք, Դարի գլխում, երբեմն դամբարան թալանել են, քանդել՝ շարքային դամբարաններ են, որտեղ երկու-երեք խեցուց ավելին չէր կարող լինել: 2-3 տարի որ պարբերաբար աշխատում ենք՝ մարդկանց թվում է, թե այնտեղ գանձ կա: Օրինակ՝ Կարմիր գյուղի շրջակայքում, 87 թվին, սփոփված էի նոյեմբերի վերջին աշխատել, պեղման ժամանակ ձյուն էր գալիս, բայց բավականին հետաքրքիր նյութ դուրս եկավ: Մի տարի հետո, երբ նորից գնացի՝ բանվորներից մեկն ասաց՝ տղա ջան, մի պեղի, էլ բան չկա. անցած տարի մեկը եկավ ճշտան բերան պեղեց, ամբողջ ոսկին առավ գնաց», հնագիտական պատմություններին մեր ցանկությամբ լեգենդի ձեւավորում է տալիս Աշոտ Փիլիպոսյանը:

■

Նախագահական ընտրություններում վրաց ընդդիմադիր թեկնածուն «այուրդի՞զ» է լինելու

Արտակարգ դրություն մինչեւ նոյեմբերի 22-ը

Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու՝ արտահերթ նախագահական ընտրություններ անցկացնելու որոշումը «իմաստուն» են համարում: Թերեւս: Ուժային մեթոդների կիրառությունն էլ ոչնչի չբերեց, ու մնաց հարմար տարբերակով հեռանալու հնարավորությունը, որը Սաակաշվիլին չցանկացավ տեսնել ի դեմս հրաժարականի:

Ավելի շուտ նախընտրելի ընդունվեց 2008 թվականի հունվարի 5-ին արտահերթ նախագահական ընտրությունների անցկացումը՝ սեփական թեկնածության առաջադրմամբ: 2004 թվականի հունվարի 5-ին անցկացված նախագահական ընտրություններում ընտրված Սաակաշվիլին իր որոշմամբ մեկ տարի կրճատեց նախագահական իր լիազորությունների ժամկետը:

Հետաքրքրական է, որ վրաց ընդդիմությունը եւս, ընդունելով արտահերթ ընտրությունների անցկացման գաղափարը, արդեն իսկ հայտարարել է, որ հանդես կգա միասնական թեկնածուով: Միայն թե ներկա դրությամբ այդքիսի միասնական թեկնածուի համար հավանական է համարվում երեք տարբերակ. ԱԳ նախկին նախարար Սալոմե Զուրաբիշվիլի, հակամարտությունների կարգավորման հարցերով նախկին պետնախարար Գեորգի Խախնդավա, արդեն մի երկար ժամանակ ցուցադրվող լեյբորիստ Շալվա Նաթելաշվիլի:

Ինչ վերաբերում է կարծիքներին, թե նախագահական թեկնածու կարող է առաջադրվել Լոնդոնում գտնվող օլիգարխ Բադրի Պատարկացիշվիլին կամ Վրաստանի պաշտպանության նախկին նախարար, ներկայումս երկրից դուրս գտնվող Իրակլի Օկրուաշվիլին, ապա նրանց թեկնածությունը բացառում է հենց ընդդիմությունը, հավելելով, թե միասնական թեկնածուի անունը շատերի համար անակնկալ կլինի: Եվ քանի որ ընդդիմության մարտավարությամբ, ընտրվելիք թեկնածուն կպարզեցնի նախագահի ինստիտուտը եւ, ըստ էության, կձեւավորի խորհրդարանական Վրաստան, այս համատեքստում կարող է դիտարկվել նաեւ խորհրդարանի ներկայիս նախագահ Նինո Բուրջանաձեի թեկնածությունը:

Ինչեւէ, «Ազգն» արդեն անդրադարձել է իշխանություն-ընդդիմություն երկխոսության կայացմանը վրաց եկեղեցու աջակցության պատրաստակամությանը: Երեկ վրաց պատրիարք Իլյա Երկրորդի տեղեկացմամբ պարզ դարձավ, որ այդ երկխոսությանը կողմերը համաձայնել են՝ իրագործումը եկեղեցու միջնորդությամբ տեսնելով եւ արտակարգ դրությունը հանելուց հետո:

Առավել յուրօրինակ են վրաց իրավապահների գործողությունները: Մի կողմից, գործեր են հարուցվում հասուկ նշանակության ջոկատների կողմից ուժի կիրառման չարաշահման փաստերով, մյուս կողմից, գործեր են կազմվում նաեւ ընդդիմադիրների դեմ՝ հիմնականում հեղաշրջման փորձ անելու մեղադրանքներով: Վրաստանի գլխավոր դատախազություն հարցաքննության է հրավիրվել, ինչպես նաեւ միջազգային հետախուզման վրացական պահանջի տակ կարող է հայտնվել Բադրի Պատարկացիշվիլին՝ իշխանության բռնազավթման կազմակերպման մեղադրանքի առնչությամբ:

Երեկ Վրաստանի խորհրդարանն առանց ընդդիմադիր չորս խմբակցությունների ներկայացուցիչների, ինքնակոչ երկրում արտակարգ դրություն հայտարարելու Սաակաշվիլու դեկրետն ու հաստատեց՝ արտակարգ դրությունը երկարաձգելով 15 օրով մինչեւ նոյեմբերի 22-ը, քանի որ երկրի նախագահի որոշումը կայացվել է նոյեմբերի 7-ին:

Ամենայն հավանականությամբ, մինչ օրս առանձնակի աչքի ընկնող առաջնորդ չունեցող վրաց միասնական ընդդիմությունը մեծագույն դժվարություններ կունենա հունվարի 5-ին նախագահական ընտրություններում պայքարելու Սաակաշվիլու՝ թեկուզ արդեն թուլացած վարկանիշի դեմ: Մյուս կողմից էլ, դժգոհություններ իսկապես կան, եւ եթե հաղթանակը մնա ներկայիս գործող նախագահին, ապա նոյեմբերի 2-ին սկսված բողոքի ակցիան կարող է հավանական շարունակություն ունենալ:

Ժամկետների առնչությամբ նշենք, որ ինչ զարգացումներ էլ լինեն այստեղ, նոյեմբերի 22-ը վերջնաժամկետ է հենց գործող նախագահի համար: Թեկնածություն առաջադրելու դեպքում, ինչպես եւ պատրաստվում է վարվել Սաակաշվիլին, նա պետք է հրաժարական ներկայացնի նոյեմբերի 22-ին՝ նախագահական ընտրությունների համար նշված օրվանից 45 օր առաջ:

Նախագահի հրաժարականի ներկայացումից հետո 72 ժամվա ընթացքում Վրաստանի խորհրդարանը պետք է հաստատի հունվարի 5-ին ընտրություններ անցկացնելու նախագահական որոշումը: Հաստատելու դեպքում, մինչեւ նոյեմբերի 27-ը հայտնի կդառնան նախագահի թեկնածուների անունները:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ամենաերկարակյաց ղեկավարը Ֆիդել Կաստրոն է



Ամերիկյան «Ֆորին փոլիսի» հանդեսը կազմել է իրենց պաշտոններում ամենից երկար մնացած նախագահների եւ վարչապետների ցանկը: Առաջնության դափնին անվիճելիորեն պատկանում է Կուբայի ղեկավար Ֆիդել Կաստրոյին, որը երկրի ղեկի մոտ է 48 տարի անընդմեջ: 2003-ին նրա վերընտրության օգտին արտահայտվեցին խորհրդարանի բոլոր պատգամավորները, որոնց իրավասության մեջ է մտնում երկրի նախագահի ընտրությունը:

Երկրորդ տեղում է Գաբոնի նախագահ Օմար Բոնգոն, որը պետության ղեկին է արդեն 39 տարի: Գաբոնի ժողովուրդը նրան վերջին անգամ ընտրել է 2005-ին. համընդհանուր ընտրություններում Բոնգոն ստացավ քվեների 79,2 տոկոսը:

Երրորդ տեղն զբաղեցնում է Եմենի նախագահ Ալի Աբդուլլահ Սալեհը: Նա իր պետությունը ղեկավարում է 29 տարի: 2006-ի նախագահական ընտրություններում նա ստացավ քվեների 77,2 տոկոսը:

Չորրորդ տեղը կիսում են Մալդիվների եւ Հասարակածային Գվինեայի նախագահներ Մոմուն Աբդուլ Գայումը եւ Տեոդորո Օբյանգ Նգեմա Մբասոգոն: Նրանք իրենց երկրները կառավարում են արդեն 28 տարի: 2003-ի ընտրություններում Աբդուլ Գայումի վերընտրությանը հավանություն տվեց նրա հպատակների 90,3 տոկոսը, իսկ 2002-ին Օբյանգ Նգեմա Մբասոգոն ստացավ քվեների 97,1 տոկոսը:

Հինգերորդ տեղում է Կամբոջայի վարչապետ Հուն Սենը, որն իր երկիրը կառավարում է ընդհանուր առմամբ 22 տարի: Վերջին անգամ 2003-ի խորհրդարանական ընտրություններում նրա կուսակցությունն ստացավ տեղերի 47 տոկոսը:

«Ֆորին փոլիսին» ընդգծում է, որ Պակիստանի, Վենեսուելայի եւ Ռուսաստանի նախագահներ Մուշարաֆը, Չավեսը եւ Պուտինը ցանկի մեջ չեն մտել:

Կողոպտել են Ռեյգանի հիմնած գրադարանը

ԱՄՆ-ում՝ Ռոնալդ Ռեյգանի անվան նախագահական գրադարանում անցկացված աուդիտորական ստուգումը ցույց է տվել, որ մոտավորապես 100 հազար առարկայից բաղկացած հավաքածուից ավելի քան 80 հազար միավորի գտնվելու վայրն անհայտ է: «Ֆոքս նյուզ» հեռուստաընկերության հաղորդման համաձայն, նախագահական 12 գրադարանների ստուգումն սկսվել է Լոս Անջելեսից ոչ հեռու գտնվող Սիմի Վելիի համալիրի նախկին աշխատակիցներից մեկին ուղղված մեղադրանքների կապակցությամբ: Այդ համալիրը բաղկացած է գրադարանից եւ ԱՄՆ 40-րդ նախագահ Ռոնալդ Ռեյգանի թանգարանից: Հիշյալ աշխատակիցը ամբաստանվում է հիշատակի առարկաների հափշտակման մեջ:

Մասնավորապես թանգարանի տնօրենությունը չի կարողանում գտնել Ռեյգանի կովբոյական իրերի հավաքածուն: Աուդիտորներն ուշադրություն են դարձրել հաշվապահական գրքերի անփույթ վարման, ինչպես նաեւ դյուտաբեկ առարկաների անզգույշ պահպանության վրա:

ԱՄՆ արդարադատության նախարար եւ գլխավոր դատախազ նշանակվեց Բուշի մյուս ընկերը



Ամերիկյան Սենատը երեկ արդարադատության նախարարի եւ միաժամանակ գլխավոր դատախազի պաշտոններում հաստատել է նախկին դաշնային դատավոր Մայքլ Մուկասեյին: Նա կփոխարինի օգոստոսին մի շարք սկանդալների պատճառով հրաժարական տված Ալբերտո Գոնսալեսին՝ նախագահ Ջորջ Բուշի ընկերոջը:

Կոնգրեսում Գոնսալեսի հրաժարականը պահանջում են դեմոկրատները եւ որոշ հանրապետականներ: Գոնսալեսին մեղադրում էին մի շարք ընդդիմախոս դաշնային դատախազների պաշտոնանկ անելու, ինչպես նաեւ ենթադրյալ ահաբեկիչների անօրինակ էլեկտրոնային լրտեսման կապակցությամբ օրենսդիրներին պարզաբանումներ տալուց հրաժարվելու մեջ:

Բուշը 66-ամյա Մուկասեյի թեկնածությունն առաջադրել էր սեպտեմբերի կեսերին: Ընդսմին նա նշել էր, որ Նյու Յորքի հարավում 18 տարի դատավոր աշխատած եւ ահաբեկիչների գործերով դատավճիռներ կայացրած Մուկասեյը «գիտի, թե ինչպես պետք է արդյունավետորեն դիմակայել ահաբեկչությանը եւ դա անել մեր օրենքներին համապատասխան»:

Այն ժամանակ դեմոկրատ կոնգրեսականները հույս էին հայտնել, թե Բուշի ընկեր Մուկասեյը կծառայի ժողովրդին եւ ոչ թե ԱՄՆ նախագահին:

Բելառուսական ծագում ունեցող Մայքլ Մուկասեյը ծնվել է 1941-ի հուլիսի 28-ին Նյու Յորքում: Միջնակարգ կրթությունն ստացել է Մանհեթենի «Ռամազ» հրեական ուղղափառ դպրոցում: Կոլումբիա համալսարանը եւ 1967-ին Ելի համալսարանի իրավունքի դպրոցն ավարտելուց հետո սկսել է փաստաբանությամբ զբաղվել Նյու Յորքի իրավաբանական ֆիրմաներում: Այդ տարիներին ընկերացել է փաստաբան Ռուդոլֆ Ջուլիանիի հետ, որը Նյու Յորքի դատախազը դառնալով՝ նրան դարձրեց իր օգնականը:

1987-ին նախագահ Ռեյգանը Մուկասեյին նշանակեց դաշնային դատավոր: Մուկասեյը նախագահել է 1993-ին Նյու Յորքում՝ Առեւտրի համաշխարհային կենտրոնում պայթեցում կատարած ահաբեկիչների դատավարությունում, ցմահ բանտարկության դատապարտելով կազմակերպչին՝ եգիպտացի մոլլա Օմար Աբդել Ռահմանին:

Երբ Ջուլիանին պայքար սկսեց ԱՄՆ նախագահության համար, Մուկասեյը որդու՝ Մարկի հետ իրավախորհրդատու դարձավ նրա ընտրական շտաբում:

Շենգենյան գոտին շուտով կընդլայնվի

Եվրամիության երկրների ներքին գործերի նախարարները հավանություն են տվել Շենգենյան գոտու առաջիկա ընդլայնմանը: Ֆրանսիայի հաղորդում է, որ շուտով այդ գոտու մեջ կընդգրկվեն Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի 8 պետություններ, ինչպես նաեւ Մալթա կղզին:

Նախարարները ընդգծել են, որ բալթյան պետությունները (Լիտվա, Լատվիա, Էստոնիա), Լեհաստանը, Չեխիան, Սլովակիան, Հունգարիան, Սլովենիան եւ Մալթան բավարարում են այն նախնական պայմանները, որոնք վերաբերում են 2007-ի դեկտեմբերի 21-ից ներքին, ցամաքային ու ծովային սահմանների վերահսկողության վերացմանը, իսկ 2008-ի մարտի 30-ից՝ օդային սահմանների վերացմանը: Այդ բոլոր երկրները Եվրամիությանն անդամակցել են 2004-ին: Ինչ վերաբերում է Կիպրոսին, նա հույս ունի այդ երկրներին միանալու 2008-ի վերջերին:

Սահմանների վերահսկողության վերացման հարցում հիշյալ 9 երկրներին ֆինանսական աջակցություն է ցույց տվել Եվրամիությունը: Շենգենյան գոտու նոր անդամներից պահանջվում է նաեւ միանալ գոտու տեղեկատվական համակարգին: Տեղեկատվական այդ բազան անվտանգության ծառայություններին հնարավորություն է տալիս տվյալներ ունենալու որոնվող, անհետացած կամ անցանկալի անձանց, ինչպես նաեւ գողացված իրերի (ավտոմեքենաներ, զենքեր, ինքնության փաստաթղթեր, բանկնոտներ) վերաբերյալ:

Լեհաստանի նոր վարչապետը համաեվրոպական պայմանագրի կողմնակից է

Հոկտեմբերյան խորհրդարանական ընտրություններում քվեների 40 տոկոսից ավելին ստացած «Քաղաքացիական պլատֆորմի» կուսակցության առաջնորդ Դոնալդ Տուսկը երեկ պաշտոնապես ստանձնել է Լեհաստանի վարչապետի պարտականությունները: Գյուղացիական կուսակցության հետ դաշն կնքած «Քաղաքացիական պլատֆորմը» կարող է ակնկալել խորհրդարանական 240 տեղ, ինչը թույլ կտա հաղթահարել երկրի նախագահ Լեխ Կաչինսկու հնարավոր վետոները:

BBC-ն տեղեկացնում է, որ հինգշաբթի օրը Դոնալդ Տուսկը հանդիպում է ունեցել Եվրահանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բառոզուի հետ՝ պարզելու Եվրամիության մյուս երկրների հետ Լեհաստանի կապերը սերտացնելու հնարավորությունները:

Հանդիպման ժամանակ Տուսկը հայտարարել է, որ Լեհաստանի համար շատ կարեւոր է համաեվրոպական պայմանագրի վավերացումը: Նա ասել է, որ վավերացումը լինելու է իր կառավարության առաջնային խնդիրներից մեկը:

«Մենք գիտակցում ենք, որ նախագահ Կաչինսկին եւ նրա քաղաքական դաշնակիցները դեմ են այդ պայմանագրին: Ես եւ իմ կուսակցությունը մտադիր ենք ստորագրել պայմանագիրը: Մի շարք դիտողություններ ունենք փաստաթղթի առթիվ, բայց պարտավոր ենք փոխհամաձայնության գալ», հայտարարել է Տուսկը:

«Կարոս». Հայ կինոյի հեռահայաց Քյոլնում

Նոյեմբերի 5-11-ը Քյոլնի կինոյի տանը անցկացվում է «Կարոս» անունը կրող հայ կինոյի հեռահայաց ցուցադրություն: Միջոցառման նախաձեռնողը Բեռլինյան ART KOMBAT միությունն է:

Ինչպես իրազեկել էինք ժամանակին, «Կարոս» վերնագրյալ հայ կինոյի հեռահայաց ցուցադրության մեկնարկը Գերմանիայում կայացել էր Բեռլինի Արսենալ կինոյում, 2007-ի մայիսի 5-31-ը:

«Կարոսի» շրջանակներում Քյոլնում նոյեմբերի 5-ին ցուցադրվել է Համո Բեկ-Նազարյանի 1926-ին հեղինակած հայկական առաջին ֆիլմը՝ «Նամուսը»: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 6-ին կինոսիրողների դաշին են հանձնվել Սերգեյ Իսրայելյանի 1982-ին նկարահանած «Գիքորը», Համո Բեկ-Նազարյանի 1926-ին ստեղծած «Շորն ու Շորտորը», Արտավազդ Փելեշյանի1969-ին նկարահանած «Մենք», Ֆրունզե Դովլաթյանի 1976-ին հեղինակած «Երկունք» ֆիլմերը:

Նոյեմբերի 7-ին ցուցադրվել են Ալբերտ Մկրտչյանի 2000 թվականին



նկարահանած «Ուրախ ավտոբուսը»,Համո Բեկ-Նազարյանի 1935-ին նկարահանած «Պեպոն», Ֆրունզե Դովլաթյանի 1965-ին հեղինակած «Բարեւ, ես եմ» ֆիլմերը:

Նոյեմբերի 8-ին Քյոլնի կինոյի տանը դիտել են Մայքլ Հակոբյանի 2003-ին նկարահանած «Գերմանիան եւ գաղտնի ցեղասպանությունը», Կարինե Թոմսյանի 2006-ին ստեղծած «Քար, ժամանակ, շոշափում», 1990-ին Ֆրունզե Դովլաթյանի հեղինակած «Կարոս» ֆիլմերը:

Նոյեմբերի 9-ին ցուցադրվեց 1977-ին Հենրիկ Մալյանի հեղինակած «Նահապետը», Վիգեն Չալդրանյանի 1985-ին ստեղծած «Արրիլ», Բագրատ Հովհաննիսյանի 1973-ին նկարահանած «Հնձան» եւ Ատոմ Էգոյանի 1993-ին հեղինակած «Օրացույց» ֆիլմերը:

Նոյեմբերի 10-ին կինոսիրողների ուշադրությանը կհանձնվեն Հարություն Խաչատրյանի 1991-ին ստեղծած «Վերադարձ ավետյաց երկիր», Ալբերտ Մկրտչյանի 1984-ին նկարահանած «Մեր մանկության տանգոն», Դոն Ասկարյանի 1992 թվականին հեղինակած «Ավետիք» ֆիլմերը:

Նոյեմբերի 11-ին կներկայացվեն երկու ռեժիսորների երկուական ժապավեններ՝ Սերգեյ Փարաջանովի 1967-ին ստեղծած «Հակոբ Հովնաթանյան» եւ 1969-ին՝ «Նռան գույնը» ֆիլմերը, Հարություն Խաչատրյանի 2006-ին հեղինակած «Պոետի վերադարձը», 2003-ին՝ «Վավերագրողը» ֆիլմերը:

ԼՈ. Հ

Գերմանիա

«Սիրատուի» Մարդկային փոքրիկ պատմություններ

Սիրատուի: Այսպիսի բառ գոյություն չունի: Այն հորինվածք է, միֆ, որ փոխարինում է իրական հեքիաթին: «Սիրատուին ամեն ինչ հանդուրժում է: Լինում է, թե չի լինում՝ կարեւոր չէ: Եղավ, թե չեղավ՝ էական չէ: Սիրատուին նրա համար է, որ ամեն ոք ճանաչի ու հավատա իր իսկական երջանկությանը»:

«Սիրատուին» արձակագիր Կիմ Գաբրիելյանի պատմվածքների վեցերորդ ժողովածուն է:

«Որտեղ կարելի է աղոթել ու լաց լինել», «Ցասված վերջին բառը», «Համարյա ուրախ պատմություն» ու մնացած ստեղծագործություններում առկա են մարդկային առավելություններ ու թերություններ, երեւակայական աշխարհ, սիրելու ու սիրվելու մշտավառ երազանք, կրքոտ բռնկումներ, փորձություններ ու պայքար:

Խաթարված ճակատագրեր, բալզակյան տարիքի միայնակ կանայք, սիրային եռանկյունում հայտնված կերպարներ, խորտակված հույզեր, մարող սեր ու փլուզվող ընտանիքներ:

Ժողովածուի հերոսները միմյանցից տարբեր, կյանքի հանդեպ հատուկ բանաձեւով, սեփական ուղին հարթած, մեծ ու փոքր խնդիրներով մարդիկ են, ովքեր ընթերցողի առջեւ բացում են նոր աշխարհ, դուրս հանում կուտակված մաղձն ու դառնությունը, զուգում ու բացում հոգու ամենանվիրական գաղտնիքները: Նրանցից ոմանք կարողանում են ընդվզել, դուրս գալ փորձությունների ճիրաններից, կենսափորձի, ապրած տարիների ճիշտ ու սխալի հիման վրա կատարել կարեւորագույն ընտրություն: Ուրի դողով ու վախով, բայց այնուամենայնիվ, ուղղել ավելի քան քսան տարվա սխալը: Կամ լռել, թույլ տալ, որ հպարտությունն ու հիվանդագին ինքնասիրությունը հաղթի, խանդից գալարվել, բայց ոչինչ չանել, սպասել ու երկարամյա սպասումից տառապել, խելագարվել:

«Քսաներկու տարի մենք չէինք տեսել իրար: Քսաներկու տարվա բաժանումից հետո, երբ պատահաբար կյանքի արահետին կրկին տեսա նրա ոտնահետքերը, պարզապես վերցրի հեռախոսն ու զանգահարեցի նրան...

Զանգեցի ու բարեւի փոխարեն ասացի՝ գիտե՞ս, ինձ ոչ ոք քեզանից շատ չի սիրել կյանքում: Նա զարմացավ ու հարցրեց՝ ո՞վ է խոսողը: Պարզապես ասացի՝ քո հին սերը»:

Հեղինակը հերոսների շնորհիվ առաջնային է դարձնում երկրորդական համարվող խնդիրներ, ուշադրություն դարձնում ու վերարժեւորում աննշան թվացող մանրամները: Թվում է, թե պատմվածքների մեծ մասն անավարտ է, գործողությունները կիսաս ու այդ վերջաբաններն ընթերցողին թողնում են երկմտանքի ու անորոշության մեջ: Հաճախ հնչող «ինչուները» ընթերցողներին գցում են մտորումների գիրկը, սիրում անհանգստանալ ու մտահոգվել կերպարների ճակատագրով:

Կարդի՞ արդյոք հիվանդ հերոսուհին, ինչպիսի՞ն է Վաղոյի հոգեվիճակը ընկերոջը՝ Հովիկին կորցնելուց եւ թոմ գերտիուն վերադարձնելուց հետո կամ ո՞րն է մուրացկան տղամարդու հետագա ճանապարհը:

Հեղինակն այս եւ մնացած հարցերին չի պատասխանում: Ընթերցողներին տալիս է գաղափարների ու կարծիքների լիակատար ազատություն, հնարավորություն ընձեռում զարկ տալ երեւակայությանը ու սեփական պատկերացմամբ ու ընկալմամբ ընթացք տալ հերոսների հետագա ճակատագրին:

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայկական հարցի լուծման եւս մեկ տարբերակ

Արեւմտյան Հայաստանի Խնուս (Հարք) գավառում հայ ժողովրդի ապրած վերջին 80 տարիների դաժան եւ ողբերգական պատմությունն են ներկայացվում հանրության ուշադրությանն ու դատին: Խնուսահայության կոտորածներն ու փրկությունը «Մենավոր բազեն» պատմվեպում են: Երիտասարդ հեղինակը՝ Սամվել Միհրյանը, գրում հիմնական շեշտը դրել է 3000 հայերի փրկության, այլ ոչ թե 23.000 կոտորվածների փաստի վրա: Խնուսի մոտ 80 տարիների կյանքը ներկայացվում է մի քանի ճանաչված հայ ընտանիքների, ֆուդ շեյխերի միջոցով:

«Սա եւ մեկ բաժակ ջուր է, որը կլցվի այն ջրաղացի անվին, որը պտտվում է հայկական հարցի լուծման համար», ասում է երիտասարդ գրող Սամվել Միհրյանը:

Սա է պատմվեպի ստեղծման հիմնական նպատակը: Գրքի փաստերը վերցվել, կառուցվել եւ զարգացել են իրական դեպքերի եւ դեմքերի շուրջ: Առանցքային կերպարը Դավիթն է՝ շատ քաջ մի բանաստեղծ, ով հանձն է առնում Խնուս գավառի Գովանդուկ գյուղի ինքնապաշտպանությունը: Հերոսը միշտ զուգահեռներ է տանում իր եւ ռազմի թռչնի կերպարը հանդիսացող բազեի միջեւ, որը միշտ սավառնում է երկնքում, բոլոր կարեւոր իրադարձություններին ներկա է, Աստծո եւ Դավթի փոխհարաբերությունների միջեւ է: Նրանք երկուսն էլ «մենակ» են իրենց հավատով, իրենց մտքերով, նրանց երկուսին էլ ոչ մեկը չի հասկանում:

«Համեմատելով այլ հերոսավեպերի հետ, այստեղ հաղթանակին հասնելու գլխավոր շեշտը ուղղված է հավատամքին: Պոեմը համեմված է հոգեւոր վերլուծությամբ, աղոթքաբանաստեղծություններով, սիրային պատմություններով», մեկնաբանում է հեղինակը:

Մեկ տարի առաջ Սամվել Միհրյանը փոքր արավախմբով ուղեւորվել է Արեւմտյան Հայաստանի Խնուս գավառ, եւ այսօր, այնտեղ տեսած ցանկացած մանրուք ներկայացնում եւ կարեւորում է «Մենավոր բազեն» վեպում: Շատ ավելի շոշափելի են դարձել բնության պատկերացումները:

Արտաքնով խնուսցի, 28-ամյա ստեղծագործողը պատմվեպը գրելիս օգտվել է նաեւ եղիշե Մելիքյանի «Հարկ Խնուս» փաստագրական գրքից, իսկ իր՝ «Մենավոր բազեն» պատմվեպի շնորհանդեսը տեղի ունեցավ օրերս, Առնո Բաբաջանյանի անվան համերգային դահլիճում: «Խնուս» մշակութային հիմնադրամի կազմակերպած միջոցառման ընթացքում գրքի գեղեցիկ մեկնաբանմանն ու բարեմաղթանքներին լրացնում էին նաեւ Սամվել Միհրյանի բանաստեղծություններն ու պոեմները, ինչը եւ զարմացրեց հրավիրյալներից շատերին: Եվս մեկ ապացույց երիտասարդ տաղանդի եւ շատ ճիշտ ու յուրօրինակ հեռանկարային աշխարհայացքի վերաբերյալ:

ՄԱՐԻՆԵ ԽԵՉՈՅԱՆ

ԵՅԱԿԻ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Շուրջ 23 միլիոն դրամ Ազգային գրադարանին

VIVACELL-ի բարեգործությունն ապագա սերունդների համար է

«Իմ առաջը բարեարություն չէ, այլ պարտավորություն ու պարտականություն: Մեր գործարարությամբ մենք օգտվում ենք, չէ՞, հասարակությունից, բայց մենք հավատում ենք, որ միեւնույն ատեն մենք պետք է օգտակար դառնանք հասարակությանը, որն ունի բազմաթիվ փորձավեր կամ գլխացավ: Ուրախ կլինենք, եթե կարողանանք այդ հարցերից մեկը հարթել: VIVACELL-ը պատասխանատվություն ու պարտականություն է սաանձնում առողջապահական, մշակութային, բնապահպանական եւ այլ ոլորտներում օգնելու, ավելի զարգացնելու դրանք»: Այս ուրբաթ եւ համեստությամբ լի խոսքերը հնչեցրեց VIVACELL-ի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն **Ռաֆֆ Յիրիկյանը,** ով մի խումբ աշխատակիցների հետ երեկ այցելել էր Հայաստանի Ազգային գրադարան: Նրան հրավիրել էին երախտագիտության պարգեւ եւ շնորհակալական խոսքեր հղելու՝ հայաստանյան իրականությունում հանդիպող եզակի բարեարության համար: Հիրավի, պարբերաբար տրամադրած ընդհանուր հաշվով 12, 5 միլիոն դրամի օգնությունը Ազգային գրադարանի համար փոքր, բայց էական նվիրաբերում է: Դրանով հիմնանորոգվել են չորս մասնաշենքերի սանհանգույցները եւ գրադարանի տանիքը: Երեկ Ազգային գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանը բազմաթիվ ընթերցողների եւ իր անունից երախտագիտություն հայտնեց Ռալֆ Յիրիկյանին շնորհելով նրան Հակոբ Մեղապարտի անվան մեդալ, ազգային գրադարանի պատվավոր ընթերցողի խորհրդանշական տոմս եւ հուշանվեր: Իսկ երբ հյուրն իմացավ, որ մյուս տարի նախատեսում են տոնել գրադարանի ստեղծման 175-ամյակը, տեղում եւս 10 միլիոն դրամի բարեարության մասին որոշում կայացրեց: Այս քայլով, գործարարն ապացուցեց իր յուրահատուկ վերաբերմունքը գրականության եւ գրքերի պահպանության նկատմամբ:



Դժվար է, ասել, թե վերջին ժամանակներում ո՞ր բարձրաստիճան ու պատասխանատու պաշտոնյան է շրջագայել Ազգային գրադարանի գրապահոցներում, սակայն կարծես բոլոր պատասխանատուների փոխարեն Ռ. Յիրիկյանը կամավորապես դա արեց՝ անկեղծ հետաքրքրությամբ ու ուրացավությամբ: Ի դեպ, նա 10 միլիոն դրամ նվիրաբերեց մինչ շրջագայության մասին մտահղացումը, որը ծնվեց գրադարանի տնօրեն Դ. Սարգսյանին ուղղված «Ազգի» հարցադրումից հետո:

- Ոչ հեռու անցյալում գրապահոցներում ջերմությունն ու խոնավությունն ապահովում էիք ջրի դույլերի եւ էլեկտրական վառարանների օգնությամբ: Այսօր ինչպիսի՞ն է վիճակը:

- 2008 թվականին պետական միջոցների հաշվին մեր թանգարանական մասնաշենքը (1938-40 թթ.) հիմնանորոգվելու է: Մենք պիտի դադարկենք այդ շենքի գույքը եւ տեղավորենք մյուս երեք շենքերում: Շենքի առ շենք նորոգում իրականացնելուց հետո արդեն կկարողանանք պահպանել գրքերի պահպանման չափորոշիչները՝ անդրադառնալ տեխնոլոգիական խնդիրներին:

Շրջագայությունը ազգային գրադարանի բաց ու փակ պահոցներում լավ առիթ էր տեսնելու մեր գրավոր հարստության աչքից հեռու մասն ու իմանալու ավելին, քան հայտնի է: Մասնավորապես գրադարանի փոխտնօրեն Ռաֆիկ Ղազարյանը հայտնեց, որ որոշել են թանգարան բացել՝ ցուցադրելու 650 անուն այն հնատիպ գրքերն ու հազվագյուտ հրատարակությունները, որոնք 1512-1800 թվականների հրատարակություն են: Թանգարանի համար հարմար է նկատվում ներկայիս ընթերցարանը:

Շրջագայությունից հետո Ռ. Յիրիկյանը «Ազգի» համար մեկնաբանեց, թե ինչո՞ւ է բարեգործությունն ուղղված հենց գրադարանին: Բացի այն, որ գործարարը հավատարիմ ընթերցողի պես կարեւորում է գիր ու գրականության անզուգական դերն ու նշանակությունը մարդու հոգեւոր ձեւավորման եւ ազգային անփոխարինելի հարստություն լինելու հարցում, զուգակիցս հիշատակեց եւ գրադարանին իր յուրահատուկ մոտեցման անձնական պատճառը. «Համալսարանական տարիներս կաշխատեի այն համալսարանին գրադարանում, ուր եւ ուսանում էի: Նույնպիսի մթնոլորտում էի եւ հենց մտա գրապահոց, հիշեցի 1987-89 թթ. ուսանողական տարիները: Եվ վերջապես ազգային գրադարանը հարստություն է, սերունդների, հայրենավոր տարիների պատմություն է: Եթե դա չկա, ուրեմն ոչ մի արժեք չունի ազգը: Ամեն մեկս պետք է աշխատինք մեր կարողության սահմաններում, որ պահպանենք այս գանձը»:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Պայծառ լույս՝ Հայաստանը պատկերող ցուցահանդեսում

«Հայաստան. մշակութային լանդշաֆտ» վերնագիրն էր կրում նոյեմբերի 9-ին, ժամը 19.00-ին Նոյս քաղաքի կաթոլիկ գրադարանին կից սուրբ Քուիրին գրական սրճարանում բացվող լուսանկարչական ցուցահանդեսը՝ հեղինակի՝ Մոնիկա Վերհահն-Մեեսի բանախոսությամբ: Լուսանկարչական այս ցուցահանդեսը 2007-ին Հայաստանի եւ Գերմանիայի միջեւ մշակութային փոխանակման հիմնադրամի հիմնադիր, Սեւանի Ծովազարդ գյուղում կառուցվող մշակութային կենտրոնի նախաձեռնող Մոնիկա Վերհահն-Մեեսի՝ քրիստոնեության օրան Հայաստանին նվիրված երրորդ միջոցառումն է:

ԼՈ. Հ

Գերմանիա

Համլետն ինչպես տեսա

Երեկ Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում կայացավ Հայկ Զորիկյանի մենաներկայացման պրեմիերան՝ Վիլյամ Շեքսպիրի «Համլետ»-ը: Մեր թղթակիցը ներկա գտնվեց ներկայացմանը եւ «Ազգի» մոտակա համարներից մեկում կներկայացնենք բեմադրության մասին ընդարձակ տեղեկատվություն:

Երեւանը կիյուրընկալի ուժեղագույն ձյուդոյիսներին

Ձյուդոյի Գրան պրիի խաղարկություն «Մուլտի գրուպի» հովանավորությամբ

Այսօր Ալեքսանդր Սոլենդիարյանի անվան օպերայի եւ բալետի պետական ակադեմիական թատրոնում կանցկացվի ձյուդոյի Գրան պրիի հերթական՝ 5-րդ խաղարկությունը, որի մրցանակային ընդհանուր հիմնադրամը 100 հազար դոլար է: Մրցաշարը կանցկացվի քաշային երեք կարգով (60, 66, 81 կգ): Յուրաքանչյուր կարգում հանդես կգան օլիմպիական խաղերի, աշխարհի եւ Եվրոպայի առաջնությունների մրցանակակիրները: Այնպես որ, աշխարհի ուժեղագույն ձյուդոյիսները կիյուրընկալվեն Երեւանում:

Գրան պրիի խաղարկությունն անցկացվում է 2002-ից եւ հանդիսանում է կոմերցիոն մրցաշար, որի նպատակն է ավելի մեծ ուշադրություն բեւեռել ձյուդոյի վրա: Նման առաջին մրցաշարն անցկացվել է Ռուսաստանում, իսկ ամենաներկայացուցչականն անցկացվել է 2004-ին Բուխարեստում, որի մրցանակային ընդհանուր հիմնադրամը կազմել է 500 հազար դոլար: Երեւանյան մրցաշարն իրենց հովանու տակ են վերցրել «Մուլտի գրուպ» կոնցեռնը, Երեւանի կոնյակի, գինու եւ օղու կոմբինատն ի դեմս Գագիկ Ծառուկյանի եւ Ռուսաստանում կոմբինատի պաշտոնական ներկայացուցիչ «Լուդինգ» ալկոհոլային ընկերությունը (հիմնադիրներ՝ Ա. Վարժապետյան, Ա. Շահազիզյան): Նշենք, որ Անդրկովկասում առաջին անգամ է նման մրցաշար անցկացվելու: Այս օրերին Երեւանում մեծ շուքով նշվելու է «Արարատ» կոնյակի, գինու եւ օղու կոմբինատի հիմնադրման 130-ամյակը, այնպես որ ձյուդոյի մրցաշարն այդ հանդիսության մի մասը կկազմի:

Սպասվում է, որ ընդհանուր առմամբ միջոցառմանը մասնակցելու համար Հայաստան կժամանեն մոտ 500 հյուրեր աշխարհի 20 երկրներից: Նրանց թվում կլինեն ձյուդոյի միջազգային եւ եվրոպական ֆեդերացիաների նախագահներ Մարիուս Ֆիզերն ու Սերգեյ Սոլովեյչիկը, քաղաքական գործիչներ, գործարարներ: Նրանք կբնակվեն «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում:

Հայաստանը քաշային յուրաքանչյուր կարգում ներկայացված կլինի 2-ական մարզիկով: Մինչեւ 60 կգ քաշային կարգում տատամի դուրս կգան Հովհաննես Դավթյանն ու Աշոտ Վարդիկյանը: Հիշեցնենք, որ Դավթյանն արդեն օլիմպիական ոսկեգիր է նվաճել: Վարդիկյանն անցած տարվա աշխարհի գավաթի խաղարկությունում գրավել էր 5-րդ տեղը, նույնքիսի արդյունք էր ցույց տվել մինչեւ 20 տարեկանների աշխարհի առաջնությունում:

Մինչեւ 66 կգ քաշային կարգում մեր երկիրը կներկայացնի Հայաստանի ամենաշնորհալի ձյուդոյիսը՝ հրազդանցի Արմեն Նազարյանը, որը եւս Պեկինի օլիմպիադայում հանդես գալու իրավունք է ձեռք բերել: Այս քաշային կարգում հանդես կգա նաեւ Հայաստանի բազմակի չեմպիոն, Համբուրգի գեռմրցաշարում 5-րդ տեղը զբաղեցրած Մեսրոպ Բարբարյանը: Մինչեւ 81 կգ



քաշային ների մրցավեճին կմասնակցեն Ղազարոս Գրիգորյանն ու Հովհաննես Մաթեւոսյանը: ՀՀ հավաքականի գլխավոր մարզիչ Գագիկ Աղամալյանի հավաստմամբ, մեր ձյուդոյիսները լրջորեն են նախապատրաստվել մրցաշարին եւ նրանցից մեդալներ են ակնկալվում: Նշենք, որ քաշային յուրաքանչյուր կարգում հաղթող ճանաչված մարզիկը կպարգեւատրվի 20 հազար դոլարով: 2-րդ տեղը գրաված ձյուդոյիսները կպարգեւատրվեն 6 հազարական դոլարով, իսկ 3-րդ տեղն զբաղեցրած 2-ական մարզիկները կստանան 2 հազարական դոլար: 10 հազար դոլարով կպարգեւատրվի ամենաարագ եւ գեղեցիկ գցման հեղինակը:

Մրցաշարի կազմակերպման եւ անցկացման ընդհանուր ծախսը կգերազանցի 250 հազար դոլարը: Նախատեսվում էր մրցաշարն անցկացնել մարզահամերգային համալիրում, սակայն այնտեղ շինարարական աշխատանքները չհաստրեցին ավարտել: Եվ քանի որ օթեւանի դահլիճը նախատեսված է 1250 հանդիսատեսի համար, ուստի մուտքը կլինի հրավիրատոմսերով: Նախատեսվում է մարզադպրոցների սաների եւ նրանց ծնողների մասնակցությունն այդ միջոցառմանը:

Ինչ խոսք, մրցաշարի հաջող անցկացումը հնարավորություն կընձեռի հեռագայում Երեւանում կազմակերպելու Եվրոպայի մեծահասակների առաջնություն: Դա հնարավոր կլինի 2010-ից հետո, քանի որ մինչ այդ մրցումների անցկացման օրացույցն արդեն կազմված է եւ մրցավայրերը հայտնի են:

Եվ այսպես, այսօր Երեւանում ուժեղագույն ձյուդոյիսների մասնակցությամբ մարզական մեծ տոնահանդես կկայանա: Ժամը 16-ին կտրվի մեկնարկը, իսկ մի քանի ժամ անց հայտնի կդառնան Գրան պրիի խաղարկության մրցանակակիրները: Հուսանք, որ հայ ձյուդոյիսներն անմասն չեն մնա խաղարկվող պարգեւներից:

Սկոլարին հրաժարակել է թեկնածուների կազմը

Պորտուգալիայի հավաքականի գլխավոր մարզիչ Լուիս Ֆելիպե Սկոլարին հրաժարակել է այն 21 ֆուտբոլիստների ցանկը, որոնք կնախապատրաստվեն նոյեմբերի 17-ին ու 21-ին Հայաստանի եւ Ֆինլանդիայի ընտրանիների հետ ընտրական մրցախաղերին: Հիշեցնենք, որ ընտրական «Ա» խմբում պորտուգալացիները զբաղեցնում են 2-րդ հորիզոնականը՝ մեկ միավորով հետ մնալով լեհերից, իսկ մոտակա մրցակիցներ սերբերին ու ֆիններին գերազանցում են 3 միավորով:

Ներկայացնում ենք թեկնածուների ցանկը. դարպասպահներ՝ Ռիկարդու («Բեսիս»), Կիմ («Բենֆիկա»), պաշտպաններ՝ Միգել, Մարկու Կանեյրա (երկուսն էլ՝ «Վալենսիա»), Ռիբեյրու («Բոավիստա»), Բոսինգվա, Բրունու Ալվես (երկուսն էլ՝ «Պորտո»), Ռիկարդու Կարվալյու («Չելսի»), Ֆեռնանդու Մեյրա («Շտուտգարտ»), Պեպե («Ռեալ»), Տոնել («Սպորտինգ»), կիսապաշտպաններ Ռաուլ Մեյրելես («Պորտո»), Միգել Վելոզո («Սպորտինգ»), Մանուել Ֆեռնանդես («Վալենսիա»), Մանիշե («Ատլետիկո»), հարձակվողներ՝ Քրիստիանու Ռոնալդու («Մանչեսթր Յունայթեդ»), Սիմաու («Ատլետիկո»), Կուարեժմա («Պորտո»), Նունու Գոմես («Բենֆիկա»), Ուգու Ալմեյդա («Վերդեր»), Մակուկուլա («Մարիտիմու»):

Լոնդոնում նոր մարզադաշտ կկառուցվի

Լոնդոնում կայացել է 2012-ի ամառային օլիմպիադայի համար նախատեսված մարզադաշտի նախագծի պաշտոնական շնորհանդեսը: Այդ մարզադաշտը կառուցվելու է բրիտանական մայրաքաղաքի արեւելյան մասում՝ Ստրատֆորդում: Այստեղ են տեղի ունենալու ամառային օլիմպիական խաղերի ու պարաօլիմպիադայի բացման ու փակման արարողությունները, ինչպես նաեւ թեթեւ atletների մրցումները:

Օլիմպիադայի ավարտից հետո նախատեսվում է 80 հազարանոց մարզադաշտն օգտագործել տեղի բնակչության մարզական կարիքների համար: Մարզադաշտը կվերակառուցվի եւ կդառնա 25 հազարանոց: Բացառված չէ նաեւ, որ այն հանձնվի Լոնդոնի ֆուտբոլի կամ ռեգբիի ակումբներից մեկին:

Նոր մարզադաշտի ներկայացված նախագիծը որոշ չափով տարբերվում է օլիմպիական հայտում ներկայացվածից: Սակայն կազմակերպիչները հավաստիացնում են, որ նոր նախագիծը եւս համապատասխանում է պահանջվող չափանիշներին: Ինչպես նշել է օլիմպիադայի կազմկոմիտեի նախագահ Տեսի Ջոուելը, Ստրատֆորդում կառուցվելիք մարզադաշտը հիանալի լրացում կլինի Լոնդոնում գտնվող մյուս վերակառուցված եւ նոր կառուցված մարզակառույցներին՝ «Ուեմբլիին», «Էմիրայթս» մարզադաշտերին եւ Տվիկենհեմում գտնվող ռեգբիի խաղադաշտին:

Նոր մարզադաշտի կառուցման աշխատանքները կսկսվեն ժամկետից շուտ՝ 2008-ի ապրիլին: Ըստ նախահաշվի, մարզադաշտի կառուցման վրա կծախսվի 496 մլն ֆունտ ստեռլինգ: 2012-ի ամառային օլիմպիական խաղերը կանցկացվեն հուլիսի 27-ից օգոստոսի 12-ը:

ԹԵՆԻՍ

Պատանի հայ թենիսիստները մեծ նվաճման հասան

Բաթումում անցկացված Աջարիայի թենիսի բաց առաջնությունում բավական հաջող մրցելույթներ են ունեցել Հայաստանի պատանի թենիսիստները՝ նվաճելով 4 ոսկե եւ 2 արծաթե մեդալ:

Մինչեւ 16 տարեկանների մրցաշարում գերազանց է հանդես եկել Սեդրակ Խաչատրյանը, որը հաղթելով բոլոր մրցակիցներին, արժանացել է ոսկե մեդալի: Տարիքային իրենց խմբերում ուժեղագույններ ճանաչվեցին նաեւ Միքայել Ավետիսյանը (մինչեւ 12 տարեկաններ), Մուշեղ Մանվելյանը (մինչեւ 10 տ.) եւ Տաթեւիկ Հովհաննիսյանը (մինչեւ 8 տ.): Իսկ Աննա Սարգսյանը եւ Պատրիկ Երանյանը մինչեւ 12 տարեկանների մրցաշարում արժանացել են արծաթե մեդալների:

Այս մրցաշարին Հայաստանը ներկայացրել են «Մասթերզ կլաս», «Արարատ» եւ Երեւանի Ֆիզիկայի ինստիտուտի մարզական ակումբի թենիսիստները: Հայաստանի պատանի թենիսիստները հրավերներ են ստացել մասնակցելու Վրաստանում եւ այլ երկրներում կայանալիք մրցումներին:

Կիսաեզրափակիչի մասնակիցները հայտնի են

Ռուսաստանցի թենիսիստուհիներ Մարիա Շարապովան ու Աննա Չակվետաձեն Մադրիդում ընթացող մրցաշարի կիսաեզրափակիչ փուլ մտան: Շարապովան «Կարմիր» խմբում իր 2-րդ հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով Սվետլանա Կուզնեցովայի նկատմամբ (5-7, 6-2, 6-2): Այս խմբում Շարապովան ու Իվանովիչը 2-ական միավոր են վաստակել եւ ապահովել են իրենց հետագա մասնակցությունը:

«Դեղին» խմբում Սերենա Ուիլյամսը վնասվածքի պատճառով այդպես էլ չկարողացավ շարունակել ելույթները: Նրան փոխարինած Ֆրանսուհի Մարիոն Բարտոլին պարզապես ջախջախիչ պարտություն կրեց Ժյուստին Էնենից (0-6, 0-6): Վերջինս 3 միավորով գլխավորում է մրցաշարային աղյուսակը եւ կշարունակի պայքարը գլխավոր մրցանակի համար: Աննա Չակվետաձեն էլ կպայքարի գլխավոր մրցանակի համար: Նա երկրորդ հաղթանակը տոնեց՝ պարտության մատնելով Ելենա Յանկովիչին (6-4, 0-6, 6-3):

Լեւ Յաշինին նվիրված ֆուտբոլային մրցաշար

Երկրորդ անգամ անընդմեջ Լեւ Յաշինին նվիրված ամենամյա չորրորդ միջբոտական մինի-ֆուտբոլի մրցաշարի հաղթող ճանաչվեց Սլավոնական համալսարանի ուսանողական թիմը, որը 7-1 հաշվով եզրափակիչում հաղթեց Ազգային պետական համալսարանի տղաներին: Մրցաշարի կազմակերպիչն էր «Սլավոնական տուն» հասարակական կազմակերպությունը արտասահմանյան թղթակիցների ասոցիացիայի աջակցությամբ եւ Հայաստանում Ռուսաստանի դեսպանատան ֆինանսական օգնությամբ:

Մրցումները, որոնք կազմակերպվել էին խուլիամերերի սպորտի եւ մշակույթի պալատի մարզադահլիճում, անցան մեկ օրում, գավաթային մրցակարգով՝ 8 բոտերի թիմերի մասնակցությամբ (բացի վերը նշվածից՝ Երեւանի կոնսերվատորիայի, Տնտեսագիտական համալսարանի, ԵՊՀ-ի, Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի, Տուրիզմի ինստիտուտի, Բժշկական համալսարանի): Նրանք վիճակահանությամբ բաժանվել էին 4 զույգի:

Իսկ մինչ այդ, բացման արարողության ժամանակ ելույթ ունեցան «Ռուսական երգ» փառատոնի դափնեկիրները, մասնակիցներին ողջունեցին «Սլավոնական տուն» ՀԿ-ի ղեկավար Նոննա Գուսովան եւ ՀՀ-ում ՌԴ-ի փոխխորհրդատու Անդրեյ Պոնոմարյովը, որն էլ հաղթող թիմին հանձնեց գավաթը, ինչպես նաեւ պարգեւատրեց 5 առավել աչքի ընկած խաղացողներին, լավագույն դարպասապահին, խաղացողին, ռմբարկուին, թիմի ղեկավարին եւ ամենագեղեցիկ գոլի հեղինակին: Ինչպես նշեց Ն. Գուսովան, այս ավանդական դարձած մրցաշարը, որն անցկացվում է 2003-ից, նպաստում է տարբեր բոտերի երիտասարդների մտերմությանը, ծանոթացնում է նրանց Ռուսաստանի մշակույթին, եւ սպորտի այնպիսի վառ ներկայացուցիչների հետ, ինչպիսին էր լեգենդար դարպասապահ Լեւ Յաշինը: Մրցաշարին ներկա էր նաեւ սպորտի վետերան, Հայաստանի վաստակավոր մարզիչ Սեմյոն Իսրայելյանը, որն անձամբ ճանաչում էր աշխարհահռչակ ռուս դարպասապահին:

ԻԼՈՆԱ ՔԱՄԱԼՅԱՆ

Թոփմյոլերը փախավ հեղափոխությունից

Ֆուտբոլի Վրաստանի հավաքականի գլխավոր մարզիչ, գերմանացի մասնագետ Կլաուս Թոփմյոլերը հրաժարական է տվել: Նա մտադիր է աշխատանքի անցնել «Կայզերսլաուտեռնում» որպես մարզական տնօրեն: Դժվար է ասել, թե ինչպիսի նկատառումներից ելնելով է նա հրաժարական տվել, սակայն կարելի է ենթադրել, որ պատճառներից մեկը ներկայում Վրաստանում տիրող քաղաքական լարված իրավիճակն է:

Առայժմ հայտնի չէ, թե ով կփոխարինի Թոփմյոլերին: Հայտնի է դարձել, որ Պորտուգալիայի իշխանությունները խորհուրդ են տվել երկրի ռեգբիի հավաքականին չմեկնել Վրաստան, որտեղ վերջինս պետք է մրցի տեղի ունեցող հետ:

Հեմիլտոնն արժանացավ մրցանակի

Ընթացիկ մրցաշրջանում տպավորիչ նվաճումների համար «Մակլարենի» ավտոմրցարշավորդ Լյուիս Հեմիլտոնն արժանացել է «Ոսկե ղեկ» մրցանակի: Այն յուրաքանչյուր տարի հանձնում է գերմանական «Bild am Sonntag» թերթը: Բրիտանացի մարզիկին մրցանակը հանձնել է «Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի աշխարհի կրկնակի չեմպիոն Միկի Հակինենը, որը վերջերս է ավարտել ելույթները: «Ինձ համար մեծ պատիվ է այս մրցանակը ստանալը: «Մակլարենը» հիանալի թիմ է, թեեւ այս տարի չհաջողվեց նվաճել չեմպիոնի տիտղոսը, սակայն մրցաշրջանն արդարացրեց սպասելիքները», հայտարարել է Հեմիլտոնը:

Միխայ Ստոյկիցան կմարզի «Արիսը»

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի նախկին գլխավոր մարզիչ Միխայ Ստոյկիցան մեկամյա պայմանագիր է կնքել Կիպրոսի «Արիսի» հետ: Պայմանագիրն ուժի մեջ կմտնի ընթացիկ մրցաշրջանի ավարտից հետո: 52-ամյա ռումինացի մարզիչը բացի Հայաստանի հավաքականից, մարզել է նաեւ Պանամայի եւ Քուվեյթի ընտրանիները, ինչպես նաեւ մի շարք թիմեր:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ Օրվա հետքերով

«Հարավային Կովկասում սուրը միշտ պայծառում էր, պայծառում էլ պետք է մնա»

1-ին էջից

Նոյեմբերի 8-ին «Վաքան» թերթը Թուրքիայի նախագահի այցը լուսաբանել է «Գյուլից համագործակցության պայմանական կոչ Հայաստանին», «Բուգյունը»՝ «Նախազգուշացում Հայաստանին», «Միլիեթը»՝ «Գյուլի կոչը Հայաստանին», «Թյուրիեն»՝ «Կզդջալ», «Թերջումանը»՝ «Պետք է հրաժարվեմ այս սպից», իսկ «Ռադիկալ»՝ «Գյուլը Երևանին հրավիրում է «Թող ցեղասպանության քարոզչությունը» ուղերձը» վերնագրով:

Վերնագրերից ակնհայտ է դառնում, որ վերոհիշյալ թերթերի համար ևս կարևորը ոչ այնքան Աբդուլլահ Գյուլի Ադրբեջան կատարած այցի արդյունքներն են, որքան նրա ելույթի Հայաստանին վերաբերող հատվածները, որոնցում նա հայ-թուրքական հարաբերությունների չկարգավորվածությունը պայմանավորում էր Թուրքիայի նկատմամբ Հայաստանի իբր թշնամական վերաբերմունքով, մտացածին այս թշնամանքը պատճառաբանում էր Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը հեռանուս լինելու հայկական իշխանությունների դիրքորոշումով եւ Ադրբեջանի տարածքների գրավումով:

Միլի մեջլիսում Գյուլի ելույթի Հայաստանին վերաբերող հատվածը թարգմանաբար ներկայացրել էինք նախավերջին համարում: Որքան էլ ելույթը ոգեշնչի «Թերջումանի», «Թյուրիեի» պես ազգայնամոլ թերթերին, նույն օրը Բաֆվում Թուրքիայի դեսպանատանն Աբդուլլահ Գյուլը թուրք եւ ադրբեջանցի լրագրողներին ասել է. «Հայաստանի նկատմամբ թշնամական զգացմունքներ չենք տածում, ոչ էլ գոհ ենք առկա իրավիճակից: Ուզում ենք բարիդրացիական հարաբերություններ հաստատել մեր հարեւանների հետ, միաժամանակ ցանկանում ենք, որ նրանք եւս բարեկեցիկ կյանք վարեն: Սակայն կան իրողություններ, որոնք չի կարելի աչքաթող անել: Այդ իսկ պատճառով իմ կոչը սոսկ Հայաստանին ուղղված չէ, ամերիկացիները, Մինսկի խմբի մյուս համանախագահները նույնպես պարտավորություններ ունեն»:

Այլ կերպ, Գյուլը բարդելով հանդերձ հայ-թուրքական հարաբերությունների ներկա վիճակի պատասխանատվությունը հայկական կողմի վրա, այնուամենայնիվ, ընդգծել է Հայաստանի հետ առկա խնդիրների կարգավորման անհրաժեշտությունը: Ի դեպ, Գյուլը եղել է նաեւ Գանձակում: Այնտեղ նրան նվիրել են Շամիլի սուրը, երբ վերջինս պայքարից հանել է դա, լրագրողներն իսկույն արձագանքել են, թե սուրը քաշեցիք: Նա պատասխանել է. «Մեր սուրը մշտապես պայծառում է մնում»: Երբ լրագրողները հարցրել են. «Նույնիսկ Կովկասո՞ւմ», Գյուլն ասել է. «Կովկասում սուրը միշտ պայծառում պետք է մնա»:

Թուրքիայի նախագահի Գանձակ այցի ընթացքում խաղաքում փակվել են բոլոր խանութները, բնակիչներին արգելվել է դուրս գալ տներից, ինչին զարմանքով է արձագանքել Գյուլը. «Ըստ երեւույթին խորհրդային շրջանի սովորություններից է: Ասում են, որ խաղաք Ալիեւի այցելության ժամանակ էլ այսպես են վարվում: Սակայն իմ նկատմամբ հետաքրքրությունը մեծ էր»:

Նոյեմբերի 8-ին նախագահ Գյուլը վերադարձել է Անկարա եւ օդանավակայանում հեռեւյալ կերպ է գնահատել Ադրբեջան կատարած այցը. «Հանդիպումներում նշեցի, որ մեր երկիրը կարեւոր նշանակություն է տալիս Հարավային Կովկասում խաղաղության, կայունության, բարեկեցության եւ համագործակցության հաստատմանը: Ընդգծեցի, որ այս ամենի շրջանակներում Թուրքիան շարունակելու է գործադրել Լեռնային Ղարաբաղի հակամարտության Ադրբեջանի տարածքային ամբողջականության հիմքի վրա խաղաղ ճանապարհով լուծման համար անհրաժեշտ բոլոր ջանքերը»:

Հ. ՉԱՔԲԱՆ

Fund for Armenian Relief of America (FAR)

TITLE: Finance Specialist
TERM: Full-time
DURATION: Permanent
LOCATION: Yerevan, RA

BRIEF DESCRIPTION OF THE ORGANISATION: Headquartered in New York City, FAR is non-profit benevolent organization providing both short-term and long-term emergency relief programs for the economic growth and social development of Armenia.

JOB RESPONSIBILITIES: Under the supervision of the FAR Country Director, the incumbent performs the following duties:

- Record and process financial transactions including bank transactions and reconciliation of bank statements with the accounting records;
- Maintain all financial documentation related to administrative and project functions and keep all accounting files updated;
- Prepare monthly financial reports to Country Director, Donor Organizations and NY Headquarter;
- Handle cash operations, control proper utilization of the petty cash account, including cash withdrawals and cash payments;
- Provide cash activity reports on monthly basis;
- Prepare and develop budget and analyze variances reports, ensure that budget adjustments are made in accordance with program needs;
- Checking payroll calculations and employees other payments
- Maintain regular contacts with relevant FAR Branch Offices, local authorities and Implementing parties to support and facilitate daily functions of the office;
- Provide guidance and expert advice to management on all technical procedures of financial and HR-related matters, prepare service contracts
- Administer procurement procedures including preparation of procurement contracts and examining presented procurement requests;
- Prepare and provide accounting information upon Finance Managers request and other duties assigned by the immediate supervisor.

QUALIFICATIONS:

- University degree preferably in finance and economics;
- At least five years of related experience, preferably at international organizations,
- Basic knowledge of general accounting principles;
- Basic knowledge in computer based accounting programmes and other office management software;
- Excellent knowledge of Armenian, English, Russian.

APPLICATION PROCEDURES:

A complete application form should consist of:

- A letter of motivation (in English)
- Detailed CV

Applications can be submitted via e-mail: cv@far.am

Please clearly mention in the subject line of the e-mail message the position title you are applying for, otherwise an application will be ignored!

ABOUT COMPANY: For more information on FAR activity please visit URL: www.far.am

ADDITIONAL NOTES: Only short listed applicants will be contacted. No phone calls, please.

OPENING DATE: November 10, 2007
APPLICATION DEADLINE: November 20, 2007

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ԳՀԱՊՁԲ-07/78» ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **«ՀՀ Գյուղատնտեսության նախարարության կարիքների համար հակահամաճարակային միջոցառումների համար դեղամիջոցների ձեռքբերման» գնման պայմանագիր կնքելու նպատակով:** Գնանշման հարցման հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 700 ՀՀ դրամ փոխանցել «Արբինինվեստբանկ», Հ/Հ 247230066158 «Բեջ-Գալ» ՍՊԸ -ի հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Հ.Այունցին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ գնանշման հարցման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը, ժամը 15:30:

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ԳՀԱՊՁԲ-07/79» ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **ՀՀ ոստիկանության կարիքների համար մահճակալների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 650 ՀՀ դրամ փոխանցել «Արբինինվեստբանկ» «Բեջ-Գալ» ՍՊԸ -ի 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, Ի.Քոչարյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 15.00-ը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ՄԲԱՊՁԲ-07/54» ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ ԱՆ դասական ակտերի հարկադիր կատարման ծառայության կարիքների համար ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 750 ՀՀ դրամ փոխանցել «Արբինինվեստբանկ» «Բեջ-գալ» ՍՊԸ-ի N 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, Կ. Դրամբյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 16.00-ն:

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ՄԲԱՇՁԲ-07/314 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար ՀՀ Արմավիրի Գայի գյուղական համայնքում ինքնաշատրվանող խորքային հորի կառուցման աշխատանքների իրականացման նպատակով:**

Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 1000 ՀՀ դրամ փոխանցել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի N 1150000088680300 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-27, հանձնաժողովի քարտուղար Ս. Գեւորգյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 16.00-ն:

Фонд Бориса Ельцина, "Институт Евразийских Исследований" и "Кавказский Институт Демократии" объявляют о начале конкурса "Русская премия" 2007 года

"Русская премия" ежегодно присуждается авторам литературных произведений на русском языке, проживающим в странах СНГ (кроме России) и Прибалтики.

В 2007 г. на конкурс принимаются:

В номинации "крупная проза" - повести и романы (объемом 7 и более авторских листов);

В номинации "малая проза" - повести и сборники рассказов (объемом от 2 до 7 авторских листов);

В номинации "поэзия" - поэтические сборники (объемом от 2 до 4 авторских листов).

К конкурсной работе должны прилагаться краткая биография автора и контактная информация: почтовый индекс, адрес, электронный адрес (при наличии такового), контактный телефон, факс.

Победитель в каждой номинации получает премию в размере $3 000 и право заключить с учредителями договор на издание своих произведений.

К рассмотрению принимаются тексты, изданные или опубликованные в бумажных или электронных средствах массовых коммуникаций в течение 2006-2007 гг., а также рукописи.

Срок подачи произведений на конкурс - с 17 сентября до 17 декабря 2007 года.

Оргкомитет в Москве: +7 (495) 699-92-33, 699-22-13, +7 (915) 367-57-17, info@russpremia.ru

Նիդեռլանդների բանկի նախագահ Նուք Վելլինկի այցը Հայաստան

Նոյեմբերի 11-ին պաշտոնական այցով Հայաստան է ժամանելու Նիդեռլանդների բանկի նախագահ Նուք Վելլինկը:

Այցի ժամանակ Նիդեռլանդների բանկի նախագահը հանդիպելու է ՀՀ նախագահի, վարչապետի, կենտրոնական բանկի նախագահի հետ:

Նուք Վելլինկը կմասնակցի ԿԲ-ում «Հայաստանը որպես Անդրկովկասյան տարածաշրջանի ֆինանսական կենտրոն» թեմայով կազմակերպվող կլոր սեղանին:

Այցի արդյունքները կամփոփվեն նոյեմբերի 13-ին կայանալիք մամուլի ասուլիսում:

ԿԲ մամուլի ծառայություն

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ քաղաքացիական օդանավագնացության կոմիտեի կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ քաղաքացիական օդանավագնացության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն հրամանների պահանջների համաձայն, մեկնարկում է ՀՀ Արարատի մարզի Հովտաշատ համայնքում հորդի սեփականատեր Մինթար Մելքոնյանի եւ Արփենիկ Մելքոնյանի՝ ծնողական նպատակով, համապատասխանաբար յուրաքանչյուրին սեփական քաղաքացիական օդանավակայանից 42,0 կմ/կվ քաղաքի քաղաքացիական թռիչքների նախագծի:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ նախագծի նախնական արտերկրին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ քաղաքացիական օդանավագնացության կառավարման գործակալություն (հասցե՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակությունից կողմից փաստաթղթի նախնական արտերկրի լսումը տեղի կունենա 2007 թ. նոյեմբերի 15-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ քաղաքացիական օդանավագնացության կառավարման գործակալություն

Հայտարարություն

Նոյեմբերի 16-ին, ժամը 14-ին **ՀՀ բնապահպանության նախարարությունը, Գեղարքունիքի մարզի Լիճի գյուղապետարանը, «Նոր Բազրեւանդ» ՍՊԸ** կազմակերպում են հասարակական լսումներ Գեղարքունիքի մարզի Լիճ համայնքում գտնվող գազալցակայանի կայանի վերակառուցման օրվա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ Երեւան, Կոմիտասի 29 հասցեում:

Հայտարարություն

Նոյեմբերի 14-ին, ժամը 14-ին **ՀՀ բնապահպանության նախարարությունը, «Արխմոնստրոյ» ՍՊԸ** կազմակերպում են հասարակական լսումներ Երեւան Ֆուչիկի 27 հասցեում գտնվող բետոնի մշակման գործարանի օրվա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ Երեւան, Կոմիտասի 29 հասցեում:

ՕՐՎԱՅԴԻ ՀԱՄԱՐ ՅԱՆԳԱՄԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Ասեսիբեան: Տիրաժը՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 9.11.2007, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: